



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ
ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏ



МХИТАР АЙРИВАНЕЦИ
ДУХОВНЫЕ ПЕСНИ

Подготовка текста,
предисловие и комментарии
ЭЛЕОНОРЫ АРУТЮНЯН

МКНІТАР АУРІВАНЕЦІ
SACRED CHANTS

Text, Preface and Commentaries
by ELEONORA HARUTYUNYAN

ЕРЕВАН, "НАИРИ", 2005

YEREVAN, "NAIRI", 2005

ՄԽԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑԻ

ԳԱՆՁԵՐ ԵՎ ՏԱՂԵՐ

Աշխատասիրությամբ
ԷԼԵՈՆՈՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ԵՐԵՎԱՆ, «ՆԱԻՐԻ», 2005

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄԷ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Պատասխանատու խմբագիր՝
բանասիրական գիտությունների թեկնածու
Վ. Գ. ԴեվՐԻԿՅԱՆ

Մխիթար Այրիվանեցի
Մ 792 Գանձեր և տաղեր: Աշխատասիրությամբ էլեոնորա Հարությունյանի
[Պատ. խմբ.՝ Վ. Գ. Դեվրիկյան].- Եր.: Նաիրի, 256 էջ:

Գիրքն ընդգրկում է Մխիթար Այրիվանեցու գանձարանային բանաստեղծությունները (գանձեր և տաղեր)՝ գիտաբնական բնագրերով, որոնց կազմման համար օգտագործված են Մաշտոցի անվան Մատենադարանի և արտասահմանյան ձեռագրական հավաքածուների հնագույն և լավագույն ընդօրինակությունները: Աշխատությունն ունի առաջաբան և ծանոթագրություններ:

4702080102
Մ ----- 2005
705(01)2005

ԳՄԴ 84 Հ-5

ISBN 5-550-01425-4

© «Նաիրի» հրատարակչություն» ՓԲԸ, 2005

Գ Ի Բ Օ Ր Հ Ն Ո Ի Թ Յ Ա Ն

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից գոհունակ սրտով գալիս ենք ողջունելու հրատարակությունը այս մեծարժեք գրքի, որով հանրությունն են ներկայացվում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու երախտարժան մեծ վարդապետներից Մխիթար Այրիվանեցու հեղինակած գանձերը՝ նրա բազմակողմ ժառանգության մեկ կարևոր մասը:

Նշանակալից է գրքի հրատարակումը Հայոց Գրերի 1600-ամյակի տոնակատարության տարում, երբ մենք վերստին արժևորում ենք գրի ու դպրություն, հոգևոր ճանաչողության ու արժեքների դերակատարությունը մեր պատմության մեջ, այսօրվա մեր կյանքում և գալիքի մեր տեսիլքում:

Աստվածաբան, տոմարագետ, պատմիչ, մանկավարժ ու երաժիշտ Մխիթար Այրիվանեցի վարդապետը 13-րդ դարի հայ հոգևոր-մտավորական կյանքի մեծ դեմքերից ու եռանդուն գործիչներից է, ով Հայաստանի համար դժվարին ժամանակներում անդուլ ջանքեր է ներդրել՝ ուսուցանելու և փոխանցելու համար նախնայաց ժառանգությունը սերունդներին, և իր գործերով հարստացրել է մեր մշակութային անդամստանը: Բանաստեղծական բարձրաթուխ խոսքով զրված աղոթքներ են նրա գանձերը, որ կրում են ջերմ ու կենդանի կնիքը հեղինակի հավատավոր հոգու: Նվիրված լինելով եկեղեցական մեր տոներին ու մեկնաբանելով դրանց խորհուրդները՝ գանձերը արտահայտում են նաև մեր Եկեղեցու դավանանքը, ժամանակի հայ կյանքի իրադարձությունները:

Մենք հավատում ենք, որ ճանաչողություն հավելելով եկեղեցական մեր արժեքների վերաբերյալ, գիրքը միաժամանակ Մխիթար Այրիվանեցու աղոթական խոսքով մեր ժողովրդի զավակների սրտում գորացնելու է հավատը առ Աստված, սերը հայրենյաց ժառանգության հանդեպ, որոնցով ապրել ենք ու պիտի շարունակենք ապրել:

Գրքի հրատարակության առիթով Հայրապետական Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում Մատենադարանի աշխատակիցներին, ովքեր նախանձախնդրությամբ հրատարակության պատ-

րաստեցին իրենց լուսահոգի գործընկերոջ՝ էլեոնորա Հարությունյանի՝ տարիների ջանքով կազմված շնորհալի աշխատասիրուելթյունը: Մեր գնահատանքն ու օրհնուելթյունը՝ արժանավոր զավակներին էլեոնորա Հարությունյանի՝ Լևոն և Վահագն Մկրտչյաններին, ովքեր որդիական սիրով նախաձեռնեցին ու իրականացրեցին գրքի հրատարակուելթյունը:

Աղոթք ենք բարձրացնում առ Աստված լուսահոգի էլեոնորա Հարությունյանի հոգու հանգստուելթյան համար և երկնային բարիքները հայցում գրքի հրատարակուելթյան գործում բոլոր մասնակիցներին:

Աղոթում ենք, որ բարեխոսուելթյամբ երանելի մեր հայրերի՝ Բարձրյալն Աստված խաղաղուելթյուն պարգևի աշխարհին համայն, պահպանի ամենուր մեր ժողովրդին և հավատի լույսով առաջնորդի մեր կյանքի ուղին:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ և ընդ ամենեսան. ամէն:

Օրհնուելթյամբ՝



ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱՄԻՆ

2 սեպտեմբերի, 2005 թ.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայ միջնադարյան մշակուելթի ականավոր ներկայացուցիչ Մխիթար Այրիվանեցին (13-րդ դար) և նրա թողած գրական ժառանգուելթյունը երկար տարիներ եղել են Մատենադարանի ավագ գիտաշխատակից, պատմական գիտուելթյունների թեկնածու էլեոնորա Հարությունյանի ուսումնասիրուելթյան առարկան: Նրա թեկնածուական ատենախոսուելթյունը՝ «Մխիթար Այրիվանեցի. կյանքն ու գործը», որն առանձին գրքով լույս տեսավ 1985թ., լավագույնս ներկայացրեց արդյունաշատ մատենագրի բազմակողմանի գրական վաստակը: Դրանից հետո, ի թիվս այլ միջնադարյան հեղինակների և մատյանների (Ղուկաս Լոռեցի և այլք), նա ձեռնամուխ եղավ Այրիվանեցու «Գանձարանի» վերականգնմանն ու ուսումնասիրուելթյանը, քննական բնագրի պատրաստմանը: Սակայն առողջական վիճակը և այնուհետև անժամանակ մահը թույլ չտվեցին ավարտին հասցնել այն և տեսնել տպագրված: Մատենադարանի աշխատակիցներից Վարդան Դերիկյանն ամբողջացրեց այն՝ կատարելով անհրաժեշտ լրացումներ, և այժմ ընթերցողի սեղանին է դրվում Մ. Այրիվանեցու «Գանձարանը»՝ որպես մեր սիրելի գործընկերուհի էլեոնորա Հարությունյանի պայծառ հիշատակի մի հուշարձան:

Իր բոլոր իղձերով, նպատակասլաց աշխատանքով էլեոնորան կապված էր ձեռագրերի հմայիչ աշխարհի հետ:

Մատենադարանի տնօրինուելթյունը, գործընկերները երբեք չեն մոռանա նրա նվիրվածուելթյունն իր սիրած գործին, անկասելի ձգտումը՝ լույս աշխարհ բերել հայ հոգևոր մշակուելթի անհայտ մասունքները: Շնորհակալուելթյուն նրա սիրասուն որդիներին այս գրքի տպագրուելթյունն իրականացնելու համար:

Մատենադարանի տնօրեն
Ակադեմիկոս Ս. ԱՐԵՎԵՍՅԱՆ

25 օգոստոսի, 2005թ.

Սույն աշխատությունը մեր մայրիկի՝ էլեոնորա Հարությունյանի տարիների տքնաջան աշխատանքի արդյունքն է: Մեզ համար նրա կյանքն օրինակ է հայրենիքին, հայ մշակույթին, գիտությունն անմնացորդ ծառայության: Մատենադարանը միայն աշխատավայր չէր նրա համար, այլ հարազատ միջավայր, ուր նաև մենք ստացանք մեր դաստիարակությունն ու արժեքային համակարգի ձևավորումը: Ցավոք, անժամանակ հեռանալով կյանքից՝ նա չկարողացավ հրատարակված տեսնել միջնադարի հայ ականավոր մատենագիր Մխիթար Այրիվանեցու տաղերի և գանձերի ժողովածուն: Կատարելով մեր մայրիկի ցանկությունը՝ հայագիտության համար խիստ արժեքավոր այս աշխատանքի վերջնական հրատարակության նախապատրաստումը խնդրեցինք իրականացնել Մատենադարանի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Վարդան Դևրիկյանին, ում կատարած շնորհակալ աշխատանքի համար հայտնում ենք մեր երախտագիտությունը:

Այս գիրքը Մատենադարանի, նրա աշխատակիցների հանդեպ սիրո և նվիրումի արտահայտություն է:

ԼԵՎՈՆ ԵՎ ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆՆԵՐ



Փողոտալույս Ե. Փողոտալույս



ԷԼԵՆԱՍԻ ԳՆՈՒԹՅՈՒՅԱԼԸ (ԿԵՆՏՐՈՆՈՒ) ՄԱՏԵՆԱՎՈՐԱԿԱՆ ՏՆՕՐԵՆ
ՍԵՆ ԱՐԵՎԵԼԱՏՅԱՆ ԵՎ ՏԱՐԻՆԵՐԻ ԻՐ զՈՐԾԵԼՆԿԵՐՆԵՐԻ ԴԵՏ.
ՄԱՏԵՆԱՎՈՐԱԿԱՆ ՄԻՏՏԵՐ ԱՄՋԵՎ (2000թ.)

ՆԱԽԱԲԱՆ

Հայ հոգևոր բանաստեղծության մի ուրույն տեսակն են գանձերը: Նրանցով սկսվեց Հայ բանաստեղծության զարգացման նոր շրջանը, որն իր հերթին պայմանավորված էր Հայկական վերածնության և դասական միջնադարի առաջ բերած նոր աշխարհընկալմամբ և վերջինիս թելադրած գրական նոր ըմբռնումներով:

Այս ստեղծագործությունները գանձեր են անվանվում հետևյալ պատճառով: Միջնադարում ընդունված կարգով չափածո շատ գործեր վերնագրվում և բերվում էին իրենց սկզբնատողով և կամ էլ անգամ առաջին բառով, ինչպես, օրինակ, Կոմիտաս կաթողիկոսի՝ Հռիփսիմյանց նշանավոր շարականն է Հայտնի «Անձինք նուիրեալք» և կամ էլ «Անձինք», իսկ Ներսես Շնորհալու՝ Վարդանանց նվիրված շարականը՝ սկզբնատողային «Նորահրաշ պսակաւոր» անվամբ:

Միջնադարյան բանաստեղծություններում նաև ակրոստիքոսային ընդունված սկզբունքով յուրաքանչյուր տան սկզբնատողի առաջին բառերը կազմում էին մի ծայրակապ, որը հիմնականում ներկայացնում էր տվյալ ստեղծագործության հեղինակի անունը:

Ինչպես Հայտնի է, առաջին գանձերի հեղինակը Գրիգոր Նարեկացին է: Ծայրակապային ընդունված այս սկզբունքով Նարեկացու այս ստեղծագործությունների առաջին տան առաջին տողի առաջին բառը պետք է սկսվեր Գ-ով, որպեսզի հաջորդող տներով կազմվեր ԳՐԻԳՈՐ ծայրակապը: Զարմանալի հոգևոր մի խորհրդով և կամ էլ ասես կանխագգալով, որ իր ընտրած սկզբնաբառով են կնքվելու Հայ բանաստեղծության այս ժանրի ստեղծագործությունները, «Գրիգոր» ծայրակապի Գ-ի համար մեծ բանաստեղծը քանիցս իր այս գործերը սկսել է Գանձ բառով, որի համար էլ հիշյալ ժանրով գրված գործերը սկսել են անվանվել «գանձ», իսկ ըստ եկեղեցական-տոնական և ծիսական կանոնների ի մի հավաքված գանձերի ժողովածուն՝ «Գանձարան»¹:

¹ Գանձարան ժողովածուի և գանձերի մասին, որպես գրական ժանր, տես «ԳրիգորՆարեկացի, Տաղեր և գանձեր», աշխատասիրություններ Ա. Քյոչկերյանի, Երևան, 1981թ., էջ 21-51:

Շարականների նման, գանձերը ևս գրվել են եկեղեցական տոների և արարողությունների ժամանակ կատարվելու համար: Նույն այս պատճառով, ինչպես որ շարականները ավելի շատ բերված են ոչ թե ըստ հեղինակային շարքերի, այլ Շարակնոցում ցրված են եկեղեցական տարբեր տոների կանոնների ներքո, այնպես էլ գանձերը բերվում են ոչ թե այս կամ այն հեղինակի ստեղծագործությունների շարքում, այլ Գանձարաններում այն տոնի կանոնի ներքո, որին նվիրված է տվյալ գանձը: Ի տարբերություն, սակայն, շարականների և Շարակնոցի, գանձերը և Գանձարան ժողովածուն անհամեմատ քիչ են ուսումնասիրված և հրատարակված, որը բացատրվում է մի քանի պատճառներով:

Նախ, որ առաջին շարականագիրներն են եղել Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը և որպես գրական ժանր այն կապվում է մեր մատենագրության դասական շրջանի և վերջինիս նշանավոր դեմքերի հետ, ուստի և, բնականաբար, շարականները գտնվել են հետազոտողների ուշադրության կենտրոնում:

Երկրորդ՝ Գանձարան ժողովածուն, Շարակնոցի նման նախատեսված լինելով եկեղեցական տոների և ծեսերի կատարման համար, այնուամենայնիվ, բուն եկեղեցական արարողությունների մաս չկազմեց, այլ որպես առավել նոր շրջանի երևույթ, ավելի շատ մնաց որպես տվյալ տոների և ծեսերի խորհուրդը վեր հանող հոգևոր-գրական երևույթ: Ուստի, եթե «Շարակնոցը», «Ծառոցը», «Ժամագիրքը», «Պատարագամատուցը», «Նորհրդատետրը» և «Մաշտոց» ծիսարանը, ունենալով եկեղեցական կիրառություն, քանիցս հրատարակվել և վերահրատարակվել են, և նույն ծիսական առումով ճիշտ կատարվելու համար ենթարկվել համապատասխան եկեղեցագրատական քննության, ապա Գանձարանները քանի որ եկեղեցածիսական կանոնական այս ժողովածուների շարքում չեն եղել, ուստի և նրանց հրատարակության եկեղեցակիրառական անհրաժեշտությունը չի եղել:

Նույն այս հանգամանքն անհամեմատ դժվարացրել է գանձերի և Գանձարանների ուսումնասիրությունը հետևյալ պատճառով. վերը նշված եկեղեցածիսական ժողովածուների միջև առկա տարբերությունները պայմանավորված են եղել Տոնացույցի և ծեսերի՝ Գրքերի ընթացքում կատարված փոփոխություններով և որոշ չափով էլ՝ ձեռագրերի ընդօրինակությունների ժամանակ առաջ եկող գրչագրական տարրնթերցվածներով, ուստի կանոնական նման ժողովածուները որոշակի դասակարգման և խմբավորման են ենթարկվում: Այսինքն՝ կանոնական ժողովածուներում փոփոխությունները պայմանավորված են կանոնի փոփոխությամբ: Վիճակը, սակայն, միանգամայն այլ է գանձերի և Գանձարանի պարագայում:

Չունենալով վերոնշյալ ժողովածուների կանոնացվածությունը՝ նրանց փոփոխությունները պայմանավորված են եղել ոչ միայն եկեղեցական կանոնի, այլև ժամանակի գրական ըմբռնումների փոփոխությամբ:

Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ ոչ միայն շարականներն էին կանոնացված ստեղծագործություններ, այլև նրանց հեղինակներն էին նվիրագործված անուններ մեր եկեղեցական կյանքում և մատենագրությունում, ուստի շարականների ընդօրինակության ժամանակ գրիչներն իրենց չէին կարող թույլ տալ ցուցաբերել այնպիսի ազատություն, ինչպիսին գանձերի պարագայում էր: Այսինքն՝ եթե շարականների դեպքում գործում էր հոգևոր-գրական եկեղեցական կանոնացված ավանդույթը, ապա գանձերն ընդօրինակելիս գրիչները դրանք հարաբերում էին իրենց ապրած ժամանակի, եկեղեցական խնդիրների և ազգային ակնկալիքների հետ՝ կատարելով համապատասխան փոփոխություններ և հավելումներ: Ընդօրինակությունից ընդօրինակություն կատարվող այս փոփոխություններն էլ անհամեմատ դժվարացնում և խճողում են գանձերի բուն բնագրի վերականգնումը, ինչպես և՛ այդ բնագրերի քննությունը:

Հատկանշական է, որ հայկական տպագրության սկզբնավորումից ի վեր հրատարակվել ու արժևորվել են գլխավորաբար Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու գանձերը: Այս հանգամանքը առաջին հերթին պայմանավորված է այս հեղինակների ունեցած հոշակով: Միաժամանակ նրանք ներկայացնում են հայ գանձագրության առաջին շրջանը, և նրանց անվան հետ է կապվում և Գանձարան ժողովածուի սկզբնավորումն ու ձևավորումը: Հայ գանձագրության առաջին այս շրջանի համակողմանի քննությունը Նարեկացու և Շնորհալու տաղերի ու գանձերի գիտաքննական բնագրերի հրատարակությամբ 1980-ական թթ. իրականացրեց Մատենադարանի աշխատակից Արմինե Քյոչկերյանը²: Գանձարան ժողովածուի և գանձերի՝ որպես գրական ժանր, զարգացման երկրորդ փուլը կապվում է Գևորգ Սկևռացու և Հատկապես Մխիթար Այրիվանեցու անվան հետ:

Գարեգին Հովսեփյանը, արժևորելով Մխիթար Այրիվանեցու գրական ժառանգությունը և ցավ հայտնելով գանձերի ոչ միայն ուսումնասիրված, այլև անգամ հրատարակված չլինելու համար, գրում է. «Գանձերը, տարաբախտաբար, մինչև այժմ անուշադրության են մատնված, թեև նրանց ուսումնասիրությունը կօգնե և մեր միջնադարյան բանաստեղծության հասկացողությանը: Նրանք կարևոր դեր են կատարել մեր անցյալում»

² Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, աշխատասիրությամբ Ա. Քյոչկերյանի, Երևան, 1981: Ներսես Շնորհալի, Տաղեր և գանձեր, աշխատասիրությամբ Ա. Քյոչկերյանի, Երևան, 1987:

կապված լինելով տերունական և սրբոց տոների և եկեղեցական արարողությունների հետ»³:

Այրիվանեցու գանձերի կարևորությունն ու դրանց ուսումնասիրման անբավարար վիճակին է անդրադարձել և Նիկողայոս Թահմիզյանը՝ գրելով. «Հայ երաժշտության պատմության մեջ Մխիթար Այրիվանեցուն վաղուց արժանի տեղ հատկացված պետք է լիներ՝ առնվազն որպես XIII դարի երկրորդ կեսում ծաղկած երևելի գանձասացի: Դրան խոչընդոտել է, սակայն, ոչ միայն մեր միջնադարյան երաժշտական նշանագրության ուսումնասիրվածություն անբավարար վիճակը: Այրիվանեցու գանձերն առ այսօր զուտ գրականագիտական առումով իսկ քննված, մեկտեղված ու հրատարակված չեն տակավին»⁴:

Այս աշխատանքը կատարելը վիճակված էր Մատենադարանի գիտաշխատողներից լուսահոգի էլեոնորա Հարությունյանին (1936-2002 թթ.):

Մատենադարանում հայ միջնադարյան մատենագրության թեմատիկ ուսումնասիրության և բնագրերի հրատարակության իրականացվող աշխատանքների շրջանակում Այրիվանեցու գանձերի և տաղերի քննական բնագրերի հրատարակությանը է. Հարությունյանի ձեռնամուխ լինելը պայմանավորված էր նրա պատմագիտական հմտությամբ և բանասիրական նախասիրություններով, որոնց զուգակցմամբ է գրված և «Մխիթար Այրիվանեցի» (Երևան, 1985) մենագրությունը, ուր Այրիվանեցու գործունեությունը ներկայացված է 13-րդ դարի եկեղեցաքաղաքական կյանքի ընդհանուր համապատկերում, իսկ մատենագրական ժառանգությունը համակողմանի բանասիրական քննության է ենթարկված: Նույնը վերաբերվում է և Ղուկաս Լոռեցուն (1490-1551թթ.) նվիրված ուսումնասիրությանը, ուր եկեղեցական նշանավոր այս գործիչը մեզ է ներկայանում թե՛ մատենագրական իր վաստակով և թե՛ ժամանակի քաղաքական կյանքի հորձանուտում խաղացած իր դերով:

Պատմա-բանասիրական այս մոտեցմամբ նա ձեռնամուխ եղավ նաև Այրիվանեցու գանձերի և Ղուկաս Լոռեցու քարոզների քննական բնագրերի կազմությանը և հրատարակությանը:

Այրիվանեցու գանձերը հիմնականում գտնվում են Գանձարան ժողովածուներում, իսկ վերջիններիս ընդօրինակությունները միայն Երևանի Մատենադարանում հասնում են մոտ 250-ի:

Նաև ինչպես ասացինք, Գանձարան ժողովածուներն ինչ-որ տեղ կրում են դրանք ընդօրինակող գրիչների անհատականության որոշակի կնիքը: Ծնորհիվ այս հանգամանքի, մի շարք գանձերում տարբեր տասնամյակներում և անգամ դարերում կատարված հավելումները և փոփոխությունները դառնում են տարբեր ժամանակային շերտերի արտացոլումը միևնույն ստեղծագործություններում:

Բնագրային տարբերություններով ալիքավոր գանձարանային այս ծովում քննական բնագրի կազմության մի քանի սկզբունքներ կարելի է ընտրել: Պատմական և բանասիրական համադրական քննությանը է. Հարությունյանը ընտրել է Այրիվանեցու գանձերի կազմման ամենադժվարին միջոցը և ճանապարհը՝ սկզբնական բուն բնագրի վերականգնմանը զուգընթաց ցույց տալ այդ գանձերի պատմական զարգացումը հաջորդող շրջանի Գանձարաններում մինչև 18-րդ դարը, որն արտացոլվել է տեղական այդ ժամանակաշրջանում կատարված ընդօրինակությունների տարբերությամբ և հավելումներով:

Այս գանձերի նման մոտեցմամբ հրատարակությունը առավել ցայտուն կերպով է ցույց տալիս, որ Այրիվանեցին կապող օղակ է եղել իրեն նախորդող և հաջորդող շրջանների բանաստեղծության միջև՝ հայ միջնադարյան գանձերին հաղորդելով առավել շեշտված ազգային դրոշմ և շունչ՝ ազգային-եկեղեցական մի շարք կարևորագույն խնդիրների արձարձման հարցում կանխելով Ստեփանոս Օրբելյանին և Խաչատուր Կեչառեցուն:

Այսպես, Այրիվանեցու տան հոգևոր առաջնորդ և պատմիչ Ստեփանոս Օրբելյանը, 13-րդ դարի վերջին արտահայտելով հայության իղձը՝ Հայոց թագավորական գահը՝ Վաղարշապատում և Հայոց Հայրապետական Աթոռը՝ Միածնաէջ իր սրբավայրում վերահաստատված տեսնել, գրում էր.

Կանգնե՛ք զաթոռ թագաւորին

Եւ զգաւազան պատրիարքին...⁵

Նույն այս միտքը, մինչև Օրբելյանի նշանավոր Ողբը, Այրիվանեցին այսպես է արտահայտել.

Աթոռք հաստատի, Տեառն և արքայի, ի Վաղարշապատի:

Այրիվանեցու գանձերի՝ մեր գրականության պատմության և պատմա-եկեղեցական մի շարք հարցերի լուսաբանման գործում ունեցած կարևորու-

³ Գարեգին արքեպ. Հովսեփյան, Մխիթար Այրիվանեցի, Նորագույն արձանագրություն և երկեր, Երուսաղէմ, 1931, էջ 3:

⁴ Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին և Հայ երաժշտությունը V-XV դդ., Երևան, 1978, էջ 297:

⁵ Տե՛ս Սուրբ էջմիածինը Հայ մատենագրության մեջ, կազմեցին՝ Զ. Քյոսեյան, Վ. Դևրիկյան, Ս. Էջմիածին, 2003, էջ 129:

թյան գիտակցմամբ՝ էլեռնորա Հարուժյունյանը աշխատում էր օր առաջ ավարտել և հրատարակության ներկայացնել այս աշխատանքը՝ ասես փորձելով հիվանդությունից առաջ ընկնել և կյանքի սպառվող ժամանակից րոպեներ շահել գործն ավարտելու համար:

Իր կյանքի այս վերջին ամիսներին նա ձեռագրերը նայում էր Մատենադարանի մեր աշխատասենյակում և չնայած օրեցօր աճող հոգնությանը՝ դժվարությամբ և ասես չուզենալով էր օրվա վերջում փակում բացված ձեռագրերը, որովհետև այն մտավախությունն ուներ, որ անցնող օրը կարող է և իր կյանքի մատենադարանյան վերջին օրը լինել, և իր իսկ խոստովանությամբ՝ ամեն օր տուն գնալիս հրաժեշտ էր տալիս Մատենադարանին:

Այրիվանեցու 26 գանձերը և տաղերը տուն առ տուն գրել էր 200 առանձին մեծադիր թերթերից ամեն մեկի վրա, վերևում համարակալել 10-12 տող կազմող բոլոր այդ տները, իսկ ներքևում, մնացյալ ողջ էջով մեկ, բերված էին այս 10-12 տողերի բնագրային տարընթերցվածները՝ ըստ համեմատվող համապատասխան ձեռագրերի: Այս տարընթերցվածները խնամքով նշելիս աշխատում էր չսխալվել, իսկ հակառակ դեպքում, երբ հարկ էր լինում ջնջել և նորից գրել, ծանր ապրումներ էր ունենում: Մի անգամ անզգուշություն ունեցա հարցնելու, թե ինչո՞ւ է այդպես մտահոգվում: Դառը ժպտալով ասաց, որ վախենում է չհասցնի նորից մաքրագրել և որ ուղղումները կարող են սխալ կարդացվել և բնագրային տարընթերցվածները ոչ ճիշտ ներկայացնելու պատճառ դառնալ, այնինչ ինքը այդքան խնամքով իրար հետ է համեմատում Այրիվանեցու գանձերի տարբեր ընդօրինակությունները:

Ահա այսպես, այս ամիսների ընթացքում թեև բարձրաձայն չասելով, սակայն ներքին լուռ մի համաձայնությամբ և փոխադարձ պայմանավորվածությամբ՝ բարոյական հանձնառություն ստանձնեցի այս գործը հրատարակությունից առաջ մի վերջին անգամ նայել սկզբից մինչև վերջ՝ թե՛ բուն բնագիրը՝ ըստ հիմք ընտրված ձեռագրի, և թե՛ մյուս ընդօրինակությունների տարընթերցվածները:

Ցանկանալով վերականգնել Այրիվանեցու գանձերի հնարավորինս անխաթար բնագիրը, որը գերծ լինել հետագո՞ւ շրջանի խմբագրումներից՝ է. Հարուժյունյանին հատկապես հետաքրքրում էր, թե ինչպես են այս գանձերը ներկայացված Վենետիկի Մխիթարյանների մոտ պահվող 14-15-րդ դարերի ձեռագրերում: Լինելով Վենետիկում՝ բարեբախտաբար, կարողացա կատարել նրա այս ցանկությունը ևս և իր կազմած բնագրերը համեմատել Վենետիկի Մխիթարյանների Մատենադարանի վեց հին Գանձարանների հետ, որի համար շնորհակալություն եմ հայտնում Մխիթարյան միաբանու-

թյան ընդհանուր արբահայր Հ. Եղիա Քիլադայանին և Վենետիկի Մխիթարյան միաբանության Մատենադարանի պատասխանատու Հ. Վրթանես Ուլոհոջյանին, ովքեր սիրահո՞ծար օգնեցին այս ձեռագրերի համեմատության հետ կապված բոլոր հարցերում:

Այս ձեռագրերի համեմատությունը Այրիվանեցու գանձերի արդեն կազմված բնագրի հետ ցույց տվեց, թե որքան ճիշտ էր է. Հարուժյունյանը Գանձարանների իր ընտրության և դասակարգման հարցում: Երևանի Մատենադարանի և Վենետիկի Մխիթարյանների այս ձեռագրերը թե ինչ հարաբերակցության մեջ են գտնվում իրար հետ, երևում է բնագրային տարընթերցվածներից:

Է. Հարուժյունյանը, հասցնելով կազմել այս գանձերի բնագրերը և ծանոթագրությունները, դժբախտաբար, չհասցրեց գրել բնագրային նման հրատարակությունների համար ընդունված առաջաբան, ուստի այստեղ հարմար նկատեցինք գետեղել նրա «Մխիթար Այրիվանեցի» մենագրության՝ Այրիվանեցու «Գանձարանին» նվիրված բաժինը, ուր համակողմանիորեն ներկայացված և ըստ խմբագրությունների դասակարգված են թե՛ Գանձարան ժողովածուները և թե՛ համապատասխան վերլուծության են ենթարկված միջնադարյան այս նշանավոր մատենագրի գանձերը:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

**ՄԽԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ**

Մխիթար Այրիվանեցու գրական ժառանգության մեջ Հատուկ տեղ են գրավում նրա բանաստեղծությունները, որոնք, հիմնականում, գանձեր ու տաղեր են՝ բոլորն էլ Հորինված եկեղեցական ձևերով և ծիսական նպատակների համար: Դրանք արժանի են Հատուկ ուսումնասիրության թե՛ իրենց պատմագրական, գեղարվեստական արժանիքներով և թե՛ մեր միջնադարյան գրականության զարգացման գործում խաղացած դերով: Այդ ստեղծագործություններն ուշագրավ են ոչ միայն առանձին միավորներով, այլև այն ամբողջությամբ, որով ժամանակին ներկայացվել են որպես ուրույն Գանձարան և խոշոր դեր խաղացել Գանձարան-ժողովածուների ստեղծման և զարգացման գործում: Քանի որ Մխիթար Այրիվանեցու ինքնագրերը և նրանցից կատարված անմիջական ընդօրինակությունները չեն պահպանվել, իսկ Հետագայի ընդօրինակությունների մեջ էլ կորել է հեղինակային դասակարգման պատկերը (որովհետև Մխիթար Այրիվանեցու գանձերն ու տաղերը Հետագայում ընդօրինակվել են Հետզհետե խորացող կամայական ընտրությամբ, տարբեր քանակով, տարբեր հաջորդականությամբ, իսկ հաճախ էլ՝ առանձին գանձերի մասնատումներով ու կոտորակումներով), մնում է եղած բոլոր փաստերի հանգամանալից քննությամբ հնարավորին չափ նախ որոշակի գաղափար կազմել հեղինակի չափածո ստեղծագործությունների ամբողջության մասին և ապա զնահատել դրանք իբրև գրական արժեքներ: Դա դժվարին գործ է, մանավանդ որ մեզ հասած Գանձարան-ժողովածուների հարյուրավոր օրինակներում չկան գեթ մի տասնյակի հասնող ձևագրեր, ուր չհանդիպեն Մխիթար Այրիվանեցու ստեղծագործությունները:

Իրերի այս վիճակում մենք նպատակ ենք դրել միջնադարյան ձևագրերում պահպանված Համապատասխան ընդօրինակությունների, վկայությունների, մասնագիտական դիտողությունների և այլ նյութերի քննությամբ վերականգնել Մխիթար Այրիվանեցու Գանձարանի մոտավոր պատկերը և դրանով իսկ որքան հնարավոր է հստակ պատկերացում ստեղծել այնտեղ ամփոփված ստեղծագործությունների վերաբերյալ:

Այս առումով որոշ հետաքրքրություն են ներկայացնում Մաշտոցյան Մատենադարանի հմ. 6529 ձեռագրի նյութերը, որոնց վրա առաջին անգամ ուշադրություն է հրավիրել Գ. Հովսեփյանը¹: Դրանք բեկորներ են բուն Գանձարանից և իրենցից ներկայացնում են Մխիթար Այրիվանեցու երկու երգերը, չափածո հիշատակարանը և Գրիգոր Նլաթեցու մեկ չափածո և երկու արձակ հիշատակարան-հիշատակագրությունները, ինչպես նաև այդ Գանձարանի երբեմնի ամբողջական բովանդակության ցանկը: Վերջինս այնքան սուղ նշումներով է կազմված, որ նրա օգնությամբ անհնար է ճշտել եղած գանձերը և նրանց հեղինակները: Բացի դրանից, այդ ցանկն էլ պակասավոր է: Այդուամենայնիվ, պահպանված մասերից տեղեկանում ենք, որ երբեմնի Գանձարանի բոլոր գանձերի քանակը Հավասար է եղել շուրջ 100 միավորի, դրանց թվում՝ Մխիթար Այրիվանեցու գանձերի հիմնական խումբը՝ միահյուսված այլ հեղինակների գանձերին և տաղերին:

Նշված ձեռագրի պահպանված մասը մեզ համար ունի ելակետային նշանակություն, որովհետև այդտեղ է վկայված, թե Մխիթար Այրիվանեցին 1286 թվականին կազմել է իր Գանձարանը, իսկ նրանից 100 տարի անց Գրիգոր Նլաթեցին Այրիվանեցուն հանդիպել է այդ ձեռագրին: Ուշագրավ է նաև ձեռագրում պահպանված այն փաստը, ըստ որի Մխիթար Այրիվանեցու հեղինակած Գանձարանում եղել են 21 գանձ և 2 երգ:

Ասվածից հասկանալի է, որ եթե հնարավոր լիներ որևէ եղանակով պարզել հմ. 6529 ձեռագրի երբեմնի բովանդակության մանրամասնությունները, ապա այդտեղից կբացահայտվեր նաև Մխիթար Այրիվանեցու 1286 թվականի Գանձարանի մոտավոր պատկերը:

Այս նպատակով մեր կատարած որոնումները Մաշտոցի անվան Մատենադարանի Գանձարաններում բաց արին Մխիթար Այրիվանեցու գանձերի ու վերոհիշյալ ժողովածուի մասին որոշակի պատկերացում կազմելու մի նոր ճանապարհ, որը ցարդ վրիպած է եղել մասնագետների ուշադրությունից:

Ինչպես հայտնի է, Մխիթար Այրիվանեցին ևս օգտվել է ծայրակապով (ակրոստիքոսով) գրելու արվեստից: Վաղուց են հայտնի ծայրակապով գրած նրա մի շարք գանձերը: Սակայն այժմ պարզվեց, որ բանաստեղծն իր գանձերի հիմնական շարքը (15 գանձ) գրել է մի ընդհանուր ծայրակապով, որը կազմում է իմաստավոր և ամբողջական նախադասություն: Հեղինակն այդ եղանակով, փաստորեն, մեզ է կտակել իր գանձերի և Գանձարանի ամբողջական պատկերը վերականգնելու բանալին: Ըստ երևույթի, Մխիթար Այրիվանեցու գանձերի այդ իմաստավորված ծայրակապային պարբերության մասին տեղեկություն չեն ունեցել նաև միջնադարյան գրիչներն ու

¹ Տե՛ս Գ. Հովսեփյան, Մխիթար Այրիվանեցի, էջ 5-8:

գանձասացները՝ սկսած դեռևս Գրիգոր Խյաթեցուց: Իսկ ավելի ուշ այդ պարագան այլևս դժվար կնկատվեր, որովհետև Մխիթար Այրիվանեցու այդ գանձերի ընդօրինակությունները կատարվում էին ընտրությամբ, այն էլ ընդհանուր Գանձարանների մեջ, նրանց տարբեր էջերում, միմյանցից հեռու, կոտորակված և հաճախ էլ՝ ուրիշների գանձերին միահյուսված:

Այժմ, երբ նման Գանձարաններից անջատում ենք Մխիթար Այրիվանեցու գանձերը՝ Հերթական Հաջորդականությունում, ապա ինքնին վերականգնված ենք գտնում նրանց ընդհանուր ծայրակապի մոտավոր պատկերը: Ըստ որում, որքան շատ են տվյալ Գանձարանում Մխիթար Այրիվանեցու գանձերի միավորները, այնքան ավելի ամբողջական է ծայրակապը: Հարցի ուսումնասիրությունն օգնում են հատկապես այն Գանձարանները, որոնց մեջ Մխիթար Այրիվանեցու գանձերի թիվը տատանվում է 12-18-ի միջև: Մեր ուսումնասիրության համար ընտրել ենք նման երկու տասնյակի հասնող ձեռագրեր, որոնց մեջ ծայրակապային նշված շղթան հանդիպում է հիմնականում երեք տարբերակով:

Առաջին խմբին են պատկանում հմ. 4011, 2736, 4976, 426, 424 Գանձարանները: Դրանցից բացառիկ նշանակություն ունի հմ. 4011 ձեռագիրը, որտեղ Մխիթար Այրիվանեցու գանձերի շարքը համեմատաբար ավելի նախնական է ու վստահելի: Ծիշտ է, այնտեղ էլ առկա են մասնատումներ, որոնք մասամբ խախտում են ծայրակապերի իմաստը և շփոթություն մտցնում գանձաքանակի հաշվի մեջ, սակայն դրանք հեշտությամբ վերականգնվում են այլ ձեռագրերի օգնությամբ: Ահա այդ ձեռագրի մեջ ցրիվ եղած՝ Մխիթար Այրիվանեցու 18 գանձերի սկզբնատուերով ընդհանուր նախադասություն կազմող վերականգնված ծայրակապը.

«[Տէր Մխիթարա + վարդայպետի + բայիւ երգել + Հինգոտասան + բան քարոզից + Այրիվանեցի + Երեւանեցին + մերզան + հայցէ սիրով + զպակասորդք + տերունական + վկայականաց + տաւնից ասել + խորհրդոցն + Ի փառս Տեառն + վեշտասանք է + [ճգնաւորք]² + Սարգիս գրիչ»:

Երկրորդ խմբի մեջ են մտնում հմ. 4844 Գանձարանը³ և նրան հարազատ հմ. 7785, 3540, 8251, 5521 Գանձարանները: Այստեղ Մխիթար Այրիվանեցու 17 գանձերի ծայրակապերը հոդում են. «Տէր Մխիթարա» + [վարդայպետի] + բայիւ երգել + Հինգէտասան + վեշտասանք է + Ի փառս Տեառն + բան քարոզից + Այրիվանեցի + Երեւանեցին + հայցէ սիրով +

զպակասորդք + տերունական + վկայականաց + տաւնից ասել + խորհրդոցն + ճգնաւորք + Սարգիս գրիչ»:

Երրորդ խմբին են պատկանում հմ. 5785 և նրան հարող հմ. 428, 425, 5328, 429 Գանձարանները: Հմ. 5785 Գանձարանում գտնվող 18 գանձերի վերականգնված ծայրակապն է. «Ի փառս Տեառն + վէշտասանք է + ճգնաւորք + Սարգիս գրիչ + Տէր Մխիթարա + վարդայպետի + բայիւ երգել + Հինգոտասան + բան քարոզից + Այրիվանեցի + Երեւանեցին + մեր բան⁴ + հայցէ սիրով + զպակասորդք + տերունական + վկայականաց + տոնից ասել + խորհրդոցն»:

Ծայրակապային այս երեք խմբերից առավել կանոնավոր և տրամաբանական տեսք ունեցողն առաջին խումբն է, որն սկսվում է «Տէր Մխիթարա» ծայրակապն ունեցող գանձով: Այն նվիրված է «Աստուածայայտութեան ճրագալուցի» տոնին և Տոնացույցի համաձայն՝ դիտարկում է գանձերի տոնական շարքը: Դրա համաձայն՝ շարքի վերջին գանձն էլ հոդում է «Ի փառս Տեառն» բառերը և ամփոփում նախադասության միտքը:

Փոքր-ինչ այլ է պատկերը մյուս երկու խմբերում: Երրորդ խմբի առաջին շարքն սկսվում է առաջին խմբի վերջին միավորների տեղաշարժումով, որի հետևանքով այն բառերը, որոնցով պետք է ավարտվեր ծայրակապային նախադասությունը, այստեղ հանդիսանում են սկիզբ: Երկրորդ խմբում նորից նույն հատվածն է տեղաշարժված՝ այս անգամ էլ այլ ձևով: Հետևապես, անառարկելի է դառնում այն փաստը, որ երեք խմբերից հեղինակային բնագրին առավել հարազատ պետք է համարել առաջին խմբի ծայրակապային շղթան: Դա անտարակուսելի կդառնա, երբ ցույց կտրվեն առաջին խումբը ներկայացնող հմ. 4011 ձեռագրի այլ արժանիքներ:

Արդ, ի՞նչ է ասում ծայրակապային այդ ընդհանուր նախադասությունը: Այն, փաստորեն, բողոքացած է երեք մասից, որոնցից առաջինն ասում է. «Տէր Մխիթարա վարդայպետի բայիւ երգել Հինգոտասան բան քարոզից»: Այսինքն՝ Մխիթար Այրիվանեցի վարդայպետը գրել է «բայիւ», «ձայնիւ» («ռեչիտատիւ»), ոչ ճոխ եղանակով երգվելիք 15 քարոզ (գանձ)⁵: Նախադասության երկրորդ մասում կարդում ենք. «Այրիվանեցի-Երեւանեցին հայցէ սիրով զպակասորդք տերունական վկայականաց տաւնից ասել

⁴ Մխիթար Այրիվանեցու «Ապաշխարութեան» գանձը Գանձարաններում ունի «Մերզան» անբացատրելի ծայրակապը: Հմ. 5785 Գանձարանի գրիչ Կարսպետ Բաղիչեցին փորձել է ճշտել ծայրակապի իմաստը: Այդ նպատակով նա «գրեումն» տնակապ կազմող բառից առանձնացրել է «զ» տառը և գրել լուսանցքում թողնելով «բխումն» բառը, որով ծայրակապը կարդացվում է «մեր բան»: Նշված ծայրակապը հիշյալ խմբի Գանձարաններում հանդիպում է ընդօրինակված նաև շղթայի վերջում:

⁵ Տես «Նոր բառգիրք հայկապահան լեզուի», Հատ. Ա, էջ 431: Հնագույն շրջանի Գանձարաններում գանձերը կոչվել են նաև «քարոզ», «ճառ», «կանոն»:

² Այս խմբին հարող ձեռագրերում հանդիպում է նաև Այրիվանեցու «Ճգնաւորք» ծայրակապով գանձը, որը հմ. 4011 ձեռագրում պակասում է:

³ Հմ. 4844 Գանձարանում բնօրինակված են մեր Հեղինակի և երկու ծիսական բնույթի գանձերը, որոնցից առաջինն ունի «Տէր Մխիթար վ», իսկ երկրորդը՝ «Տէր Մխիթարա» ծայրակապերը: Դրանք չեն մտնում ծայրակապերի հիշյալ շղթայի մեջ:

խորհրդոցն, ի փառս Տեառն»։ Այս նախադասութիւնն էլ ցույց է տալիս, թե Մխիթար Այրիվանեցին, որ կոչվել է նաև Երևանեցի, սիրով խնդրում է՝ տերունական և վկաներին նվիրված տոներ յմիջև այդ պակաս մնացած գանձերն ասել հանուն Տիրոջ փառքի։

Ծայրակապային նախադասութիւնն երրորդ հատվածն ասում է. «վէշտասանք է, ճգնաւորք, Սարգիս գրիչ»։ Դա արդեն թվում է ընդհանուր շարքին անհարիր. անհարիր է թվում նաև երկրորդ հատվածի մեջ առկա «Մերգանք»։

Ինչո՞վ բացատրել այս հակասութիւնները. արդո՞ք նշված երեք հատվածները մի ամբողջութիւն են, թե՞ այդտեղ առկա է երեք տարբեր միավոր։ Այս հարցերի լուծմանն օգնում է նախադասութիւնն առաջին հատվածը, ուր նշված է, որ շարքում առկա է «հինգոտասան բան քարոզից», այսինքն՝ շարքը բաղկացած է 15 գանձից։ Ըստ այդմ՝ առաջին հատվածի հետ կապվող գանձերի քանակը հավասար պետք է լինի 15-ի, մինչդեռ նրանց թիվը հավասար է 5-ի։ Ուստի «հնգոտասանը» վերաբերում է ոչ թե առաջին հատվածին, այլ ամբողջին։ Սակայն նշված բոլոր հատվածները մի ամբողջական նախադասութիւն համարելու դեպքում էլ գանձերի ընդհանուր քանակը 15-ից հասնում է 18-ի։ Դա համեմատաբար դուրսին կլինեք բացատրել, եթե հակասութիւնը լոկ քանակի մեջ լինեք, որովհետև խոսքը վերաբերում է 3-4 գանձի՝ այդ շարքին օտար լինելուն։ Սակայն, հետևելով նախադասութիւնն իմաստին, մենք ինքնաբերաբար տարակուսում ենք իմաստային առումով նրա հետ չառնչվող հետևյալ չորս միավորների նկատմամբ՝ «Մերգանք», «Ճգնաւորք», «Վէշտասանք է», «Սարգիս գրիչ»։ Նշվածներից «Մերգանք» ծայրակապը մնում է անբացատրելի, կարծում ենք, որ այն աղավաղված է։ «Վէշտասանք է» ծայրակապով գանձը նվիրված է «Ամենայն սրբոց Հայրապետաց» տոնին։ Ծայրակապի բացատրութիւնը, հավանաբար, կապ ունի կրոնաեկեղեցական որևէ հասկացութիւն հետ։ Այս ենթադրութիւնն համար մեզ հիմք են տալիս Մխիթար Այրիվանեցու մի ուրիշ գանձի («Պետրոսի Հայրապետին և Աբիսողոմայ սարկաւազին») հետևյալ տողերը.

Կարգեալք յաթոռին
Դասք պատրիարզին,
Թիւք վէշտասանին...⁶

⁶ Մատենադարան, ձեռ. հմ. 4068, թերթ 222ա։ Մատենադարանի հմ. 10827 Գանձարանի «Ամենայն սրբոց Հայրապետաց» (ծայրակապ՝ «Վէշտասանք է») գանձի տողատակում հիշատակվում են Հայրապետների անունները (տես թերթ 50բ, 51ա)։

Հայտնի է, որ «պատրիարզ» բառն օգտագործվել է նաև «Հայրապետ» իմաստով։ Հայկազյան բառարանում կարդում ենք. «Պատրիարզ... որ ի սուրբ գիրս թարգմանի Հայրապետ»⁷։ Այստեղ օրինակներ են վկայակոչված նաև Մխիթար Այրիվանեցուց։ Հետևապես, Մխիթար Այրիվանեցու գանձի նշված տողերը ցույց են տալիս Հայրապետների դասի թիվը, որը և մենք կարող ենք ընդունել որպես «Վէշտասանք է» ծայրակապի բացատրութիւն։

«Ամենայն սրբոց ճգնաւորաց» գանձի «Ճգնաւորք» ծայրակապը շարահարում է գանձի տոնական անունը։

«Սարգիս գրիչ» ծայրակապը, որով ստեղծված է «Սրբոց առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի» գանձը, տեղիք է տվել որոշ շփոթմունքի։ Գրիչներից ոմանք Գանձարանների ցանկերում որպես հեղինակ նշել են Սարգիս գրիչին⁸։ Երկմտանք առաջացնող այս ծայրակապի բացատրութիւնը գտնում ենք հմ. 7785 Գանձարանում։ Այստեղ գանձի խորագրում կարդում ենք. «Քարոզ Պետրոսի և Պաւղոսի առաքելոցն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ասացեալ Մխիթար վարդապետի, ի խնդրոյ Սարգիս գրչի»։ Իսկ տողատակում գրչի կողմից ավելացված է.

Արարեալ Մխիթար,
Ասացեալ Մխիթար,
Ոգեալ Մխիթար⁹։

Այսպիսով, պարզվում է, որ ծայրակապը հոդում է խնդրատուի անունը։ Կարծում ենք, որ դա այն Սարգիս գրիչն է, որը նկարել է Մխիթար Այրիվանեցու կազմած ինքնագիր «Ճառընտիրի» լուսանցազարդերը։

Ծայրակապային ընդհանուր խմբից դուրս թողնելով նշվածները՝ ստանում ենք երկու հատվածներից կազմված մի լրիվ և ավարտուն պարբերութիւն։ Բայց այստեղ էլ նկատելի է մեկ այլ խոչընդոտ. հեղինակը նշում է 15 գանձ, մինչդեռ ստացվում է 14 գանձ, պակասում է մեկ միավոր։ Հավանական է, որ հենց այդ կասկածելի չորս գանձերից մեկն է որոնելին։ Բայց նրանցից և ոչ մեկի ծայրակապը ներկա վիճակով չի մերվում ընդհանուր նախադասութիւնը՝ առանց խաթարելու նրա իմաստը։ Այդուամենայնիվ, անկախ այդ գանձի ճշգրտումից, բուն խնդիրը միանգամայն պարզ է.

⁷ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. 2, Վենետիկ, 1837, էջ 624։

⁸ «Ցուցակ Հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի Մատենադարանին», հատ. Բ, կազմ. Ն. Ակիսյան, Է. Ոսկյան, Վիեննա, 1971, էջ 320։

⁹ Ձեռ. հմ. 7785, թերթ 538բ։

Մխիթար Այրիվանեցին մի ընդհանուր ծայրակապով գրել է 15 գանձ, որոնք տեղադրված են Հատուկ Հաջորդականությունում և կազմում են մի ամբողջական շարք: Սա, Հիրավի, բացառիկ նշանակություն ունեցող փաստ է, որը մեզ հաղորդում է Հեղինակային տվյալներ նրա Գանձարանի վերաբերյալ: Ուստի պահանջվում է ավելի Հետևողականորեն զբաղվել այդ փաստի և դրա հետ առնչվող հարցերի քննությունում:

Վերևում նշվեց, որ Մխիթար Այրիվանեցու գանձերի ծայրակապային շղթան ավելի ամբողջական և համեմատաբար անաղարտ է առաջին խմբի ձեռագրերում, որոնցից հնագույնը հմ. 4011 Գանձարանն է¹⁰: Այս Գանձարանի քննությունը մեզ համար ստանում է կրկնակի նշանակություն, որովհետև այն նույնպես առնչվում է Գրիգոր իլյաթեցու անվանը և հանդիսանում է հմ. 6529 ձեռագրին հարապատ ընդօրինակություն: Այդ Գանձարանում ընդգրկված են 8 Հեղինակների (Մխիթարի, Մկրտչի, Յոհաննեսի, Խաչատուրի, Գրիգորի, Մատթէոսի, Գևորգի, Դավիթի) 100 գանձերը: Ձեռագրի Հիշատակարաններից մեկում կարդում ենք. «Բարեխաւսութեամբ սրբոյն Սարգսի գաւրաւարի և ամենայն սրբոց նահատակութեամբ, որ աստ կան հաւաքեալ, ողորմեա՛, Տէր, զգծողի սորա Գրիգորի»¹¹: Ենթադրում ենք, որ այդ Գրիգորը իլյաթեցին է: Ձեռագրի գրչությունն տեղն ու թվականը անհայտ են: Հմ. 6529 և հմ. 4011 ձեռագրերի հարազատությունն առավել համոզիչ է դառնում, երբ ուշադրություն ենք դարձնում հմ. 4011 ձեռագրի սկզբի 7 նյութերի վրա, որոնք ոչ այլ ինչ են, քան նույն միավորները՝ պահպանված հմ. 6529 ձեռագրի բեկորում: Դա ինքնին ենթադրել է տալիս, թե հմ. 4011 ձեռագրի գանձարանային մասն էլ պետք է համապատասխաններ հմ. 6529 ձեռագրի կորած գանձարանային մասին: Այս կարծիքը լիովին հաստատվում է, երբ փորձում ենք համեմատել առաջինի նյութերը երկրորդից պահպանված ցանկի հետ: Զուգադիպումները հետևողական են և համոզիչ:

Մեծ նշանակություն ունեցող այս իրողությունը վերջնականապես հաստատուկու համար հարկ ենք համարում նաև ներկայացնել հմ. 4011 ձեռագրում եղած Մխիթար Այրիվանեցու և Գրիգոր իլյաթեցու վերոհիշյալ նյութերի, ապա Մխիթար Այրիվանեցու մյուս ստեղծագործությունների ամփոփ նկարագրությունը՝ զուգահեռաբար տալով նաև հմ. 6529 ձեռագրի պահպանված, ինչպես նաև՝ կորած նյութերի ցանկերը: Որպեսզի այս ձեռագրի նյութերի նշված երկու մասերի պատկերն այստեղ մոտավոր ամբողջ-

ղությամբ ցույց տված լինենք, նախ կներկայացնենք առաջին խմբի նյութերը (1-7), ապա՝ ցանկի համապատասխան տողերը՝ միմյանցից բաժանելով աստղանիշ նշաններով:

Ձեռ. հ. 4011¹²
1ա Յանկ... (սկ. թերի). ՀԹ:

1բ-2բ: Տէր Մխիթարայ ասացեալ պատկերաց - Մին միածին Հաւր Որդի... («Մխիթար»)

2բ-4ա: Նորին տեառն Մխիթարայ հոգելի և բանիբուն վարդայպետի ասացեալ վասն աւրհնութեան նոր գրոց - Մեծապայծառ ցնծութեամբ... («Մխիթար»)

4ա [Յիշատակագրութիւն Գրիգորի իլյաթեցոյ] - ԻԱ գանձ կայ տէր Մխիթարայ Այրիվանեցոյն ի գիրքս...

4ա [Յիշատակարան Մխիթարայ Այրիվանեցոյ] - Ի յախտածէտ ըստեանց ճընշեալ...

4բ [Յիշատակագրութիւն] - Տէր Մխիթարն ի ՁԼ Ե թըւին...

4բ-6բ [Յիշատակարան Գրիգորի իլյաթեցոյ] - Այլև զԳրիգոր մեղաւք լըցեալ...

Ձեռ հմ. 6529¹³

1ա-2ա: (Յանկ): Յառաջաբանութիւն... Գանձարանին:

2բ-3բ: Տեառն Մխիթարայ ասացեալ պատկերաց - Մին միածին Հաւր Որդի... («Մխիթար»):

3բ-4բ: Նորին տեառն Մխիթարայ հոգելի և բանիբուն վարդայպետի ասացեալ վասն աւրհնութեան նոր գրոց - Մեծապայծառ ցնծութեամբ... («Մխիթար»):

4բ [Յիշատակագրութիւն Գրիգորի իլյաթեցոյ] - ԻԱ գանձ կայ տէր Մխիթարայ Այրիվանեցոյն ի գիրքս...

4բ [Յիշատակարան Մխիթարայ Այրիվանեցոյ] - Ի յախտածէտ ըստեանց ճընշեալ...

4բ [Յիշատակագրութիւն] - Տէր Մխիթարն ի ՁԼ Ե թըւին...

4բ-6բ [Յիշատակարան Գրիգորի իլյաթեցոյ] - Այլև զԳրիգոր մեղաւք լըցեալ...

* *

Գանձերը՝ ըստ առկա միավորների

Տ/Ա. 7ա-8բ: [Աստուածայտնութեան ճրագալուցին] - Բամեալ հրեղի-նայ...

(«Բ Մխի» - Տէր Մխի)¹⁴

Գանձերը՝ ըստ ցանկում եղած նշումների

Տ/Ա. Աստուածայտնութեան ճրագալուցին

¹² «Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվ. Մատենադարանի», հատ. Ա. էջ 1130:

¹³ «Յուցակ ձեռագրացու մ» այս գրչակիրը կոչված է «Մխիթար Այրիվանեցի. Գանձք» (2-րդ հատ., էջ 339): Հավանաբար, Գանձարանն այդպես է կոչվել՝ նկատի ունենալով լոկ առկա գանձերը:

¹⁴ Այստեղ և ստորև ծախսակապերի աղավաղված ձևերին աղբյուրը տալիս ենք նրանց ճիշտ ձևերը:

¹⁰ Գանձարանի նկարագրությունը տե՛ս «Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հատ. Ա, էջ 1130:

¹¹ Ձեռ. հմ. 4011, թերթ 76ա:

9/Բ. 10ա-11բ: Առաջի աւուր ծննդեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ – Թագըղ պարծանաց («Թարա»):

(Գանձը կազմում է առաջինի շարունակութիւնը):

10/ԺԱ. 40ա-43ա: Պետրոսի Հայրապետին եւ Աբիսողոմայ սարկաւազին – Վեր երգեմք Հնչմամբ... («Վարդայպետի»):

11/ԺԲ. 44ա-48ա. Անտոնի Անապատականի եւ այլ ճգնաւորաց – Բարձեալ աշաւոր... («Բայիւ երգել»):

12/ԺԳ. 49ա-53բ: Թագաւորացն սրբոց գանձ – Համագոյական... («Հինգոտասան»):

13/ԻԳ. 85բ-89բ: Գանձ սրբոյն Սահակայ – Բարձրեալ անքննին... («Բանքարդի»):

14/ԻԵ. 94բ-98բ: Գանձ սրբոց Հայրապետացն Գ ժողովոյն – Աստուած կենդանի... («Աարիվանեցի»-Այրիվանեցի):

15/ԻԶ. 100ա-102բ: Բուն Բարեկենդանաց կիրակի աւուրն գանձ – Երգս յաւերժական... («Երամեցին» – Երեւանեցին):

16/ԼԳ. 121ա-124ա: Վեցերորդ կիրակէին գանձ – Մեղայ, Տէր, մեղայ... («Մերգան»):

(«Մերգան»):

17/ԼԶ. 130ա-131ա: Գանձ Մողկազարդին – [Համագոյական...] («Յէտ» – Հայցէ):

18/ԼԷ. 131բ-133բ: Գալըստեան երկրոյն ասայ, կիրակին – Ի տաւնըս տաւնից... («Իրով» – Սիրով):

(Գանձը նախորդի շարունակութիւնն է):

19/ԽԱ. 141ա-148բ: Գանձ Աւագ Հինգշաբաթի աւուրն – Զահեղ գանքըննին... («Զպակաս»):

(«Զպակաս»):

9/Բ. Մըննդեանն Քրիստոսի գանձ

10/ԺԱ. Պետրոսի Հայրապետին

11/ԺԲ. Անտոնի ճրգնաւորին եւ աշակերտաց նոցին

12/ԺԳ. Թագաւորացն սրբոց Թէոդոսի եւ Տրդատայ

13/ԻԳ. Սուրբ վարդապետացն Սահակայ եւ Մեսրոբայ

14/ԻԵ. Սուրբ Հայրապետացն երից սուրբ ժողովոյն

15/ԻԶ. Բուն Բարեկենդանացն

16/ԼԳ. Վեցերորդ կիրակէին

17/ԼԶ. Մառազարդարի առաւոտուն

18/ԼԷ. Երեկոյի արմաւենեաց, գալստեանն: Բ.

19/ԽԱ. Աւագ Հինգշաբաթու առաւոտուն

20/ԽԲ. 149բ-151բ: Այլ գանձ Աւագ Հինգշաբաթին – Որք որ փափագին... («Որդք»):

(Գանձը կազմում է նախորդի շարունակութիւնը):

21/ԽԹ. 170բ-178բ: Գանձ յարութեան ի տէր Մխիթարայ... – Տէր տերունական... («Տերուն»):

22/Մ. 174բ-176բ: Յարութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ գանձ. ցերեկի Հատորն է. – Արդ լուսաւորեալ... («Ական»):

(Գանձը նախորդի շարունակութիւնն է):

23/ԿԶ. 226բ-231ա: Սրբոց կուսանացն Հըռիփսիմեանցն եւ Գայիա – Վայելչականաց... («Վկայականաց»):

24/ԿԷ. 233բ-234բ: Գանձ կաթողիկէ եկեղեցւոյ էջմիածնի – Տաճարդ երկնային... («Տց» – Տաւնից):

25/ՀԱ. 242բ-247բ: Գանձ մարգարէիցն սրբոց առհասարակ – Խորհուրդ անքըննին... («Խորնհհըրդոցն» – Խորհըրդոցն):

26/ 265ա-265բ: Տաղ պիտանի – Սուրբ Աստուածածին կուսին...

27/Զ. 287ա-290ա: Գանձ սրբոց կուսանացն ի Տէր Մխիթարա Այրիվանեցոյ – Ի սկըզբան էիդ... («Ի փապըս» – Ի փառքս):

28/ԶԱ. 290բ-292բ: Նորին վասն մարտիրոսաց – Տինա առաւել... («Տեաջըն» – Տեառն):

(Գանձը նախորդի շարունակութիւնն է):

29/ԶԼ. 316բ-322բ: Գանձ ամենայն Հայրապետաց սրբոց – Վայել է քոյին... («Վեշտասանք է»):

30/ՂԳ. 343բ-348ա: Սրբոց առաքելոցն Պետրոսի եւ Պաւղոսի – Սուրբ Երրորդութիւն... («Սարգիս գրիչ»):

20/ԽԲ. [Ոտնա]լըւայի երեկոյին

21/ Զիք. Թերթ է ընկել:

22/ Զիք. Թերթ է ընկել:

23/ »

24/ »

25/ »

26/ »

27/ »

28/ »

29/ »

30/ՂԳ. Սրբոց առաքելոցն Պետրոսի եւ Պողոսի

Հմ. 4011 ձեռագրի 30 միավորներից սկզբի 7-ը Համապատասխանում են Հմ. 6529 ձեռագրի փրկված մասում առկա նյութերին, իսկ մնացած 23-ը՝ նրա ցանկում նշվածներին: Խորագրերում եղած մասնակի տարբերությունները արդյունք են Հենց այս Հանգամանքի¹⁵:

Ինչպես տեսնում ենք, Հմ. 4011 և Հմ. 6529 ձեռագրերը Համապատասխանում են միմյանց թե՛ բովանդակած նյութերով և թե՛ նրանց Հաջորդականությունում: Նկատվող ոչ էական շեղումները, վնասվածքների արդյունք լինելով, Հեշտությունը բացատրվում են և վերստին Հիմք տալիս Համոզվելու Հմ. 6529 և Հմ. 4011 ձեռագրերի բնագրային և կառուցվածքային նույնությունը Հարցում: Անկասկած է, որ այդ երկու ձեռագրերը կա՛մ ծագել են միմյանցից, կա՛մ էլ ունեցել են ընդհանուր Հիմք:

Արդ, ե՞րբ են ստեղծվել այդ Գանձարանները: Նրանց մեջ պահպանված Գրիգոր Խլաթեցու Հիշատակարանից և Հիշատակագրություններից, ինչպես նաև մյուս նյութերից երևում է, որ նշված ձեռագրերը գրվել են 1399 թվականին կամ այդ թվականից Հետո, որովհետև այնտեղ գտնվող Գրիգոր Խլաթեցու Հիշատակարանի պատմական մասն ավարտվում է 1399 թվականի դեպքերի նկարագրությամբ: Հմ. 6529 և 4011 ձեռագրերի ժամանակի ճշգրտմանն օգնում է Մատենադարանի Հմ. 3540 Գանձարանը¹⁶: Այս ձեռագիրը չնայած բովանդակում է Մխիթար Այրիվանեցու երկու երգերն ու Հիշատակարանը, իսկ նյութերն էլ, սկսած «Ժ» Համարից, Հիմնականում Համապատասխանում են նշված երկու ձեռագրերին, այնուամենայնիվ, նրանց նկատմամբ ունի շեղումներ, որոնք ուշ ժամանակի արդյունք են: Այսպես, Գանձարանի գրիչ Հովհաննեսը բավական լայն Հնարավորություններ է ունեցել գանձերի ընտրության հարցում: Ձեռագրում նա Մխիթար Այրիվանեցու «Աստուածայայտությունեան ճրագալուցին» գանձի փոխարեն նախընտրել է այդ տոնի Համար գրված Խաչատուրի գանձը, իսկ Մխիթար Այրիվանեցունը հատկացրել է ծննդյան Հինգերորդ, վեցերորդ օրերին: Ապա, ի տարբերություն մյուս երկու ձեռագրերի, այստեղ Մխիթար Այրիվանեցու երկու երգերն ու Հիշատակարանը ընդօրինակված են վերջում, իսկ Գրիգոր Խլաթեցու Հիշատակարանը փոփոխված է գրչի կողմից: Պակասում են նաև երկու Հիշատակագրությունները: Ինչպես պարզվում է Հովհաննես գրչի Հիշատակարանից, Հմ. 3540 ձեռագիրն ընդօրինակվել է Գրիգոր Խլաթեցու իմացությունից: «...գրեցաւ սա ի գաւառիս ի վանքս Յիպնայ, ընդ Հովանեսաւ ամենագաւր Սուրբ նշանիս... առ ոտս գե-

¹⁵ «ԽՖ» գանձը Հմ. 4011 ձեռագրում կոչվում է «Աւագ Հինգարաթին», իսկ Հմ. 6529-ում «(Ոտնա)լրալի երկոյին»: Դա էական տարբերություն չունի, որովհետև ըստ իմաստի դրանք երկուսն էլ նկատի ունեն նույն տոնը, որը Հայտնի է այդ երկու անուններով:

¹⁶ Ձեռագրի նկարագրությունը տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվ. Մատենադարանի», Հատ. Ա, էջ 1037: Ձեռագրի առաջին պրակը (թերթ 1-10) XVII դ. Տաղարանի մի Հատված է:

րիմաստ և երանաշնորհ և արդիւնական Հոետորիս Գրիգոր վարդապետիս, ի փառս Քրիստոսի Աստուծոյ»¹⁷:

Մյուս երկու ձեռագրերի գրիչը Գրիգոր Խլաթեցին է: Եվ քանի որ Հմ. 3540 ձեռագիրն ընդօրինակված է 1408 թվականին և նախահիմք է ունեցել Հմ. 6529 և 4011 ձեռագրերը, ուստի վերջիններս էլ գրված պետք է լինեն 1399-1408 թթ. ընթացքում:

Այժմ փորձենք ծանոթանալ Հմ. 4011, 6529 ձեռագրերում պահպանված՝ Գրիգոր Խլաթեցու Հիշատակարան-Հիշատակագրություններին, որոնք չնայած բանասիրությանը վաղուց էին ծանոթ Հմ. 6529 ձեռագրից, սակայն այժմ մեծ նշանակություն են ստանում նոր բացահայտվող փաստերի շնորհիվ: Գրիգոր Խլաթեցին իր չափածո Հիշատակարանում գրում է.

Այլ և գ Գրիգոր մեղաւք լցեալ,
Եւ աբեղայ անուամբ կոչեալ,
Բայց ի գործոց յոյժ Հեռացեալ,
Ձեռով միայն կեղծաւորեալ,
Որ յետ հարիւր ամաց անցեալ՝
Մխիթարայ բանիցս ոգեալ,
Ի յԱյրիվանս մեզ պատահեալ,
Փափագ սրտիս եղև լըցեալ:
Նաև բանից շնորհաւք լըցեալ
Մխիթարայ, գոր սասցեալ
Քան ըզկամացս իմ կատարեալ՝
Քսան և վեց ամ յառաջեալ,
ՉԱյրիվանուց անուն լըւեալ
Եւ ընտիր գանձուցս Հանդիպեալ,
Եւ յայնմ արէ յոյժ ցանկացեալ
Տեսլեան տեղոյս ես տառապեալ...¹⁸:

ԱՀա այս Հիշատակարանով էլ բացվում է Հարցի պատմության սկիզբը: Գրիգոր Խլաթեցին այստեղ պատմում է, որ 26 տարի շարունակ երազելուց Հետո ի վերջո այցելում է Այրիվանք և ծանոթանում Մխիթար Այրիվանեցու գանձերին՝ գրված այդ այցելությունից 100 տարի առաջ: Հիշատակարանում որոշակի չի սպվում, թե ե՞րբ է գրված եղել Այրիվանեցու Գանձա-

¹⁷ Ձեռ. Հմ. 3540, թերթ 286բ:

¹⁸ Ձեռ. Հմ. 6529, թերթ 4բ: Բերում ենք Հիշատակարանից միայն մի Հատված՝ նկատի ունենալով, որ այն Հրատարակված է Գ. Հովսեփյանի (նշվ. աշխ., էջ 6) և Լ. Խաչիկյանի («ԺԵ դարի Հայերեն ձեռագրերի Հիշատակարաններ», առաջին մաս, Երևան, 1955, էջ 279) կողմից: Հիշատակարանի՝ Այրիվանքին վերաբերող մասը Լ. Խաչիկյանը ներկայացրել է ծանոթության կարգով:

րանը և ե՞րբ է Գրիգորը իլաթեցին տեսել այն: Այս առումով օգտակար է նույն ձեռագրում պահպանված մեկ այլ հիշատակագրություն, որով կարծես լրացվում է առաջին հիշատակարանի միտքը. «Տէր Մխիթարն ՁԼԵ Թրւհին ասացեալ էր զիւր բանսն, և Գրիգոր վարդապետն ի ՊԼՁ Թրւհին Հանդիպեցաւ նորա բանիցն»¹⁹: Այսինքն՝ Մխիթար Այրիվանեցին իր գանձերն ու երգերը գրել է 1286 (ՁԼԵ) թվականին, իսկ Գրիգորը իլաթեցին դրանք տեսել է 1387 (ՊԼՁ) թվականին:

Այս խնդրի հետ է առնչվում նաև նույն ձեռագրում առկա հետևյալ հիշատակագրությունը. «ԻԱ գանձ կայ Տէր Մխիթարայ Այրիվանեցոյն ի գիրքս և այս Բ երգս նորակերտ գրոց և պատկերաց սրբոց: ՁԼԵ»²⁰: Սա արդեն ստույգ վկայություն է այն մասին, որ Մխիթար Այրիվանեցու ժողովածուն պարունակել է 21 գանձ, երկու երգ և գրված է եղել «ՁԼԵ» (1286) թվականին:

Հարց է առաջանում՝ ե՞րբ և որտե՞ղ են գրվել այդ հիշատակարան-հիշատակագրությունները: Ճիշտ է, նրանցից ոչ մեկում որոշակի խոսք չկա դրա մասին, սակայն նրանք բովանդակում են այդ կապակցությամբ օժանդակ որոշ տվյալներ: Այսպես, օրինակ, եթե առաջինում կարդում ենք.

Այլ և գ Գրիգոր մեղաւք լցեալ
եւ արեղայ անուամբ կոչեալ...

ապա հաջորդում Գրիգորն այլևս «արեղայ» չի կոչվում, այլ «վարդապետ» («Գրիգոր վարդապետն»): Ուստի, այդ վերջինն առաջինից այնքան ժամանակով է ուշ գրված, որքան կպահանջվեր արեղայությունից վարդապետություն հասնելու համար (առնվազն մեկ տասնամյակ)²¹: Ըստ այդմ՝ առաջին հիշատակարանը՝ կապված իլաթեցու արեղայություն հետ, հավանաբար գրվել է հենց 1386-1387 թթ., երբ նա եղել է Այրիվանքում և արտագրել է Մխիթար Այրիվանեցու ժողովածուն: Այլ կերպ էլ չէր կարող լինել, որովհետև, ինչպես հասկացվում է նրա հիշատակարանից, ճանապարհորդության նպատակը դա է եղել: Դրանից բացի, Գրիգորը իլաթեցին այն միակ ճանաչված հեղինակն է, որը զբաղվել է հատկապես գանձերի հավաքման, նոր Գանձարան-ժողովածու ստեղծելու ու խմբագրելու գործով:

¹⁹ Ձեռ. հմ. 6529, թերթ 4բ:

²⁰ Եթե պահպանված լիներ լոկ այս տվյալը, ապա նշված ՁԼԵ (1286) թվականին ավելացնելով չափածո հիշատակարանում նշված 100 տարին («Որ յետ Հարիւր ամաց անցեայ»), կատանայինք 1386 թվականը, որը և կլինեիր Գրիգոր իլաթեցու ուղևորության տարին: Սակայն առկա է մեկ տարվա տարբերություն, որը եթե տոմարական հաշիվների հետ չի կապվում, ապա «կլոր հաշիվ» արդյունք է:

²¹ Գրիգոր իլաթեցին վարդապետական աստիճան է ստացել 1390 թվականից հետո՝ Նառատավանքում, Սարգիս Բարունակետից: Տե՛ս Ս. Մարաբյան, Գրիգոր իլաթեցու պատմագիտական երկերը («Պատմա-բանասիրական հանդես», հմ. 2, Երևան, 1977, էջ 128):

Ահա, Գրիգոր իլաթեցու՝ Այրիվանքում ընդօրինակած այդ ձեռագրում է գրվել վերոհիշյալ չափածո հիշատակարանը:

Պետք է նկատել, սակայն, որ այդ հիշատակարանը սկզբում նվիրված է եղել միայն Մխիթար Այրիվանեցուն և Այրիվանքին, իսկ հետո՝ տարիներ անց, շարունակվել է՝ ընդգրկելով նաև 1399 թվականին վերաբերող դեպքերի նկարագրություն.

Ի յոթ Հարիւր Հայոց Թրւհին
Եւ քառասուն և ութ ամին (1399)
Եկեալ աուրքս աշնանային,
Մինչ եղանակն ամառնային...²²:

Նորանալով այս հարցի մեջ՝ տեսնում ենք, որ առ այսօր որպես մեկ ամբողջություն դիտված այս հիշատակարանը, իրոք, բաղկացած է երկու տարբեր մասերից: Սկզբի մասը, որը բուն հիշատակարանն է, գրված է սրտաբուխ, անմիջական տպավորությունների ազդեցությամբ, որպիսին կգրվեր ճանապարհորդությունից անմիջապես հետո և ոչ թե դրանից 12 տարի անց: Չնայած հիշատակարանի երկու մասերը հաջորդությամբ կապակցված են իրար, այնուամենայնիվ, առաջին մասի վերջին տողն ավարտվում է «ամէն» բառով, որը, ինչպես հայտնի է, նաև ավարտ է ազդարարում: Ի վերջո, հիշատակարանի առաջին մասում Գրիգոր իլաթեցին իրեն հիշատակում է միայն արեղայի աստիճանով, մինչդեռ նույն ձեռագրում առկա հիշատակագրություններից վերջինում իրեն կոչում է վարդապետ, որպիսին էր նա հիշատակարանի երկրորդ մասի գրություն ժամանակ:

Հիշյալ նկատառումները մտածել են տալիս, որ հիշատակարանի առաջին մասը գրվել է 1387 թվականին՝ Այրիվանքի ձեռագրից կատարված ընդօրինակության վերջում, որտեղից և հետագայում փոխանցվել է 1399 թվականին իլաթեցու ընդօրինակած մեկ այլ Գանձարանի և վերջից հարստացվել նոր տողերով:

Քանի որ այս հիշատակարանի վերջին մասը, ինչպես և արձակ հիշատակագրություններից մեկը խոսում են Գրիգոր իլաթեցու վարդապետական տարիների մասին և դրանք առկա են մեզ ծանոթ բոլոր կարևոր համարվող ձեռագրերում, ապա այդ ձեռագրերից և ոչ մեկը չի կարող դիտվել որպես Այրիվանքում կատարված ընդօրինակություն: Հետևապես, Գանձարանի նախնական օրինակը կորել է, որի պատճառով էլ գրված ենք ոչ միայն Մխիթար Այրիվանեցու Գանձարանից, այլև անմիջականորեն նրանից կատարված՝ իլաթեցու ընդօրինակությունից: Այս վերջինից կատար-

²² Լ. Նաչիկյան, Ժե դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ա մաս, էջ 286-288:

ված ընդօրինակութունից է, ահա, որ Մխիթար Այրիվանեցու գանձերն ու տաղերը մուտք են գործում Գրիգոր Խլաթեցու խմբագրած ընդհանուր բնույթի Գանձարանները և տարածվում: Դրանց հնագույն օրինակները, ինչպես նկատեցինք, քննության ենթակա հմ. 6529, 4011 ձեռագրերն են, որոնցում առկա տվյալների միջոցով էլ կփորձենք պատկերացում կազմել Մխիթար Այրիվանեցու Գանձարանի մասին:

Գրիգոր Խլաթեցին, նշելով հանդերձ, որոշակի չի խոսում Այրիվանեցու մասին: Այս առումով ուշագրավ է նրա հիշատակագրութունը, ուր թվարկված է հիշյալ ժողովածուում Մխիթար Այրիվանեցու գանձերի և տաղերի քանակը և նշված ժամանակը՝ «ՁԼԵ»: Այն հանգամանքը, որ այդ հիշատակարան-հիշատակագրութուններից և ոչ մեկում չի խոսվում նաև ուրիշների ստեղծագործութունների մասին, համոզում է, որ խոսքը վերաբերում է միայն Մխիթար Այրիվանեցու ստեղծագործութուններին ամփոփող ձեռագրին: Այս կարծիքն ավելի հիմնավորվում է Մխիթար Այրիվանեցու չափածո հիշատակարանով, որը պահպանված է հիշյալ նյութերի շարքում և ընդօրինակված է նույն հիմքից²³: Այն ունի բացառիկ նշանակութուն, որովհետև հեղինակի հիշատակարանն է՝ իր ստեղծագործութունների վերաբերյալ: Իսկ դա էլ վկայում է, որ, իրոք, առկա է եղել ուրույն ձեռագիր՝ Մխիթար Այրիվանեցու գանձերով, տաղերով և նշված հիշատակարանով: Համոզվելու համար դիմենք հիշատակարանի օգնությանը, ուր նկարագրված են ձեռնարկն ստեղծելու որոշ մանրամասնութուններ ու դժվարութուններ.

Ի յախտաժէտ ըստեանց ճընշեալ,
Սպիտակ գինիս այս նոր յայտնեալ,
Տէր Մխիթար ի հոգս անկեալ,
Պրտուղ-պըտուղ գայս հաւաքեալ.
ՅԱստուածաշունչ գրոց առեալ,
Եւ ի բանից սրբոց քաղեալ,
Քան զգումարտակ ի մին շարեալ,
Եւ յեկեղեցոյ կուլըն կախեալ:
Արդ, դուք, որդիք մաւրս այս ընտրեալ,
Որք յետ մեր գայք յարկս այս սըրբեալ.
Զմեզ յիշեցէ՛ք ի յաղաւթեալ,
Գրելով գայս բանքս ի սրբագրեալ: ՁԼԵ (1286)²⁴:

²³ Հմ. 4011, 6529 Գանձարաններից բացի, հիշատակարանը առկա է նաև այդ խմբագրությանը ենթարկված հմ. 3540 և Բրիտանական թանգարանի հմ. 54 Գանձարաններում:

²⁴ Ձեռ. հմ. 6529, թերթ 4բ:

Չնայած հիշատակարանը գրված է երրորդ դեմքով, բայց այն կասկածի չի ենթարկում Մխիթար Այրիվանեցու՝ հիշատակարանի հեղինակ լինելու հանգամանքը: Նախ՝ նրա երեք ընդօրինակութուններում էլ (ձեռ. հմ. 4011, 6529 և 3540) հիշատակարանն ունի խորագիր. «Նորին տեսուն Մխիթարայ ասացեալ», ապա՝ հիշատակարանի առաջին տողերն անպայման հեղինակային խոսք են, որովհետև մեկ ուրիշ անձնավորութուն, իր հեղինակավոր նախորդին դրվատելիս, չէր օգտագործի «ախտաժէտ» (հիվանդոտ) բառը: Միջնադարյան հեղինակներն իրենք էին իրենց կոչում «ախտաժէտ», «սպիկար» և այլն:

Հիշատակարանում Մխիթար Այրիվանեցին գրում է իր հեղինակած գանձերի ստեղծագործական դժվարութունների, Աստվածաշնչից և եկեղեցու քարոզիչների գործերից օգտվելու, առանձին ժողովածու կազմելու և այն եկեղեցուն նվիրաբերելու մասին: Ընթերցողի համար պարզ է դառնում նաև այն, որ հեղինակը խոսում է միայն իր ստեղծագործութուններից բաղկացած Գանձարանի շուրջը:

Ըստ այդմ՝ հավաստի է դառնում, որ Մխիթար Այրիվանեցին անհատական Գանձարան-ժողովածուի հեղինակ է, իսկ Գանձարանն էլ իր թվագրությամբ («ՁԼԵ») հնագույնն է ցայժմ իրենց կառուցվածքով փոքրիչատև Հայտնի դարձող Գանձարաններից:

* * *

Արդ, ի՞նչ կոնկրետ նյութեր է բովանդակել Մխիթար Այրիվանեցու Գանձարանը, և ինչպիսի՞ն է եղել նրա կառուցվածքը՝ գանձարանային նյութերի համակարգի առումով:

Վերևում քննված վկայութունների համաձայն՝ Մխիթար Այրիվանեցու Գանձարանը բաղկացած է եղել 21 գանձից, 2 տաղից և հեղինակային չափածո մեկ հիշատակարանից: Ինչպես տեսանք, այդ նյութերը՝ որպես մեկ ամբողջութուն, համեմատաբար լրիվ են պահպանված հմ. 4011, 6529, ձեռագրերում, ինչպես նաև նրանց խմբին պատկանող մյուս Գանձարաններում: Դրանց մեջ հիմնական կորիզն է հանդիսանում գանձերի այն շարքը, որը շղթայված է մեկ ընդհանուր նախադասութուն կազմող ծայրակապով: Այն, որոշ տարբերութուններով հանդերձ, պահպանված է շուրջ երկու տասնյակի հասնող ձեռագրերում, այնպես որ, այժմ հեշտությամբ կարողանում ենք ճանաչել Մխիթար Այրիվանեցու 21 գանձերից 14-ը, որոնց ծայրակապային շղթան նրանց ներկայացնում է հետևյալ հաջորդականությամբ.

1. «Տէր Մխիթարայ» – Գանձ Աստուածայայտնութեան ճրագալուցին
2. «Վարդայայետի» – Գանձ Պետրոսի Հռոմայ Հայրապետին և Աբիսոն դոմայ սարկաւազին

3. «Բայիւ երգել» – Գանձ սրբոյն Անտոնի անապատական ճգնաւորին
4. «Հինգոտասան» – Գանձ համաւրէն թագաւորաց
5. «Բան քարոզից» – Գանձ Սրբոց Թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ
6. «Այրիվանեցի» – Գանձ սրբոց Հայրապետացն երեք ժողովոյն
7. «Երեւանեցին» – Գանձ Բուն Բարեկենդանին
8. «Հայցէ սիրով» – Գանձ Մաղկազարդին
9. «Զպակասորդք» – Գանձ Ավագ Հինգշաբաթին
10. «Տերունական» – Գանձ թաղման ճրագալուցին
11. «Վկայականաց» – Գանձ Սրբոց Հոփսիմեանց
12. «Տաւնից ասել» – Գանձ որդոց և թոռանց Սրբոյն Գրիգորի Հայրապետի
13. «Սորհրդոցն» – Գանձ համաւրէն մարգարէիցն
14. «Ի փառս Տեառն» – Գանձ համաւրէն կուսանաց և մարտիրոսաց:

Գանձերի այս խումբը ոչ թե գանձերի խառը հավաքածու է, այլ տոնական դասավորութիւն ունեցող մի ամբողջական շարք: Այստեղ ևս, ինչպես և Տոնացուցում, տոնական շարքն սկսվում է «Աստուածայայտութեան ճրագալուցին» տոնով, որին հաջորդում են մեկ միասնութիւն կազմող ծայրակապային շղթայի մյուս գանձերը՝ չխախտելով տոնական կարգը: Ծայրակապային երկրորդ նախադասութիւնում հեղինակը Հայտնում է, որ իր գանձերի այդ խումբը չի ընդգրկում տերունական, վկաների և սրբերի բոլոր տոնները, այլ՝ կա՛մ լրացնում է դրանց պակասը և կա՛մ պակաս է թողնում դրանք՝ խնդրելով լրացնել: Ուստի, բնականաբար, ձեռագրերում Մխիթար Այրիվանեցու գանձերի միջև, տոնական հաջորդականութեամբ պետք է Հայտնվեին նորանոր գանձեր՝ չխախտելով, սակայն, Մխիթար Այրիվանեցու գանձերի տոնական շարքը: Եվ իսկապես, մենք այդ տեսնում ենք նրանից հետո մեզ հասած ինչպես հին, այնպես և նոր շրջանի համարյա բոլոր Գանձարաններում: Համոզվելու համար բավական կլինեն հետևել Հմ. 4011 ձեռագրի նկարագրութեան մեջ նշված այդ գանձերի խորագրերին, որոնք միմյանց են հաջորդում տոնական հետևյալ կարգով. «Աստուածայայտութեան ճրագալուցին», «Առաջին աւուր ծննդեանն Բրիստոսի Աստուծոյ մերոյ...» և այլն:

Այսպիսով, մեզ համար պարզ է դառնում, որ Մխիթար Այրիվանեցու ինքնագիր Գանձարանն սկսվել է ընդհանուր ծայրակապ ունեցող 15 գանձանոց շարքով, որը գլխավորել է «Աստուածայայտութեան ճրագալուցին» տոնը: Հայտնի է նաև Գանձարանի վերջին նյութը. դա նրա չափածո հիշատակարանն է, որը նույնպես պահպանվել և հասել է մեզ: Այժմ մնում է պարզել, թե որոնք են Մխիթար Այրիվանեցու Գանձարանի մյուս 7 գանձերը,

որոնցով գանձերի քանակը կդառնար 21 և կհամապատասխաներ Գրիգոր Խլաթեցու հաղորդած տվյալներին:

Վերևում քննված ձեռագրային շարքերը մեզ, որպես այդպիսի միավորներ, ներկայացրին 4 գանձ՝ հետևյալ ծայրակապերով.

1. (15) «Մերգան» – Գանձ ապաշխարութեան
2. (16) «Վէշտասանք է» – Գանձ համաւրէն Հայրապետաց Սրբոց
3. (17) «Ճգնաւորք» – Գանձ Սրբոց ճգնաւորացն
4. (18) «Սարգիս գրիչ» – Գանձ Առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի:

Այս գանձերից բացի, սակավաթիվ Գանձարաններում հանդիպում են Մխիթար Այրիվանեցու հետևյալ երեք նորահայտ գանձերը ևս, որոնցով ծայրակապերի ընդհանուր շարքից դուրս մնացող և մեզ Հայտնի գանձերի թիվը դառնում է 7 միավոր.

1. (19) «Կիրակէ» – Գանձ Յարութեան
2. (20) «Տէր Մխիթար վ» – Գանձ երրորդ աւուրն գալըստեան Հոգոյ և աւրհնութիւն ձիթոյ
3. (21) «Տէր Մխիթարա» – Գանձ նորակերտ գրոց աւրհնելոց է:

Նշվածներից «Մերգան» ծայրակապը կրող «Վեցերորդ կիրակէին» գանձը հաստատապես Մխիթար Այրիվանեցու հեղինակութեանը դիտելու համար պահանջվում է լրացուցիչ բացատրութիւն: Այն Գանձարանների մեծ մասում անհեղինակ է, սակայն ճանաչված որպես Մխիթար Այրիվանեցու բանաստեղծութիւն: Նման Գանձարաններում Մխիթար Այրիվանեցու անունը, որպես հեղինակի, հիշատակված է ցանկում կամ գանձի տողատակում (ձեռ. Հմ. 424, 2736 և այլն): Բայց նույն «Ապաշխարութեան» գանձը Մաշտոցի անվան Մատենադարանի Հմ. 3540 (1408 թվական)²⁵, Արմաշի վանքի Հմ. 217²⁶ (XVI-XVII դարեր), Բրիտանական թանգարանի Հմ. 54²⁷ (1412 թվական) ձեռագրերում վերագրված է Արիստակեսին՝ «Գանձ ապաշխարութեան յԱրիստակեսէ»: Ընդ որում, վերջին երկուսում Արիստակեսը հիշատակված է որպես «երեց», իսկ «Մերգան» ծայրակապը դիտվել է իբրև հատուկ անուն և գրանցվել անձնանունների ցանկում:

Առ այսօր բանասիրութեանը Հայտնի է Գանձարանների և Մաշտոցների մեջ մտած Արիստակես անունով միայն մեկ հեղինակ-ողբասաց, որն ապրել է XVI դարից առաջ: Այս հեղինակից պահպանվել է «Ողբ մեռելի» կամ «Տաղ ննջեցելոց» միակ ստեղծագործութիւնը՝ բավական շատ ընդօրինակված Մաշտոցներում և Գանձարաններում: Ողբի ծայրակապը հոգում է

²⁵ Ձեռ. 3540, թերթ 93ա:

²⁶ Հ. Թոփճեան, Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, 1962, էջ 437:

²⁷ St' u Conybeare Fr., A Catalogue of the Armenian Manuscripts of the British Museum, London, 1913, p. 119:

«Երգ Արիստակեսի»²⁸: Հավանական է, որ «Ապաշխարութեան» գանձի Հեղինակ Հիշատակվող Արիստակեսը նույնն է այս Արիստակեսի Հետ: Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, նրա՝ որպես «Ապաշխարութեան» գանձի Հեղինակի մասին եղած նշումն էլ արդյունք է ընդօրինակման ժամանակ թույլ տրված սխալի: «Ապաշխարութեան» գանձի Հնագույն օրինակի Հանդիպում ենք Հմ. 4011 Գանձարանում՝ «Գանձ վեցերորդ կիրակէին» խորագրով, առանց Հեղինակի անվան Հիշատակման: Պետք է նկատել, որ նույն Գանձարանում այս կերպ են ընդօրինակված նաև Մխիթար Այրիվանեցու մնացյալ գանձերը, բացառյալ երկուսի: Իսկ Արիստակեսին գանձի Հեղինակ Հիշատակող նշված երեք աղբյուրներից Հնագույնը Հմ. 3540 Գանձարանն է, որի Հիմքում, ինչպես վերևում ասացինք, ընկած է Հմ. 4011 Գանձարանը: Նշանակում է, Հմ. 3540 ձեռագրի գրիչը ձեռքի տակ ունեցել է Հմ. 4011-ից բացի այլ, մեզ անհայտ աղբյուր: Այդ է վկայում նաև Հետևյալ Հանգամանքը. Հմ. 3540 Գանձարանում այս գանձն ընդօրինակված է երկու անգամ՝ սկզբում՝ «Գանձ ապաշխարութեան յԱրիստակիսէ» խորագրով, ապա, ինչպես Հմ. 4011-ում՝ «Գանձ վեցերորդ կիրակէին»:

Գրիչը, օգտվելով երկու տարբեր աղբյուրներից, նկատել է, որ տարբեր խորագրերի տակ կրկնվում է նույն գանձը և բավարարվել է միայն վերջինում նշելով սկզբնատողը: Հնարավոր է կարծել, որ այդտեղ տեղի է ունեցել ինչ-որ շփոթմունք, մանավանդ որ Արիստակեսին գանձի Հեղինակ ճանաչող մյուս աղբյուրը Բրիտանական թանգարանի Հմ. 54 ձեռագիր Գանձարանն է (1412 թ.) և Հանդիսանում է նույն Հմ. 3540 Գանձարանի կրկնօրինակությունը²⁹: Ինչպես Հայտնում է Հմ. 54 Գանձարանի գրիչ Վրթանես արեղան: ձեռագիրն ընդօրինակվել է Արծրունյաց գավառի Կոճերաց վանքում «...առ ոտս տէր Հովհաննէս վարդապետի», որը, Հավանաբար, Հմ. 3540 ձեռագրի գրիչ Հովհաննէսն է: Դասելով երկու ձեռագրերի բովանդակությունն նույնությունից և զրանց ընդօրինակման ժամանակաշրջանից՝ կարելի է ասել, որ Հմ. 3540 ձեռագիրն է Հիմք Հանդիսացել Բրիտանական թանգարանի Հմ. 54 Գանձարանի Համար³⁰: Նշված գանձը Մխիթար Այրի-

վանեցու ստեղծագործությունների թվում դասելու Համար կարևորություն է ներկայացնում այդ գանձի տաղաչափական, ոճական և լեզվական կողմերի ակնառու նույնությունը Մխիթար Այրիվանեցու այլ գանձերի Հետ: Որպեսզի պատկերն ափելի պարզ լինի, Համեմատենք «Ապաշխարութեան» գանձի երկու Հատվածները Մխիթար Այրիվանեցու տարբեր գանձերից վերցված Հատվածների Հետ:

<p>Գանձ ապաշխարութեան</p> <p>Բարուն փայլեցեր, Աւրէնս ուսուցէր, Պահօք պընտեցեր:</p> <p>Նոր աթոռ փառաց, Նոր երկին բարձանց, Նոր արփի վառած:</p> <p>(Ձեռ. Հմ. 424, թերթ 79բ, 80բ)</p>	<p>Գանձ առաքելոցն Պետրոսի և Պաղոսի</p> <p>Բարուն փայլեցեր, Չփառս բո ցուցէր, Չոր պատրաստեցեր:</p> <p>(Ձեռ. Հմ. 3540, թերթ 29բ)</p> <p>Գանձ Զատկի ճրագալուցին</p> <p>Նոր լուսով վառեալ, Նոր զարդ պըճնեալ, Նոր երգ պար առեալ:</p> <p>(Ձեռ. Հմ. 424, թերթ 128բ)</p> <p>Գանձ որդոց և թոռանց Սրբոյն Գրիգորի</p> <p>Նոր թագ պետական, Նոր զահ աննման, Նոր քեզ Հարսնարան:</p> <p>(Ձեռ. Հմ. 3540, թերթ 229ա)</p>
--	---

Նկատենք, որ Մխիթար Այրիվանեցու 21 գանձերից 19-ը գրված են այս նույն յամբ-անապետյան 5-վանկանի ոտքերով:

Բերված Համեմատությունն իսկ իրավունք է տալիս Մխիթար Այրիվանեցուն ճանաչելու իբրև սույն գանձի Հեղինակ: Գանձի «Մերզան» ծայրակապը մնում է անբացատրելի:

«Կիրակէ» ծայրակապով գանձը նվիրված է «Յարութեան» տոնին, որը երգվելու էր կիրակի օրը: Այդ էլ մատնանշում է գանձի «Կիրակէ» ծայրակապը: Այն մեզ Հայտնի է միայն Տերտեր Երևանցու 1341 թվականին Կաֆայում ընդօրինակված ձառընտրից³¹ (գրված Մխիթար Այրիվանեցու մահից մոտավորապես 40 տարի Հետո) և Հմ. 7785 Գանձարանից³²: Երկու գրչագրերում էլ գանձի խորագիրն է «Քարոց Յարութեան Քրիստոսի, ի

²⁸ Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանում» (Հատ. 1, Երևան, 1942, էջ 281) այս Արիստակեսը իր միակ ստեղծագործությունը ներկայացված է որպես կրեք տարբեր անձեր: Այնտեղ կարդում ենք. «22. Արիստակես վրդ. տաղասաց ունի գանազան տաղեր (ժև դա՞ր). տե՛ս Տաշեան, Յուզյակ 1065ա: - ...Կա և Արիստակես, որ գրել է Ողբ Մեսիխի (Ձեռ. Դաղեան, Ա., 48): 23. Արիստակես գանձասաց, իր գանձերից մեկը տե՛ս ձեռ. Դաղեան, Ա., 25ա...»: Հ. Աճառյանի նշած աղբյուրներում Հիշատակվում է նույն Արիստակեսը՝ «Ողբ մեսիխի» ստեղծագործության մասին:

²⁹ Նկատի չունենք Հմ. 3540 ձեռագրի առաջին պրակը (էջ 1-10), որը XVII դարի Տաղարանի պատահիկ է:

³⁰ Երկու ձեռագրերում Մխիթար Այրիվանեցուն վերաբերող նյութերը Համապատասխանում են միմյանց թե՛ տոնների շարքով, թե՛ քանակով: Խախտված է միայն Հմ. 54 ձեռագրում «Մերզան» ծայրակապով «Ապաշխարութեան» գանձի տեղը:

³¹ Ձեռ. Հմ. 8030, թերթ 363բ-366բ:
³² Ձեռ. Հմ. 7785, թերթ 280բ-283բ:

Մխիթարայ վարդապետէ»: Ձեռ. Հմ. 7785-ում այս գանձի հետ ընդօրինակված է Մխիթար Այրիվանեցուց ևս 12 գանձ, որոնցից 9-ի խորագրերում հեղինակը հիշատակվում է «ի Մխիթարա վարդապետէ» ձևով:

«Տէր Մխիթար վ» ծայրակապով «Երրորդ աւուրն գալըստեան Հոգոյ է և աւրհնութիւն ձիթոյ» գանձն ամբողջութեամբ հանդիպում է Հմ. 4844 Գանձարանում³³, իսկ սկսած երկրորդ տնից՝ «Գանձ ձեռնադրութեան» վերնագրով (սկ. «Մինչ ի յերից անձանց անհիւթոյ...»), կա Հմ. 3555 ձեռագրում³⁴: Այս վերջին օրինակը Վիեննայի Հմ. 888 ձեռագրում ներկայացված է որպես տաղ³⁵: Գանձը իր բովանդակությամբ կարող է օգտագործվել միաժամանակ և՛ Գանձարաններում տերունական «Հոգոյ գալըստեան» տոնի, և՛ Մաշտոցներում՝ ձեթ օրհնելու և ձեռնադրութեան արարողությունների ժամանակ:

«Տէր Մխիթարա» ծայրակապը կրում է «Նորակերտ գրոց աւրհնելոց» գանձը, որը ամբողջությամբ պահպանված է Մատենադարանի Հմ. 4844 Գանձարանում: Այն նշված է նաև Հմ. 3555 ձեռագրի ցանկում, սակայն բնագիրը չի պահպանվել՝ ձեռագրից թերթեր ընկած լինելու պատճառով: Գանձը իր բովանդակությամբ մաշտոցային է և գրված է հատուկ Մաշտոցի մեջ մտնող «Կանոն աւրհնութեան նորակերտ գրոցի» համար:

Նշված յոթ գանձերից առաջին 4-ը ձեռագրերում համարյա ամենուր հանդիպում են ծայրակապերի հիշյալ շարքի հետ միասին և իրենց ընդգրկած տոներով կոչված են կարծես լրացնելու հիմնական խումբը:

Այսպիսով, ծայրակապերի ընդհանուր շարքից դուրս գանձերի թիվը դառնում է 7 միավոր, որով էլ Գանձարաններում Մխիթար Այրիվանեցու անունով հայտնի գանձերը հավասարվում են 21-ի: Բայց արդյո՞ք հենց այդ 21 գանձերն են տեղ գտել Մխիթար Այրիվանեցու Գանձարանում: Այս հարցի քննությունը կանդրադառնանք ստորև՝ Մխիթար Այրիվանեցու Գանձարանի կազմավորման տեղի և ժամանակի խնդիրները շուրջ խոսելիս:

Ինչպես հայտնի է, Մխիթար Այրիվանեցին 1280-ական թթ. զբաղեցրել է Այրիվանքի արքեպիսկոպոսի աստիճանը: Գանձարանն էլ նա, հավանաբար, գրել է Այրիվանքում կատարվող եկեղեցական արարողությունների համար: Այս կապակցությամբ որոշ տողեր կան «Համաւերէն ճգնաւորաց» գանձում, ուր բանաստեղծը հիշատակում է իրենց տաճարում աղոթող իշխանին և նրա զավակներին.

Մեր նախագահի,
Տէր և արքայի
Քոյոց ծառայի.
Մերոյս իշխանի,
Իւրոց զաւակի
Եւ հարագատի,
Որք յայս տաճարի
Էն ի յաղաւթի
Յամենայն տեղի³⁶:

Կարծում ենք, որ Մխիթար Այրիվանեցին նկատի է ունեցել Պոռչ իշխանին, որովհետև նրան հաջորդող Պապաք իշխանը (Պոռչ իշխանի որդին) զավակներ չունենր³⁷: «Տաճար» հասկացությունը տակ, ամենայն հավանականությամբ, պետք է հասկանալ Այրիվանքը, որը ծաղկում էր ապրում հատկապես այդ շրջանում, հանդիսանում էր Պոռչյանների իշխանության հոգևոր կենտրոններից նշանավորը և վայելում էր մեծ իշխանի սերն ու հովանավորությունը:

Մխիթար Այրիվանեցու գանձերի թվականի շուրջը դարձյալ ուղղակի տվյալներ չունենք, սակայն նրա հիշատակարանից պահպանվել է վերևում քանիցս հանդիպող «ՉԼԵ» թվականը, որը ցարդ դիտված է որպես Մխիթար Այրիվանեցու Գանձարանի ավարտման թվական: Հարց է առաջանում. արդյո՞ք այն չի վերաբերում նաև գեթ այն գանձերի ստեղծման ժամանակին, որոնք ծայրակապով շղթայված են միմյանց, ուստի և գրված են միևնույն ժամանակամիջոցում: Այս առումով ուշագրավ է այն հիշատակագրությունը, որն ասում է. «Տէր Մխիթարն ՉԼԵ թըւին ասացեալ էր իւր բանսն»: Դա, ըստ էության, խոսում է գանձերի ստեղծման ժամանակի մասին: Փաստերը հիմք են տալիս հավաստի համարել նաև այս տվյալը: Այսպես, օրինակ, Մխիթար Այրիվանեցու հիմնական գանձաշարքի «Սրբոց հայրապետացն երեք ժողովոյն» գանձում հիշատակվում են Լևոն թագավորի և Հակոբ կաթողիկոսի անունները.

Մագումն եղջերին,
Մերում Լևոնին,
Փառք տեսուն Յակորին³⁸:

³³ Ձեռ. Հմ. 4844, թերթ 139-141բ:

³⁴ Ձեռ. Հմ. 3555, թերթ 2:

³⁵ Հ. Ոսկյան, Ցուցակ Հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, Հատ. Բ, Վիեննա, 1963, էջ 469ա:

³⁶ Ձեռ. 4068, թերթ 219ա:

³⁷ Գ. Հովսեփյան, Խաղրակիսանք կամ Պոռչեանք հայոց պատմութեան մէջ, էջ 76:

³⁸ Ձեռ. Հմ. 4068, թերթ 299բ:

Վերջինս անպայման Հակոբ Ա Կլայեցիին է (1268-1286թթ.), որի կաթողիկոսութիւնն տարինները համապատասխանում են Լևոն Բ թագաւորի գահակալման տարիներին (1276-1289թթ.): Հետեապես, այդ գանձի ժամանակը պետք է որոնել 1276-1286թթ. միջև: Եվ քանի որ արդեն մի ուրիշ վկայութիւն ունենք 1286 թվականի օգոստիս, ուստի այս գանձը գրված է 1286-ին:

Նույն անձանց անունները հիշատակված են նաև «Գանձ համալրէն թագաւորացում»³⁹ նորից հաստատելով նույն կարծիքը:

Ուշագրավ է սակայն, որ ծայրակապային շարքի մեկ այլ միավորում՝ «Մննդյան ճրագալուցին» գանձում, Մխիթար Այրիվանեցիին հիշատակում է արդեն Կոստանդին կաթողիկոսին:

Չարդ փառաց շնորհեա,
Տէրն Կոստանդեա,
Հոգով զարդարեա⁴⁰:

Հեղինակն այստեղ նկատի ունի կա՛մ Կոստանդին Ա Բարձրբերդցուն (1221-1267թթ.), կա՛մ Կոստանդին Կատուկեցուն (1286-1289թթ.): Քանի որ այս գանձը գլխավորում է ծայրակապային շղթան (որում առկա գանձերը գրված են միանգամից և նույն տարում) և այստեղ էլ առկա են առաջին երկու գանձերը՝ գրված 1276 թվականից հետո, գտնում ենք, որ գանձում հիշատակված Կոստանդինը անպայման Կատուկեցին է:

Արդ, ինչպե՞ս բացատրել միևնույն գանձաշարքում երկու տարբեր կաթողիկոսների հիշատակման հարցը: Եղած հակասութիւնը հարթվում է, երբ նկատի ենք առնում, որ Կոստանդին Կատուկեցին Հակոբ Կլայեցուն հաջորդել է նույն 1286 թվականին: Անկախ այստեղ առկա բացատրութեան կարոտ որոշ մանրամասնութիւններից, կարող ենք ասել, որ 1286 (ՉԼԵ) թվականը վերաբերում է նաև գանձերի հորինման ժամանակին:

Այսպիսով, եթե Հեղինակի վերջաբան-չափածո հիշատակարանից հետո գրված «ՉԼԵ» թվականը ազդարարում է Գանձարանի ավարտը, իսկ Գանձարանի առաջին «Մննդյան ճրագալուցին» գանձն էլ գրված է նույն թվականին, ապա այդ նույն ժամանակ գրված պետք է լինեին նաև այն գանձերը, որոնք գետեղված են եղել նշված գանձի և հիշատակարանի միջև:

Հնարավոր է, որ այդ թվականին են գրվել նաև գանձերի հիմնական խմբի հետ միասին հանդիպող, վերևում նշված չորս գանձերը: Սակայն այդ նույնը չենք կարող ասել Մխիթար Այրիվանեցու երեք նորահայտ գանձերի («Գանձ Յարութեան», «Գանձ նորակերտ գրոց աւրհնելոց է», «Երրորդ

³⁹ Նույն տեղում, թերթ 294բ:

⁴⁰ Ձեռ. Հմ. 424, թերթ 20բ:

աւուրն գալստեան Հոգոյ և աւրհնութիւն ձիթոյ») վերաբերյալ, քանի որ նրանցից վերջինում Մխիթար Այրիվանեցիին հիշատակում է Ստեփանոս Օրբելյանի հորեղբայր իշխան Սմբատ Օրբելյանին:

«ՁՍմբատ իշխանն մեր Աւրպելեան,
Յաղթող արա խաչին քո անուան...»⁴¹:

Հայտնի է, որ Սմբատ Օրբելյանը իշխել է 1253-1273թթ., ուրեմն գանձը գրված պետք է լինի այդ ընթացքում, այսինքն՝ ավելի վաղ, քան 1286 թվականը: Հետևաբար, հնարավոր է մտածել, որ դա ևս կարող էր լինել Մխիթար Այրիվանեցու Գանձարանում, որովհետև գրված է նրա ստեղծումից առաջ:

Մյուս երկու գանձերի գրութեան ժամանակի մասին առայժմ որոշակի կարծիք հայտնել չենք կարող, չնայած կարելի է ենթադրել, որ դրանք ևս գրվել են մինչև 1286 թվականը և գտնվել են քննվող Գանձարանի կազմում: Մասնավորապես որ վերջին երկուսը Գանձարան են մուտք գործել Գրիգոր Խլաթեցու՝ Այրիվանեցի ճանապարհորդութիւնից հետո:

Նշված 21 գանձերն էլ, հավանաբար, ներկայացնում են այն ստեղծագործութիւնները, որոնք եղել են Մխիթար Այրիվանեցու անհատական ժողովածուում և որոնց մասին հիշատակում է Գրիգոր Խլաթեցին իր հիշատակարանում:

Անդրադառնանք Մխիթար Այրիվանեցու Հեղինակած տաղերին:

Վերևում խոսվեց այն մասին, որ, Գրիգոր Խլաթեցու հաղորդման համաձայն, Մխիթար Այրիվանեցու Գանձարանում եղել է երկու երգ: Դրանք նշված երեք Գանձարաններում (Հմ. 6529, 4011, 3540) տեղ գտած օրհնութեան երգեր են, որոնք Հմ. 6529 ձեռագրի հիման վրա հրատարակել է Գ. Հովսեփյանը՝ ներկայացնելով իբրև գանձեր: Ահա նրանց խորագրերը, սկզբնատողերն ու ծայրակապերը.

1. Տէր Մխիթարայ ասացեալ վասն պատկերաց սրբոց – Մին միածին Հաւր Որդի... («Մխիթար»),
2. Նորին տեառն Մխիթարայ հոգելի և բանիբուն վարդայպետի ասացեալ վասն աւրհնութեան նորակերտ գրոց – Մեծապայծառ ցրն-ծուկեամբ... («Մխիթար»):

Սրանցից բացի, ձեռագրերից մեզ հայտնի դարձան նրան պատկանող ևս երկու տաղեր.

3. Տէր Մխիթարայ Այրիվանեցոյ – Արքայն երկնից խոնարհեալ... («Ա-Ք»):

⁴¹ Մատենադարան, ձեռ. Հմ. 5366, թերթ 4ա-5բ, ձեռ. Հմ. 7097, թերթ 136բ-138ա:

4. **Տաղ փոխման սուրբ Աստուածածնի ի Մխիթար վարդապետէ – Սուրբ Աստուածածնին կուսին...**

Առաջին տաղը մեզ Հայտնի է Մատենադարանի Հմ. 8366, 7097 և Ջմմառի վանքի Հմ. 85 ձեռագրերից: Հմ. 8366, 7097 ձեռագրերում⁴² յուրաքանչյուր երկու տողից հետո այն ունի օտար կրկնակ (պարսկերեն և թուրքերեն լեզուներով)՝ հայերեն տողերի հյուսմամբ:

Պարսկերեն	Թուրքերեն
Փի[դ]ար ի փսար ջա[ն],	Աթայ աղլան ջան առի,
Հայր և Որդի, Հոգի [Սուրբ],	Հայր, Որդի, Հոգի Սուրբ.
Յիսէ ի փսարի խուղայ.	Յիսէ աղլան ի թանդրի,
Յիսուս, Որդի Աստուծոյ:	Յիսուս, Որդի Աստուծոյ:

Ջմմառի վանքի Հմ. 85 ձեռագրում տաղն ազատ է օտար տողերից⁴³: Այս հանգամանքը (նաև գրականությունից Հայտնի նման օրինակներ)⁴⁴ վկայում են, որ պարսկերեն և թուրքերեն կրկնակները տաղին կցվել են հետագայում և հեղինակի հետ կապ չունեն:

Դատելով բովանդակությունից, ուր գովերգվում է Քրիստոսի ծնունդը՝ հնարավոր է կարծել, որ տաղը գրվել է Մանդյան որևէ գանձի համար: Այս տաղին առաջին անգամ հանդիպում ենք Գրիգոր Նյախեցու վաղ շրջանի Հմ. 8366 գրչագրում: Ենթադրելի է, որ այն եղել է Մխիթար Այրիվանեցու Գանձարանում, որին նախապես ծանոթ լինելով՝ Գրիգոր Նյախեցին չի ընդօրինակել, ուստի և այն դուրս է մնացել նրա՝ վերոնշյալ խմբագրություններից:

Հաջորդ տաղի (4-րդ) հնագույն օրինակը Հմ. 4011 Գանձարանն է: Այստեղ տաղը կազմված է 4 տնից: Հետագա ձեռագրերում այն հանդիպում է ընդօրինակված նաև 14 տնով: Ուշագրավ է, որ Հմ. 3540, 425 Գանձարաններում տաղի չորրորդ տնից հետո գրված է. «Յորդորակ ի Գրիգոր վարդապետէ»⁴⁵, իսկ Մատենադարանի Հմ. 5951⁴⁶ և Արմաշի վանքի Հմ. 219 ձե-

ռագրերում⁴⁷, դարձյալ չորրորդ տնից հետո, որոշակիորեն Գրիգորը ներկայացված է որպես հեղինակ՝ «Գրիգոր է սա»: Գրիգոր Նյախեցու ինքնագրով մեզ հասած Հմ. 5328 ձեռագրում տաղի երկրորդ մասի մոտ կարդում ենք «փոխէ ձայնն»⁴⁸, որը վկայում է, որ տաղի երկու մասերը երգվել են տարբեր եղանակներով: Այս նշումներն անկասկած են դարձնում տաղի՝ երկու տարբեր հեղինակների պատկանելի: Քննությունը ցույց է տալիս, որ առաջին չորս տան հեղինակն է Մխիթար Այրիվանեցին, իսկ շարունակությունը կազմող 10 տների հեղինակը՝ Գրիգորը: Վերջինս, ամենայն հավանականությամբ, Նյախեցին է, որի միջամտությունը Մխիթար Այրիվանեցու գանձերին և տաղերին, ինչպես կտեսնենք ստորև, բացառված երևույթ չէ:

Մխիթար Այրիվանեցու այս տաղը իր ներկա վիճակով ծայրակապ չունի: Նրանից մեզ Հայտնի չէ տաղին համապատասխան դանձ: Աստվածածնին նվիրված տաղը, ինչպես նշեցինք, առաջինը հանդիպում ենք Գրիգոր Նյախեցու՝ Այրիվանեցից հետո խմբագրած Հմ. 4011 Գանձարանում, որտեղից էլ եզրակացնում ենք, որ այն փոխառված է Մխիթար Այրիվանեցու անհատական Գանձարանից:

Այս չորս տաղերից բացի, Մխիթար Այրիվանեցու հեղինակությանն է վերագրված նաև «Տաղ ծննդեան Յիսուսի Քրիստոսի» բանաստեղծությունը, որը Գանձարաններում հանդիպում է անհեղինակ: Սակայն Արմաշի վանքի Հմ. 219 ձեռագրում այն համարված է Տեր Մխիթարի գործ. «Տաղ Ա. Աստուածածնին ի տէր Մխիթարայ»⁴⁹ (սկզբ. – «Աստուածածին մայր լուսոյ»): Տաղի ծայրակապը կազմում են այբուբենի «Ա-ժ» տառերը: Ուշագրավ է, որ նույն ձեռագրում այս տաղին հաջորդում է Մխիթար Այրիվանեցու «Ս. Աստուածածին կուսին...» տաղի երկրորդ կեսը՝ իբրև հորդորակ «Գրիգորի է սա» նշումով: Նույն տաղը Մատենադարանի Հմ. 423 ձեռագրում վերագրված է Արիկ Կոստանդինին՝ «Տաղ ի Արիկ Կոստանդնայ»⁵⁰: Տաղի հեղինակային հարցը ճշտելու համար մեզ պակասում են մատենագիտական տեղեկություններ:

Ջմմառի վանքի XVI-XVII դդ. Հմ. 82 ձեռագրում պահպանվող «Մեղայ Քեզ Քրիստոս Աստուած ապաւէն...» սկզբնատողով ապաշխարության տաղին կցված է կաֆա, ըստ որի՝ տաղի հեղինակ պետք է լինի Մխիթար Այրիվանեցին:

«Տաղ ասացեալ Մխիթարի,
Այրիվանաց առաջնորդի,

⁴² Ձեռ. Հմ. 8366, թերթ 4ա-5բ, ձեռ. Հմ. 7097, թերթ 136բ-138ա:
⁴³ Մ. Քեչիչյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Ջմմառի վանքի, Վիեննա, 1964, էջ 167:
⁴⁴ Այսպիսի օրինակ է հիշեցնում Գրիգոր Նարեկացու «Գոհար վարդն վառ առեալ...» տաղի նմանութեամբ գրված «Աստուածածին» երգը: Այն ունի հետևյալ օտար կրկնակը.
 Թուրանանի գանթէ,
 Թուրանանի գանթէ,
 Ջանթէ թէ գանթէ
 (Ձեռ. Հմ. 3595, թերթ 61բ):
⁴⁵ Ձեռ. Հմ. 3540, թերթ 243բ, ձեռ. Հմ. 425, թերթ 304բ:
⁴⁶ Մատենադարան, ձեռ. Հմ. 5951, թերթ 315բ:

⁴⁷ Հ. Թոփճեան, Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, էջ 444:
⁴⁸ Ձեռ. Հմ. 5328, թերթ 251ա:
⁴⁹ Հ. Թոփճեան, Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, էջ 444:
⁵⁰ Ձեռ. Հմ. 423, թերթ 221ա:

Աստուածարան վարդապետի.
Որ մականուամբն Գոշ կոչի...» և այլն⁵¹:

Այստեղ Մխիթար Այրիվանեցին շփոթված է Մխիթար Գոշի հետ: Փաստորեն, դարձյալ գործ ունենք նույն կաֆայի հետ, որը կցված է Մխիթար Այրիվանեցու «Ապաշխարութեան» գանձին (տե՛ս վերևում): Տարբերությունը միայն նրանում է, որ «գանձ» բառն այստեղ փոխարինված է «տաղով»: Այս երևույթը բացատրում ենք հետևյալ կերպ: Ուշ շրջանի Գանձարաններից մեկում (Զմմառի վանքի հմ. 81 ձեռագիր) Մխիթար Այրիվանեցու «Ապաշխարութեան» գանձին հաջորդում է նշված համանուն տալը՝ սկզբում ունենալով գանձի համար գրված կաֆան⁵²: Ըստ երևույթին, Մխիթար Այրիվանեցու «Ապաշխարութեան» այդ գանձին հետագայում կցվել է համապատասխան տաղ, իսկ հետո անջատվել նրանից՝ վերցնելով նրա հեղինակի անունը: Այդպիսի ենթադրություն հիմք է տալիս, օրինակ, Զմմառի վանքի վերոնշյալ հմ. 81 Գանձարանը: Այստեղ նշված գանձն ու տաղը երևան են դալիս միասին՝ որպես երգային մի ամբողջություն՝ սկզբից ունենալով գանձին համապատասխան կաֆա: Ահա այդ կամ նման մի ուրիշ ձեռագրից է, հավանաբար, օգտվել հմ. 82 ձեռագրի գրիչը իր Տաղարանը կազմելիս՝ վերցնելով միայն տաղը և կաֆան՝ մասնակի փոփոխությամբ:

Անշուշտ, հնարավոր կլինեն կարծել, թե հենց սկզբից էլ այդ տաղը նշված գանձի մասն է եղել՝ գրված Մխիթար Այրիվանեցու ձեռքով, եթե տաղը չունենար ավելի ուշ ժամանակների պատկանելու տվյալներ: Մեզ այնպես է թվում, որ նրա հեղինակը Մխիթար Մեղրեցին է, որովհետև այն զգալի նմանություն ունի նրա «Մարախյորեն շուրջանակի» սկզբնատողով և «Մխիթար» ծայրակապով տաղի հետ: Այս առումով ուշագրավ է, որ Մատենադարանի հմ. 7717 ձեռագրում (թերթ 89բ) այդ երկու տաղերը հաջորդում են միմյանց: Ընդ որում «Մարախյորեն շուրջանակի...» տաղի հեղինակային պատկանելության հարցում սխալ է թույլ տվել Լ. Ոսկյանը, որն այն վերագրել է Մխիթար Այրիվանեցուն⁵³: Ձեռագրերի ուսումնասիրությունը պարզում է, որ Մխիթար Մեղրեցին է և՛ այդ, և՛ մի քանի ուրիշ տաղերի հեղինակը⁵⁴:

Այսպիսով, հայտնի է դառնում, որ Մխիթար Այրիվանեցու անհատական Գանձարանում եղել են և՛ գանձեր, և՛ տաղեր:

Այժմ, երբ ունենք բավարար տեղեկություններ նրա Գանձարանի բովանդակության մասին, կարող ենք անդրադառնալ Մխիթար Այրիվանեցու գանձերի և տաղերի հարաբերությանը՝ գանձարանային համակարգի առումով, որը և ցույց կտա նրա Գանձարանի բնույթը:

Ինչպես հայտնի է, Գանձարան-ժողովածուներն իրենց վերջնական տեսքը ստանալուց առաջ անցել են զարգացման երկար ուղի, որը մինչև օրս ուսումնասիրված չէ: Հայտնի է միայն, որ նախնական շրջանից հետո Գրիգոր Նլախեցու խմբագրությունը ստեղծվեցին որոշակի համակարգ ունեցող Գանձարաններ: Այստեղ, որպես կանոն, նյութերը դասավորված են ըստ եկեղեցական տոնական կարգի, ամեն տոնին նվիրված է մեկ գանձ, իսկ այդ գանձին կցված է մի տաղ՝ իր հորդորակով, հաճախ էլ՝ մեղեդիով:

Եղել են Գանձարաններ, որոնց մեջ տեղ են գտել կամ միայն գանձեր, կամ էլ գանձեր և տաղեր, բայց գանձերը գետեղված են եղել Գանձարանի սկզբի մասում, իսկ տաղերը՝ վերջում: Հանդիպում են նաև այլ սկզբունքով կազմված Գանձարաններ⁵⁵:

Իսկ ինչպիսի՞ն է եղել Մխիթար Այրիվանեցու Գանձարանն այս առումով: Գանձարանների ուսումնասիրությունից պարզվեց, որ Մխիթար Այրիվանեցու գանձերի հիմնական խումբը չունի իր համակարգին համապատասխան տաղեր, ուստի չենք կարող մտածել նրանց փոխառնչության մասին: Նրա անհատական Գանձարանը, սակայն, պատկանել է Գանձարանների այն խմբին, որտեղ գանձերից բացի եղել են և տաղեր՝ գետեղված վերջում: Դրանք վերոնշյալ «Վասն աւրհնութեան նորակերտ գրոց», «Վասն պատկերաց սրբոց», Քրիստոսին և Աստվածածնին նվիրված չորս բանաստեղծություններն են: Նշվածներից վերջին երկուսը, գրված լինելով տերունական գանձերին կից երգելու համար, չունեն իրենց համապատասխան գանձերը:

Ինչ վերաբերում է այդ Գանձարանում գտնվող օրհնության երկու երգերին՝ «Վասն պատկերաց սրբոց» և «Վասն աւրհնութեան նորակերտ գրոց», ապա դրանք, մասամբ կապվելով գանձերի հետ, մեր առջև բացում են մեկ այլ ուշագրավ երևույթ՝ կարոտ հատուկ բացատրության:

Մխիթար Այրիվանեցու «Նորակերտ գիրք օրհնելոյ» գանձը (ձեռ. հմ. 4844) այլ ձեռագրերում (ձեռ. հմ. 6529, հմ. 4011, հմ. 3540) ունի իր համապատասխան («Վասն աւրհնութեան նորակերտ գրոց») տաղը: Առավել ուշագրավ է այն, որ այս նույն ձեսի համար Մաշտոցներում Մխիթար Այրիվանեցու անունով կա նաև «Աղօթք նորակերտ գիրք աւրհնելոյ»⁵⁶, որն էլ

⁵¹ Մ. Քեչիչյան, Ցուցակ հայերի ձեռագրաց Զմմառի վանքի, էջ 150, ձեռ. 82:

⁵² Անդ. էջ 134, ձեռ. հմ. 81:

⁵³ Լ. Ոսկյան, Ցուցակ հայերի ձեռագրաց ի վիեննա, հատ. Բ, էջ 1052 (ձեռ. հմ. 1042):

⁵⁴ Մատենադարան, ձեռ. հմ. 3987, թերթ 229բ - 331: Բ. Սարգսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց, հատ. Գ, էջ 445 (ձեռ. 1086):

⁵⁵ Ա. Քյոչկերյան, Գրիգոր Նարեկացու գանձերն ու Գանձարանների սկզբնավորումը («Բանբեր Մատենադարանի», հմ. 10, Երևան, 1971, էջ 58-59):

⁵⁶ Ձեռ. հմ. 3987, թերթ 229բ:

Համոզում է, թե Մխիթար Այրիվանեցին այդ երեք միավորները գրել է որպես մեկ ամբողջութան մասեր: Ուստի ճիշտ են Բ. Սարգիսյանն ու Գ. Հովսեփյանը, երբ Մխիթար Այրիվանեցուն են վերագրում գրքի օրհնութայն այդ կարգավորությունը⁵⁷: Սա հիմք է տալիս մտածելու, որ Մխիթար Այրիվանեցին ունեցել է գանձից և տաղից բաղկացած որոշ միավորներ, բայց ոչ թե տոնական-գանձարանային, այլ ծիսական-մաշտոցյան բնույթով: Իսկ դա ենթադրել է տալիս, որ Մխիթար Այրիվանեցու Գանձարանում պահպանված են այդ տաղից բացի, ծիսական բնույթի մյուս տաղի («Վասն պատկերաց սրբոց») համար ևս կարող էր գրված լինել գանձ, իսկ («Աւրհնութիւն ձիթոյ») գանձի համար՝ տաղ, որպիսիք, սակայն, մեզ հայտնի չեն: Դրանք միաժամանակ հուշում են Մխիթար Այրիվանեցու ստեղծագործությունների մի ուրիշ խմբի հավանական գոյություն մասին՝ գրված ծիսական արարողությունների համար: Այդտեղ նա, ըստ երևույթին, օգտագործել է և՛ գանձ, և՛ տաղ, և՛ աղոթք⁵⁸: Հնարավոր է, որ հետագայում երևան գան այդ երևույթը լուսաբանող նոր փաստեր: Իսկ ցայժմ հայտնի նյութերի բացահայտմամբ տեսնում ենք, որ Մխիթար Այրիվանեցուց մեզ հայտնի 21 գանձերի հիմնական խմբում եղել են տերունական, վկաներին, սրբերին նվիրված 19 գանձ և ծիսական բնույթի 2 գանձ: Այդպիսի բնույթ են ունեցել նաև նշված երկու երգերը:

Ծիսական բնույթի գանձերի և տաղերի առկայությունը Մխիթար Այրիվանեցու Գանձարանում նրան տալիս է ինքնատիպ տեսք և այդ չորս միավորով յուրովի կապում Մաշտոց ժողովածուների և առհասարակ եկեղեցական ծիսարանների հետ⁵⁹:

Այսպիսով, Մխիթար Այրիվանեցու գանձերի ընդհանուր ծայրակապի բացահայտումը հնարավորություն է ընձեռում գտնելու այն հնագույն ձեռագիրը, որտեղ համեմատաբար անաղարտ են պահպանվել նրա երբեմնի Գանձարանի նյութերը՝ հեղինակային դասակարգմամբ: Քննություն համար հիմք ընդունելով հատկապես Հմ. 4011 Գանձարանը, ինչպես նաև նրա մեջ պահպանված՝ Մխիթար Այրիվանեցու և Գրիգոր Խլաթեցու վկայություն-հիշատակարանները՝ մենք կարողանում ենք վերականգնել Մխիթար Այրիվանեցու՝ 1286 թվականին ստեղծած անհատական Գանձարանի մոտավոր

պատկերը, ինչպես նաև՝ ճանաչել ու գտնել Մխիթար Այրիվանեցու վկայված 21 գանձերը, 4 տաղերը և վերականգնել նրանց երբեմնի հաջորդականությունը հեղինակային կորած ինքնագրում: Հայտնի է, որ գանձերի այսպիսի քանակը (21 գանձ), հատկապես երբ դրանք ընդգրկում են տերունական, սրբերի և վկաների նշանավոր տոներն ու ունեն տոնական կայուն շարք, իրավունք են վերապահում այն պարունակող ժողովածուն կոչելու Գանձարան: Ուստի բացահայտվում է նաև այն, որ Մխիթար Այրիվանեցու ժողովածուն իրենից ներկայացրել է գանձերից բաղկացած մի ամբողջական ստեղծագործություն, Գանձարանի լավագույն օրինակ, որը լիովին ի վիճակի է եղել բավարարելու ժամանակի պահանջները: Այդ գիտակցությունն ունեցել է հենց ինքը՝ հեղինակը, որի մոտ հանդիպում ենք «Գանձարան» բառի առաջին հիշատակություններից մեկին: Իր «Որդոց և թոռանց Սրբոյն Գրիգորի Հայոց Հայրապետի» գանձում նա գրում է.

Այս շարք շղթապէս,
Յայս Գանձարանէս
Քեզ երես տեսնէս:
Այս գահ փըղոսկրես,
Ակնելով պէս-պէս,
Հարսն քեզ ելնէս⁶⁰:

Գանձասացը քաջ գիտակցել է իր Գանձարանի արժեքը, բայց և մտածել ավելի լիարժեք ժողովածուի մասին: Այդ են վկայում նրա հիշատակարանն ու ծայրակապային նախադասությունը, ուր ավանդում է հաջորդներին՝ լրացնելու, ամբողջացնելու իր Գանձարան-ժողովածուն: Նրա այս ավանդը տեսնում ենք իրագործված հատկապես նորագույն շրջանը բնորոշող Գրիգոր Խլաթեցու խմբագրություններում:

* * *

Մխիթար Այրիվանեցու Գանձարանը մեծ հուշակ է ձեռք բերել Այրիվանքի շրջակայքում և ապա՝ նրա սահմաններից դուրս՝ հասնելով Վասպուրական և այլուր: Առաջին անգամ բացահայտվող վերոբերյալ փաստերից հայտնի դարձավ, որ Այրիվանեցու Գանձարանի նյութերը ամբողջությամբ կան միայն XIV-XV դարերի բանաստեղծ, մատենագիր Գրիգոր Խլաթեցու կազմած Համահավաք Գանձարաններում, որով սահմանազատվում են Գանձարանների զարգացման հին և նոր շրջանները: Խորանալով այս

⁵⁷ Գ. Հովսեփյան, Խաղրակեանք կամ Պոպիանք հայոց պատմութեան մէջ, էջ 212: Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեանց ի Վենետիկ, Հատ. 3, էջ 445:

⁵⁸ Ուշագրավ է, որ «Գիրք աւրհնելոյ» աղոթքը ցայժմ հայտնի է միայն երկու ձեռագիր Մաշտոցներից, իսկ սրան համապատասխան գանձն ու տաղը՝ Գանձարաններից:

⁵⁹ Իր բովանդակությամբ եկեղեցի օրհնելու ծիսակատարությունն է Համապատասխանում Մխիթար Այրիվանեցու «Որդոց և թոռանց Սրբոյն Գրիգորի Հայոց Հայրապետի» գանձը, որը Գանձարաններում հայտնի է «Կաթողիկէ եկեղեցւոյ» անունով: Հետաքրքիր է, որ այն հանդիպում է Մատենադարանի Հմ. 953 ձեռագիր Մաշտոցում՝ Համառոտված և օգտագործված այդ ձևի ժամանակ:

⁶⁰ Ձեռ. Հմ. 428, թերթ 227ր:

Հարցում՝ տեսնում ենք, որ Մխիթար Այրիվանեցու Գանձարանն է հանդիսացել այն հիմքը, որի վրա Գրիգոր իլաթեցին ստեղծել է իր նոր խմբագրությունները, իսկ նրան էլ հետևել են հաջորդ դարերի Գանձարաններ խմբագրողները:

Գրիգոր իլաթեցու խմբագրած չորս ինքնագիր Գանձարանների (Հմ. 8366, 6529, 4011, 5328) քննությունը հնարավորություն է ընձեռում ոչ միայն վերականգնելու Մխիթար Այրիվանեցու Գանձարանը և վեր հանելու նրա դերն ու նշանակությունը Գրիգոր իլաթեցու խմբագրություններում, այլև ճշտելու, ամբողջացնելու Մխիթար Այրիվանեցու գանձերի բնագրերն ու նրանց միավորների քանակը:

Հարցի պատմության սկիզբը բացում է Հմ. 6529, 4011 Գանձարաններում գտնվող Գրիգոր իլաթեցու այն հիշատակարանը, որտեղ նա հայտնում է, թե ինքը, այդ հիշատակարանը գրելուց 26 տարի առաջ, ծանոթ է եղել Մխիթար Այրիվանեցու որոշ գանձերի և շարունակ երազել է լինել մեծ գանձագրի ապրած վայրերում: Ի վերջո նրա իղձը կատարվել է: Լինելով Այրիվանեցու՝ նա տեսել և ընդօրինակել է Մխիթար Այրիվանեցու գանձերը՝ գրված այդ այցելությունից 100 տարի առաջ⁶¹:

Պետք է նկատել, սակայն, որ Գրիգոր իլաթեցու՝ Այրիվանեցու կատարած ընդօրինակությունն էլ մեզ չի հասել: Վերոնշյալ 4 Գանձարանների քննությունը ցույց է տալիս, որ դրանք ներկայացնում են Գրիգոր իլաթեցու գանձարանային աշխատանքների երկու տարբեր շրջանները: Նախ՝ մինչև 1387 թվականը, այսինքն՝ Այրիվանեցու կատարած ուղեորությունը (Հմ. 8366), և ապա՝ դրանից հետո (Հմ. 6529, 4011, 5328): Առաջին շրջանի արգասիքը Հմ. 8366 ձեռագիրն է՝ գրված է Ցիպլանվանքում՝ Գրիգոր իլաթեցու կողմից: Ձեռագիրն ունի գլխավոր հիշատակարան, որը, սակայն, թերի է: Պահպանվել են ձեռագրի գրչի անվան երկու տառերն ու գրչություն թվականի առաջին տառը: Այն ներկայացնում է հետևյալ պատկերը. «Գրեցաւ... Աստուածատուր քահանայի, ձեռամբ Գրիգորի պիտակ անուն բանի խըն... վանս Ցիպլանյ ընդ հովան[եաւ ամե]նազոր Սուրբ Նշանի, ի Պ... թրւականութեանս Հայի...»⁶²: Այստեղից երևում է, որ ձեռագրի ընդօրինակությունը կատարված է 1351 [«Պ»] թվականից հետո, բայց որոշակի ե՞րբ, Հայտնի չէ:

⁶¹ Հիշատակարանի թերի տվյալները լրացնում են նույն Գանձարանում պահպանված Գրիգոր իլաթեցու երկու հիշատակագրությունները, որոնցում որոշակիորեն նշվում է, որ նա Այրիվանեցու է եղել է 1387 թվականին և տեսել է Մխիթար Այրիվանեցու 1286 թվականին կազմած Գանձարանը:

⁶² Ձեռ. Հմ. 8366, թերթ 212բ: Տե՛ս հրատարակված Լ. Խաչիկյան, Փն դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1967, մասն 2, էջ 1425:

Ձեռագիրն ունի խճողուն տեսք, բովանդակում է տարբեր հեղինակների պատկանող 50 գանձեր: Դրանցից անճանաչելիորեն աղավաղված և խեղաթյուրված են հատկապես Մխիթար Այրիվանեցու գանձերը, որոնց թիվը հավասար է 13-ի: Ինչպես հայտնի դարձավ Մխիթար Այրիվանեցու՝ վերականգնված բնագրերից, նրանք բոլորն էլ անխտիր կազմված են 10-ական տներից, ըստ որի և՛ ծայրակապային 10-ական տառերից: Համեմատելով դրանք Հմ. 8366 ձեռագրում ընդօրինակվածների հետ՝ տեսնում ենք, որ այստեղ (Հմ. 8366) յուրաքանչյուր գանձից պակասում է առնվազն 5-6 տուն: Հանգամանալից քննությունը ցույց է տալիս, որ այդ պակասությունն արդյունք է ոչ թե մտածված կրճատումների, այլ աղավաղված նախահիմքի: Միայն են կատարված նաև գանձերի մեծ մասի տնատումները, որով և ավելի անհասկանալի են դարձել ծայրակապերի արտահայտած իմաստները:

Այդ աղավաղումների մասին մոտավոր պատկերացում տալու նպատակով այստեղ առանձին աղյուսակով տալիս ենք Մխիթար Այրիվանեցու վերոհիշյալ 13 գանձերի ճշգրտված սկզբնատողերը՝ իրենց ծայրակապերով, ապա՝ համապատասխան (աղավաղված) ծայրակապերը Հմ. 8366 ձեռագրից: Նկատենք, որ ծայրակապերի զուգորդումից ավելի ցայտուն է երևում աղավաղումների ընդհանուր պատկերը:

Ըստ Մխիթար Այրիվանեցու	Ըստ Գր. իլաթեցու (ձեռ. Հմ. 8366)	
Սկզբնատողեր	Ծայրակապեր	
1 Բարձրեալ ահաւոր...	Բայիւ երգել	Յիւ եհ (21ա-23բ)
2 Համագոյական...	Հինգոտասան	Նգէտաս (24բ-29ա)
3 Բարձրեալ անքննին...	Բան քարոզից	Քարոիւ (51ա-54բ)
4 Աստուած կենդանի...	Այրիվանեցի	Իվանսի (56ա-59բ)
5 Երգս յաւերժական...	Երեսանեցին	Աենիկպիա (61բ-64բ)
6 Վայել է Քոյին...	Վէչտասանք է	Շտտար (67ա-68բ)
7 Համագոյական շօր...	Հայցէ սիրով	Իերմով (89ա-91բ)
8 Ջահեղ գանքննին...	Ջպակատորք	Աստտար (108ա-110բ)
9 Տէր տէրունական...	Տէրունական	Յենասե (115ա-117բ)
10 Տաճարդ երկնային...	Տաւնից ասել	Տտուցի (138ա-140բ)
11 Խորհրդող անքննին...	Խորհրդողոց	Հհըրդո (141բ-145ա)
12 Ի սկզբան էիդ...	Ի փոսո Տեառն	Ակոսաս (156ա-158բ)
13 Սուրբ Երրորդութիւն...	Սարգիս գրիչ	Գիս իթչ (180ա-183ա)

Ուշագրավ է նաև հետևյալ պարագան: Գրիգոր իլաթեցին այդ թերի գանձերից մի քանիսում ավելացրել է տողեր և նույնիսկ ամբողջական

տներ: Օրինակ, «Արբոց Թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ» գանձի վերջից նա բավարարվել է ընդամենը մի քանի տող լրացնելով (դրա համար օգտագործելով Մխիթար Այրիվանեցու գանձերից որոշ նախադասութուններ), իսկ «Բուն Բարեկենդանին» գանձի վերջից՝ երկու տուն (սկզբնատողերն են «Ի քառասնորդի...» և «Աստուծոյն մեր յոյս»)՝⁶³:

Համեմատելով Հմ. 8366 Գանձարանը Գրիգոր իլաթեցու 1387 թվականից հետո կազմած Գանձարանների հետ (Հմ. 6529, 4011, 5328)⁶⁴ տեսնում ենք, որ այստեղ նշված աղավաղումներն ու միջամտությունները բացակայում են: Ճիշտ է, այդ գանձերն էլ ունեն աղավաղումներ, սակայն դրանք սոսկ վրիպակներ են և կապ չունեն Հմ. 8366 ձեռագրում առկա աղավաղումների հետ: Կան նաև գանձերի տրոհումներ, սակայն դա էլ կատարված է հատուկ և հասկանալի սկզբունքով:

Ի տարբերություն Հմ. 8366 ձեռագրի, իլաթեցու Հմ. 6529, 4011 ձեռագրերում առկա են Մխիթար Այրիվանեցու Գանձարանի հիշատակարանն ու Գրիգոր իլաթեցու՝ Այրիվանքի այցելությամբ ստացված տեղեկությունների հիման վրա գրված հիշատակարանները:

Ահա այս և այլ փաստեր հավաստում են, որ Հմ. 8366 ձեռագիրը Գրիգոր իլաթեցին ընդօրինակել է ավելի վաղ, քան 1387 թվականը, երբ դեռ չէր օգտվել Մխիթար Այրիվանեցու ինքնագիր ժողովածուից: Սրանով ճշտվում է Հմ. 8366 ձեռագրի գրչության ժամանակը. այն ցայտմ դիտվում է որպես XV դարի ժողովածու⁶⁴, իսկ այժմ կարող ենք նրա ընդօրինակություն ժամանակը որոնել 1387 թվականից առաջ ընկած տասնամյակներում: Նկատի առնելով այն հանգամանքը, որ Գրիգոր իլաթեցին, համաձայն իր հիշատակարանի, 1387 թվականից 26 տարի առաջ է ծանոթ եղել Մխիթար Այրիվանեցու գանձերին, «եւ յայնմ աւրէ յոյժ» ցանկացել է տեսնել գանձագրի ապրած վայրերը, կարող ենք ենթադրել, որ այդ ժամանակ արդեն նրա ձեռքի տակ է գտնվել Հմ. 8366 ձեռագիրը կամ նրա նախահիմքը, որը մեզ տանում է դեպի 1360-1361 թվականները: Բայց քանի որ Գրիգոր իլաթեցին ծնվել է 1349 թվականին և չէր կարող 11-12 տարեկան հասակում արտագրել Հմ. 8366 ձեռագիրը (մանավանդ որ այս ձեռագրում առկա են նաև հենց իր՝ Գրիգոր իլաթեցու մի շարք գանձերը՝ գրված Մատթեոս Զուղայեցու խնդրանքով), ուստի պետք է կարծել, որ նա, ճիշտ է, 1387 թվականից 26 տարի առաջ ծանոթ է եղել Մխիթար Այրիվանեցու գանձերին,

⁶³ Զեռ. Հմ. 8366, թերթ 64աբ: Այդ միջամտությունների մի մասը նա հետագայում օգտագործել է իր սեփական գանձերի մեջ: Այդպիսիներից է «Աւագ երկուշաբթի Ի Գրիգոր վարդապետէ» գանձի վերամշակված օրինակը, ուր առկա է Հմ. 8366 ձեռագրում գտնվող Մխիթար Այրիվանեցու «Բուն Բարեկենդանին» գանձի մեջ մուծված «Աստուծոյն մեր յոյս» սկզբնատողով տունը (ձեռ. Հմ. 8366, թերթ 64աբ, ձեռ. Հմ. 3540, թերթ 143ա-146բ):

⁶⁴ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատ. Բ, էջ 730:

բայց հիշյալ Գանձարանը կազմել է դրանից հետո միայն՝ մինչև 1387 թվականը:

Ինչպես նկատելի է, Մխիթար Այրիվանեցու գանձերի վիճակը խիստ անմխիթար է Գրիգոր իլաթեցու կազմած կամ խմբագրած վաղ շրջանի Գանձարանում: Այդ պատկերը, սակայն, փոխվում է 1387 թվականից հետո:

Մխիթար Այրիվանեցու Գանձարանի ավարտից մինչև Գրիգոր իլաթեցու այցելությունը Այրիվանք անցել էր 100 տարի, մի ամբողջ ժամանակաշրջան, որի ընթացքում Գանձարանների կառուցվածքային հարցերը բավականին փոփոխվել էին՝ հասունացնելով ավելի բարդ և ճոխ համակարգի պահանջ: Այդ ժամանակ Գրիգոր իլաթեցին, ունենալով արդեն Մխիթար Այրիվանեցու կանոնական Գանձարանը, նրա գանձերի տոնական կարգի հիման վրա կազմում է նոր՝ եկեղեցու բոլոր տոներն ընդգրկող ժողովածուներ: Այդ նպատակով նա օգտվել է նաև ուրիշների գանձերից, տաղերից, հորդորակներից, մեղեդիներից՝ հաճախ էլ դրանք տրոհելով, վերափոխելով, հարստացնելով իր իսկ հորինած առանձին տներով, կաֆաներով: Դրա հետևանքով է նաև, որ նրա ձեռքի տակով անցած Գանձարաններում այլևս անհնար է գտնել Մխիթար Այրիվանեցու գանձերի ամբողջական շարքը և նրա միավորների հեղինակային հաջորդականությունը:

Զեռք բերելով Մխիթար Այրիվանեցու Գանձարանը՝ Գրիգոր իլաթեցին նախ ցրել է նրա նյութերը ըստ առանձին միավորների և վերջիններս ներդաշնակել ուրիշների գանձերի հետ: Այնուհետև, նա Այրիվանեցու գանձերից ստեղծել է նոր գանձեր՝ իր իսկ հավելումներով, և ապա, մասնատելով մի շարք գանձեր, արհեստականորեն ավելացրել է դրանց թիվը:

Այսպես՝ Գրիգոր իլաթեցին, վերցնելով Մխիթար Այրիվանեցու «Պետրոսի Հոռովմա հայրապետին և Աբիսողոմայ սարկաւազին» գանձը (ծայրակապ «Վարդայպետի»), բաժանել է երկու մասի: Առաջին չորս տներից ստեղծել է «Արբոց առաքելոց» (Հայտնի նաև «Եօթներորդ աւուրն...») խորագրով գանձը՝ «Վարդ» ծայրակապով, իսկ երկրորդ կեսի սկզբում ավելացնելով իր հեղինակած երեք նոր տները՝ կազմել է երկրորդ գանձը՝ նույն «Գանձ Պետրոսի Հոռովմա հայրապետին և Աբիսողոմայ սարկաւազին» (ծայրակապ «Վարդայպետի») խորագրով և դրանք ներկայացրել իբրև Մխիթար Այրիվանեցու տարբեր ստեղծագործություններ:

Նման մի այլ օրինակ է Գրիգոր իլաթեցու խմբագրությունը պատկանող Գանձարաններում հանդիպող «Հոգոյն գալստեան» գանձը՝ «Վանիկ ասա» ծայրակապով: Գանձի հեղինակն անհայտ է, իսկ ծայրակապն էլ ոչինչ չի ասում: Հ. Տաշյանը իր ձեռագրացուցակի անվանացանկում, այս գանձի կապակցությունը, Հովհաննես Վանականի անվան դիմաց գրում է. «Վանի-

կա» (Վանակա՞ն), Գանձ Հոգւոյն գալստեան՝ 436 (ԽԶ): Հմմտ. «Վանական» եպ. Բջնոյ յամի 1358-ի՝ 260»⁶⁵:

Ինչպէս ցույց տվեց քննութիւնը, «Հոգոյ գալստեան» գանձը ստեղծված է Մխիթար Այրիվանեցու նորահայտ «Նորակերտ գրոց աւրհնելոյ է» գանձի տների վերադասավորմամբ և առաջին նախադասութիւնների ու բառերի փոփոխութիւններով: Փոփոխութիւն հեղինակը, կարծում ենք, Գրիգոր Խլաթեցին է, որովհետև քննվող տարբերակը առաջին անգամ հանդիպում է նրա ինքնագիր Հմ. 5328 Գանձարանում և այդ խմբագրութիւնը պատկանող ուրիշ Գանձարաններում: Հավանական է, որ նա «Նորակերտ գրոց» գանձը, դիտելով որպէս ծիսական գանձ, դուրս է թողել իր խմբագրած Գանձարաններից և փոխարենը ստեղծել նրանից ձևված «Հոգոյ գալստեան» տերունական գանձը՝ ոչինչ չհուշող «Վանիկ ասա» ծայրակապով:

Մխիթար Այրիվանեցու բնագրային գանձերի փոփոխութիւններից բացի, ինչպէս նշեցինք, Գրիգոր Խլաթեցին գրադվել է նաև նրա գանձերի տրոհումներով: Այս եղանակով նա հնարավորութիւն է ունեցել բոլոր տոներն ընդգրկող իր նոր Գանձարաններում լրացնելու գանձերի պակասը: Հետաքրքիր է նկատել, որ չնայած գանձերը մասնատումների են ենթարկվել ոչ Մխիթար Այրիվանեցու կողմից, սակայն դրանք կարծես թելադրված են հենց հեղինակից: Նա նույն գանձի մեջ ընդգրկելով թեմայով միմյանց հետ առնչվող երկու տարբեր տոների նյութեր, դրանով իսկ յուրովի իրավունք է վերապահել կոտորակման: Հավանաբար այս է պատճառը, որ Գանձարաններում առհասարակ կոտորակման են ենթարկվել Հիմնականում Մխիթար Այրիվանեցու գանձերը: Տրոհված գանձերից տերունականները երգվել են նույն տոնի տարբեր օրերին, իսկ սրբերինը և վկաներինը՝ երկու առանձին տոների ժամանակ: Օրինակ «Ծննդեան ճրագալուցին» գանձը, բաժանվելով երկու մասի, երգվել է Ծննդյան առաջին, երկրորդ կամ Հինգերորդ, վեցերորդ օրերին, իսկ «Համաւրէն թագաւորաց» գանձը՝ նաև «Թէոդորոս թագաւորին» նվիրված տոնին:

1387 թվականից հետո Գրիգոր Խլաթեցու խմբագրած առաջին Գանձարաններում (5328, 4011) տրոհվել են Մխիթար Այրիվանեցու 8 գանձերը: Ակիզբ առնելով Գրիգոր Խլաթեցուց՝ Այրիվանեցու գանձերի մասնատումները շարունակվել են Հաջորդների կողմից, որոնք, նույն օրինակով, մասերի են բաժանել ևս 7 գանձ: Թե ինչպիսին է այս տրոհումների մոտավոր պատկերը, երևում է Հավելվածում տրված աղյուսակից: Մխիթար Այրիվանեցու գանձերի բնագրերի ամբողջականութիւնը վերականգնելու նպատա-

⁶⁵ Հ. Տաշյան, Մայր ցուցակ Հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, էջ 1129:

կով աղյուսակում տալիս ենք ոչ միայն Գրիգոր Խլաթեցու (Հմ. 4011, 5328), այլև նրա Հաջորդների կողմից կատարված մասնատումները (Հմ. 4844, 424): Այսպիսով, Գանձարաններում Մխիթար Այրիվանեցու 21 գանձերից մասնատման են ենթարկվել 14-ը: Սրանցից սրբերին և վկաներին նվիրված որոշ գանձեր, անջատվելով բուն խորագրից, ստացել են նաև նոր խորագրեր: Օրինակ «Որդոց և թոռանց Սրբոյն Գրիգորի Հայոց Հայրապետի» գանձի երկրորդ մասը ստացել է «Գանձ կաթողիկէ եկեղեցւոյ» խորագիրը, «Համաւրէն կուսանաց և մարտիրոսաց»-ը՝ «Համաւրէն կուսանաց» և «Համաւրէն մարտիրոսաց»: Այս հանգամանքը հետագայում գրիչներին և գանձերից օգտվողներին զրկել է դրանք որպէս մեկ գանձի բաղկացուցիչ մասեր դիտելու հնարավորութիւնից: Վերջինիս նպաստել են նաև տրոհումից աղավաղված և իմաստազրկված ծայրակապերը: Տրոհման հետևանքով սուժել է հատկապէս վերոնշյալ «Սրբոյն Գրիգորի Հայոց Հայրապետի» գանձի ծայրակապը: Նորագույն շրջանի Գանձարաններում գանձի առաջին մասը՝ «Կաթողիկէ եկեղեցւոյ» խորագրով, ստացել է «Տաււեցի», «Տաււեցի», «Տաււեց», «Տաււեցի», «Տաււեցի» ծայրակապային տառախմբերը, իսկ երկրորդ՝ «Գանձ որդոց և թոռանց Սրբոյն Գրիգորի Հայոց Հայրապետի» մասը՝ «Նսիացալ», «Նիացալ», «Նիցով», «Նիցնել» ծայրակապերը՝:

⁶⁶ Անհարկի չէր լինի այստեղ փոքր-ինչ մանրամասն ցույց տալ աղավաղումների մոտավոր պատկերը: Վերցնենք նշվածներից «Տաււեցի» ծայրակապը: Այն ստացվել է «տտ» տառերով սկսվող հատվածներից, որոնք գանձում կազմում են մեկ տուն, բայց այստեղ սխալ տնատման հետևանքով առանձնացվել են: «ա»-ն և «ւ»-ն գանձից պահպանված ծայրակապային տառերն են: «ե» ծայրակապային տառը ներկայացնում է գանձի «երգեա կոյս անրիծ» սկզբնատողով նախավերջին տունը, որն այստեղ տրոհման հետևանքով պետք է լիներ գանձի երկրորդ «Որդոց և թոռանց Սրբոյն Գրիգորի» մասում:

«Ց» ծայրակապային տառով սկսվող տունը «Ցուցեալ Ազաշէն» սկզբնատողով «Թարգմանաց» գանձի վերջին տունն է և սխալմամբ միացվել է այս գանձին: «Թ»-ով սկսվող տունը դարձյալ անհարգատ է գանձին, ուստի գանձի առաջին մասը բաղկացած պետք է լիներ միայն ծայրակապային երեք տներից՝ «Տան»: Գանձի երկրորդ մասի «Նսիացալ» ծայրակապը առաջացել է հետևյալ կերպ: Ծալակապային երկրորդ տառը «Ա», կազմում է երկրորդ «Ի» տան մի մասը, այսինքն կատարվել է սխալ տնատում: Նման սխալի հետևանք է և ծալակապային է և ծալակապային «Ս» տառը, որով սկսվող տունը մասն է «Ց» սկզբնատողով սկսվող տան: «Ա» և «Ե»-ը գանձի երկու տներն են, որոնց միջից պակասում են «Ս» և «Ե», այն է՝ «Սա ի նպատ իբրին» և «Երգեա կոյս անրիծ» սկզբնատողով տները, որոնցից վերջինը, ինչպէս ասացինք, միացած է գանձի առաջին տանին: Ահա այս տիպի աղավաղումներ են նաև գանձի ծայրակապերի մնացած ձևերը: Բնականորեն, նշված աղավաղումներով գանձի առանձին մասերը հետացել են միմյանցից և դիտվել որպէս ինքնուրույն միավորներ: Այլ է պատկերը այն Գանձարաններում, ուր ծայրակապերից թեկուզ մեկը պահպանել է իր նախկին ուղիղ ձևը: Նման պատկեր ունի Մատենադարանի Հմ. 5521 Գանձարանը: Այստեղ ևս գանձը տրոհված է մասերի, սակայն երկրորդ մասը ունի «Նիցասել» ճիշտ ծայրակապը: Դա արդեն հիմք է տվել գրչին գանձի երկու մասերը դիտելու որպէս մեկ մտողութիւն: Այդ կապակցութեամբ նա գրում է. «Այս գանձի առաջըս «Տաււեցի երկնային է», «Տաււեցի ասել» կու կապէ: Տուն գիրն եւ Այբն և Լիւնն: Յիկեղեցւոյ գանձն է գրած» (թ. 261բ): Ապա հաջորդ էլում փորձում է Հիմնավորել իր ենթադրութիւնը գանձի բաղկանակութեամբ. «Եւ գլուսաւորիչն և գորդիսն և զթոռանսն ի գարդ Հարտին եկեղեցւոյս է Համարել Էրևանցին» (թ. 262ա):

Գանձի այս աղավաղված ծայրակապերը բանասիրութեան մեջ դիտվել են որպես Մխիթար Այրիվանեցուն տրված հատուկ անուն: Օրինակ, Հ. Աճառյանը գրում է. «Իբրև գանձասաց կրում է նաև Երեանցի, Տաւեհցի, Տաւետցի, Տաւեցի անունները. կամ պարզապես Տեր Մխիթար»⁶⁷: Իրականում դրանք աղավաղումներ են: Դրա փայլուն ապացույցը գանձի անաղարտ, ամբողջական վիճակն է՝ պահպանված հնագույն շրջանի Գանձարաններում, ուր այն ունի «Տաւեից ասել» ծայրակապը: Ահա համապատասխան սողերը՝ հնագույն համարվող հմ. 4068 Գանձարանից.

Տաճար երկնային...
Աստանաւր յայտնեալ...
Իիւս անդր ի պղծոց...
Նոր թագ պետական...
Ի յայսմ ի ծառէս...
Յընծա զուարճական...
Այսաւր հրաշալի...
Սահնպատ լերին...
Երգեա՛ կոյս անրիծ...
Լուսատուն Բանին...

Մասնատման հետեանքով «Համաւրէն կուսանաց և մարտիրոսաց» գանձի «Ի փառս Տեառն» ծայրակապը, տրոհվելով մասերի, առաջին կեսում ստացել է «Ի փապըս», «Ի փառուսաս», «Ի փառասա», «Ի փառսա», իսկ երկրորդ կեսում՝ «տեաջն», «տիեհհն» ձևերը:

Նման աղավաղման է ենթարկվել նաև Ծաղկազարդին նվիրված «Հայցէ սիրով» ծայրակապը և այլն: Չպիտի մոռանալ նաև այն, որ տրոհումներից տուժած գանձերի աղավաղումներն ավելացել են նաև ընդօրինակման ժամանակ գրիչների թույլ տված սխալների պատճառով: Ամենափոքր վրիպակից անգամ աղճատվել, իմաստազրկվել են գանձերի ծայրակապերը: Նորագույն շրջանի Գանձարաններում այդպիսի վիճակում է օրինակ «Բուն Բարեկենդանին» գանձի «Երեանեցին» ծայրակապը: Այն Գանձարաններում ունի «Երեհէւանեցին», «Երեւանեցին», «Երգւանեցին» ձևերը: Ուստի հասկանալի է, որ դրանց կարգավորումով միայն կարող էր երևան գալ Մխիթար Այրիվանեցու գանձերի նախկին, հեղինակային տոնական շարքը: Հենց այս եղանակով էր, որ հայտնաբերվեց Մխիթար Այրիվանեցու գանձերի և նրա Գանձարան-ժողովածուի մասին որոշակի պատկերացում տվող ընդհանուր ծայրակապը, որը ցարդ վրիպել էր մասնագետների ուշադրութեան:

⁶⁷ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Երևան, 1946, հատ. 3, էջ 376:

յունից: Խոսքը Մխիթար Այրիվանեցու մի շարք գանձերի ծայրակապերի գումարով ստեղծվող ամբողջական և իմաստավոր ծայրակապային (ակրոստիքոսային) պարբերութեան բացահայտման մասին է, որի շուրջ խոսեցինք վերևում:

Նշված աղավաղումների կարգավորումով պարզվեց նաև, որ Գանձարաններում ցրված և հաճախ որպես առանձին միավորներ դիտվող Մխիթար Այրիվանեցու 14 գանձերը կազմված են նրա համապատասխան գանձերի տարբեր մասերից և արհեստականորեն ավելացնում են այդ գանձերի քանակը՝ 21 միավորից հասցնելով 35-ի: (Տե՛ս Հավելված հմ. 4ա, բ, գ):

Հին և նոր շրջանների Գանձարանների համեմատությունից երևան են գալիս նաև Գրիգոր իլաթեցու խմբագրական այն աշխատանքները, որոնք կապված են նախորդ շրջանի գանձերի տաղաչափութեան, հանգավորման հետ: Սակայն Մխիթար Այրիվանեցու գանձերը, նախապես արդեն լինելով չափաբերված և հանգավորված, այս առումով համարյա փոփոխութեան չեն ենթարկվել: Ավելին, պետք է կարծել, որ հենց այդ գանձերի տաղաչափական արվեստի ազդեցութեան տակ Գրիգոր իլաթեցին «Առեալ զառաջնոց երգեալ Գանձարանսն և յամենեցունցն զհամեղաբանսն և զքաղցրեղանական հաւաքեալ՝ սրբագրեաց մեծաւ աշխատութեամբ և ի յոտն եհան: Թէ՛ պակաս բան կար ի վանկսն՝ յաւելցոյց յինքենէ, և թէ՛ աւելի բան կայր, որ հատակոտոր բերեր զվանկսն՝ քերեալ ի բաց եհան»⁶⁸:

Այսպիսով, Գրիգոր իլաթեցին, ձեռք բերելով Մխիթար Այրիվանեցու Գանձարանը, նրա հիմքի վրա ծավալել է իր խմբագրական աշխատանքները և ստեղծել ժամանակի պահանջների համեմատ ավելի ճոխ համակարգով նոր Գանձարաններ: Հետևապես, Մխիթար Այրիվանեցու Գանձարանն է ընկել Գրիգոր իլաթեցու խմբագրած Գանձարանների, ուստի և՛ նորագույն շրջանի կանոնիկ Գանձարանների հիմքում:

* * *

Մխիթար Այրիվանեցու չափածո ստեղծագործությունները (գանձեր, տաղեր) արժանի են հատուկ ուշադրութեան նաև իրենց բանաստեղծական արվեստով: Պետք է նկատել սակայն, որ գանձերի՝ որպես բանաստեղծութեան առանձին տեսակի շուրջ մեր գրականութեան մեջ ըստ պատշաճի ուսումնասիրություն չի կատարված: Մեր նպատակից դուրս համարելով այս հարցի մեջ խորանալը՝ ստորև, նախքան Մխիթար Այրիվանեցու գանձերի

⁶⁸ Լ. Խաչիկյան, Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1955, մաս 1, էջ 583:

վերլուծութեանն անցնելը, կփորձենք մի երկու խոսքով ներկայացնել այդ ստեղծագործութեանններն առհասարակ:

Բանասիրութեան մեջ գանձերի շուրջ եղած դիտողութեանններից բխող ընդհանուր եզրակացութեանն այն է, որ դրանք արտաքին ձևը փոխած, տաղաչափված ճառեր են: Եվ իսկապես, գանձերը իրենց տեսակի մեջ կանոնական բնույթի չափածո ստեղծագործութեանններ են՝ երբեմն ճառային, քարոզչական, խրատական, երբեմն՝ ներբողատիպ: Նրանց բովանդակութեանը, որը հաճախ ընդունել է նաև պատմական երանգ, պայմանավորված է տվյալ եկեղեցական տոնով՝ նպատակ ունենալով գովերգելու տերունական տոնը, ներբողելու սրբերին, եկեղեցուն իրենց կյանքը նվիրաբերած հայրերին, վկաներին, քարոզելու աստվածասիրութեան, բարեպաշտութեան և այլն: Ունենալով արտաքին անպաճույճ, միապաղաղ ձև՝ այս ստեղծագործութեաննները, դրանով հանդերձ, օժտված են բանաստեղծական խոսքով, որին զուգահեռ է և երաժշտութեանը: Գանձերը, տարբերվելով շարականներից, խիստ կանոնական համակարգի չեն բերվել, ունեցել են ավելի ազատ ու կամավոր բնորոշումը կիրառութեան, գործածութեան ավելի լայն ոլորտ: Դա որոշակիորեն նպաստել է այն բանին, որ գանձերի մեջ համեմատաբար ավելի շատ են ներթափանցել աշխարհիկ տարրեր: Ուստի պատահական չէ, որ գանձերը հատկապես լայն տարածում են գտնում սկսած XIII դարից, մի ժամանակաշրջան, երբ աշխարհիկ ոգին ավելի էր արմատանում հոգևոր գրականութեան մեջ:

Մխիթար Այրիվանեցու ստեղծագործութեաննները, ծնունդ առնելով հենց այս ժամանակաշրջանում, ներկայացնում են պատմագրական և գեղարվեստական խոսքի որոշակի արժեք, որոնց վրա և կանգ կառնենք ստորև: Նրա գանձերը ևս, իբրև համաբնույթ հոգևոր երգեր, կոչված են գովերգելու տվյալ տերունական տոնը, ներբողելու սրբերին, վկաներին, քարոզելու հավատապաշտութեան և այլն: Դրանց կողքին Այրիվանեցու գանձերում տրված են նաև պատմական նկարագրութեանններ՝ քաղված քրիստոնեական եկեղեցու ընդհանուր պատմութեանից, նաև՝ հայ ժողովրդի անցյալի քաղաքական, հոգևոր և մշակութային կյանքից:

Այսպես, իր «Գանձ ամենայն սրբոց թագաւորաց»-ում հեղինակը խոսում է քրիստոնեության տարածման մասին Իտալիայում, Իսպանիայում, Հնդկաստանում, Հայաստանում, Վրաստանում, Աղվանքում և այլ երկրներում՝ նկատի ունենալով պատմական իրականութեանը: Պատմական հիմքի վրա է դրված «Սրբոց հայրապետացն երեք ժողովոյն» գանձը՝ նվիրված Նիկիայի, Եփեսոսի և Կոստանդնուպոլսի ժողովների մասնակից հայրապետներին:

Փաստական առումով հարուստ նյութ են պարունակում հատկապես ազգային թեմաներով գրված նրա «Սրբոց թարգմանչացն Սահակայ և

Մեսրոպայ», «Սրբոց Հռիփսիմեանց», «Կաթողիկէ եկեղեցւոյ», ինչպես նաև «Ամենայն սրբոց թագաւորաց» գանձերը, որոնց համար Մխիթար Այրիվանեցին օգտագործել է հայ պատմիչների երկերը՝ Ագաթանգեղոսից մինչև Վարդան Արևելցի: Սկզբնաղբյուրների օգտագործման մասին ակնարկում է և հեղինակը, գրելով.

Եւ բազումք որ կան
Ի գիրս պատմական,
Աստ ոչ յիշեցան...⁶⁹:

«Որդոց և թոռանց Սրբոյն Գրիգորի» գանձում Այրիվանեցին, շարագրելով քրիստոնեության տարածման պատմությունը Հայաստանում, կարողանում է վեր հանել և գնահատել պատմական անձանց՝ իրենց գործողութեաննների մեջ: Բերենք մի փոքրիկ օրինակ ներսես Մեծին նվիրված տողերից.

Հայր Հայաստանի,
Սիրող սապղարի,
Անձանթ հիւրի:
Ի Հայաստանի,
Երկու հագարի
Վանք սովաւ շինի:

Եւ ի բարձ նըստի,
Յինըն հարիւրի
Իշխանքն Արշակի:
Եպիսկոպոսի
Գաւազան կարգի,
Չորեք հարիւրի⁷⁰:

Անցյալի պատմության հետ միաժամանակ Մխիթար Այրիվանեցու գանձերում տեսնում ենք և ժամանակի դեպքերի արձագանքները, որոնց, հավանաբար, մասնակցել է և ինքը: Դրանցից է կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Ս. Էջմիածին, որը, ինչպես հայտնի է, Այրիվանեցու ապրած ժամանակաշրջանում բավական հասունացած հարց էր դարձել: Դրա հետ կապված հեղինակի ցանկությունները արտահայտված են գանձերում տեղ գտած նրա խնդրվածքներում, որոնցից մեկում կարդում ենք.

Երկուց աթոռոց,
Թափառականոց,
Դարձ տուր այսրենոց⁷¹:

Հայ ժողովրդի քաղաքական ծանր վիճակի խոր ըմբռնման հետևանք է նրա խնդրանքը Արարչին՝ Վաղարշապատում կրկին հաստատել կաթողիկոսական աթոռն ու թագավորական գահը.

⁶⁹ «Գանձ համարէն թագաւորաց», ձեռ. հմ. 3540, թերթ 81ա:

⁷⁰ Ձեռ. հմ. 4068, թերթ 278բ:

⁷¹ Ձեռ. հմ. 3540, թերթ 205բ:

Աթոռք հաստատի,
Տեսան և արքայի,
Վաղարշապատի:

Յամենայն տեղի
Հայոց մեր ազգի,
Հանդիպիլ բարի⁷²:

Գանձերում արծարծված են նաև հեղինակի հայրենասիրական, ազգասիրական զգացումները: Բանաստեղծն իր հայրենիքի հետ ապրում է նրա ծանր օրերը, տառապում իր հալածված և հայրենի ժայռածերպերին ապավինած ժողովրդի վշտով, փրկության ելք որոնում՝ նրան այդ վիճակից դուրս բերելու համար:

Զարթի՛ր, ողորմած,
Զաւրացո՛ւ, գթած,
ԸզՔո կեցուցած
Զազգս մեր կոխած,
Իշխանաց սպառած,
Յարքայէ զրկած:

Հացն մեր Հանած,
Յաշխարհ վըտարած,
Ի քար խիզանած,
Արդ, դո՛ւ. Տէր կենաց,
Զնոսս փառաւք ած
Յերկիր հայրենեաց⁷³:

Եղած դժբախտությունները, սակայն, որքան էլ մեծ են, նրան չեն հուսահատեցնում, նա լավատես է, համոզված ապագայի հաղթանակում:

Արդար ու սրբին
Ազգն ոչ անցանեն,
Այլ թագաւորեն⁷⁴:

Խոսելով դավանաբանական հարցերի շուրջ առաջացած վիճաբանությունների մասին առհասարակ՝ Այրիվանեցին այդ հիմքի վրա ընդգծում է Հայաստանի հաստատուն դիրքը և ուրախացած բացականչում:

Յնձա՛. Հայաստան,
Յանկդ անշարժական,
Յարդ ևս ուղղական⁷⁵:

Մխիթար Այրիվանեցուն մտահոգել են նաև երկրի ներքին կյանքի դժգույն կողմերը, որոնք արտացոլված են նրա մի շարք գանձերում («Գանձ Բուն Բարեկենդանին», «Գանձ Աւագ Հինգշաբաթին», «Գանձ Թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ»): Անդրադառնալով սոցիալական

⁷² Զեռ. Հմ. 427, թերթ 217ա:

⁷³ Զեռ. Հմ. 4068, թերթ 274աբ:

⁷⁴ Զեռ. Հմ. 424, թերթ 37բ:

⁷⁵ Զեռ. Հմ. 3540, թերթ 205բ:

հարցերին, նա հասարակության բոլոր դասերին՝ «արքունական, քահանայական և աշխարհական», քարոզում է, հորդորում գերծ մնալ այնպիսի արտերից, ինչպիսիք են հարստության մոլուցքը, ազահուլությունը, խեղճերին զրկելը, վաշխառությունը, անազնիվ առևտուրը, ստախոսությունը, հարբեցողությունը, անբարոյականությունը, կախարհությունը և այլն: «Թարգմանչաց» գանձում, թվարկելով հոգևոր դասի ներկայացուցիչներին՝ եպիսկոպոսներին, քահանաներին, սարկավագներին, ցավով ընդգծում է, որ նրանք ևս այլասերվում են: Նրանց մի մասը, սնափառության և հպարտության զգացումից մղված, թշնամացել են միմյանց հետ, պառակտվել նաև հավատի հարցում: Մյուսները անկում են ապրում բարոյապես՝ ընկնելով մեղկություն և հարբեցողության գիրկը: Բանաստեղծի թվարկած բացասական երևույթներին մեջ հիշատակվում է նաև գուսանների երգը՝ կապված աշխարհիկ խրախճանքներին մասնակից հոգևորականների հետ:

Սատանայ գերեաց
Եպիսկոպոսաց,
Ի քահանայեաց
Եւ ի սարկաւագաց:
Առեալ քայքայեաց,
Ի պէս-պէս մեղաց
Ըստ իւր չար կամաց:
Զկեսըս փքացած
Ի հպարտ մտաց
Եւ սնափառաց:
Իսկ զայս յոխացած,
Ընդդէմ ընկերաց
Մահ մտաբերած:
Յոմանք բողբոջած,
Բազումք պոռնկած,
Եւ շատք շնացած:

Եւ այլք մըրափած
Մույլ ժամատողաց
Սիրող հեշտ կենաց:
Զոմանս դին արբած
Յօրինաց ի դրաց
Եւ երգս գուսանաց:
Զայս երդմնահարաց,
Ի ճիշտ վաճառաց,
Եւ սուտ սովորաց:
Ոմանք պատառած
Ի յուղղափառած
Ըստ հերձուածողաց:
Որթդ չօր տնկած,
Խիստ եմք մոլորած,
Տուր դարձ ի մեղաց⁷⁶:

Մխիթար Այրիվանեցին միաժամանակ մտահոգված է հասարակության ընդհանուր վիճակը բարելավելու ցանկությունը: «Զատիկի ճրագալուցին» գանձում նա բարեխոսում է նրանց համար, ովքեր ազատում են գերիներին, օգնում աղքատներին, պանդուխտներին, օտարներին, խնամում են որբերին, հիվանդներին, բանտարկվածներին⁷⁷:

⁷⁶ Զեռ. Հմ. 423, թերթ 110ա:

⁷⁷ Զեռ. Հմ. 424, թերթ 129ա:

Ուշագրավ է, որ հեղինակն իրեն դիտում է որպես ժողովրդական քարոզիչ, իր ազգի հոգսերին ու ցավերին մոտ կանգնած անձնավորություն: Որպես ժողովրդական քարոզիչ՝ նա կամենում է, որ իր ազգի հոգսերն ու ցավերն ամօքելու համար տված խորհուրդները վերաբերեն նաև բոլոր ազգերին:

Պահեսցի ի յականջս ազգաց
Եւ քարոզեսցի ի լուր ամենայն ժողովրդոց⁷⁸:

Գանձերից յուրաքանչյուրում բանաստեղծի խնդրանքն է.

Տալ խաղաղութիւն
Երկրիս երկնային
Եւ սէր մարդկային,
Բխումն պտղին,
Լիութիւն հացին,
Աճումն անասնին,
Յաւելում սիրին⁷⁹:

Նրա բանաստեղծություններում, ինչպես տեսանք, կան նաև ժամանակի նշանավոր անձանց անունների հիշատակություններ: Այդպիսիք են Լևոն Բ թագավորի, Հակոբ Կլայեցու և Կոստանդին Կատուկեցու, Սմբատ Օրբելյան իշխանի մասին եղած տողերը:

Մշակույթի, գրի և գրականության նկատմամբ ունեցած Մխիթար Այրիվանեցու առանձնահատուկ սերն արտահայտված է նաև նրա չափածո ստեղծագործություններում: Բավական է հիշել նրա գրական երեք խմբի (գանձ, տաղ, աղոթք) բաժանվող ստեղծագործությունները՝ «Գանձ Թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ», «Գանձ նորակերտ գիրք աւրհնելոյ է», «Տեսուն Մխիթարայ և բանիբուն վարդապետի ասացեալ վասն աւրհնութեան նորակերտ գրոց», «Աղոթք, զոր արարեալ է Մխիթար վարդապետի Այրիվանեցոյ»: Հիշյալ գործերում ընդգծելով ընդհանուր մարդկության քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի զարգացման համար գրերի ստեղծման պատմական նշանակությունը՝ դրա հետ շղկապված ներկայացնում է և հայ ժողովրդի գրերի գյուտի պատմությունը՝ դիտելով այն որպես ընդհանուր զարգացման մի օրինակ երևույթ:

Բանիւ քարոզեալ,
Գըրով հաստատեալ,
Զգործս աւրէնք եղեալ:
Զհազար ամ աճեալ,
Յորթն որ հայր տնկեալ,
Հազար ուռ բուսեալ:
Յուռն արմունկ ծաղկեալ,
Հազար շիտակեալ,
Եվ ողկոյզ կախեալ:

Պըտուղք հազարեալ,
Յողկոյզն այն շարեալ,
Եվ անթիւս աճեալ:
Մի պըտուղք ճըմլեալ,
Գինին որոշեալ
Ի և Դ համեալ...
Նոյն շնորհս այս աճեալ,
Երկիր ծավալեալ,
Զոլորտս լըցեալ⁸⁰:

Բանաստեղծը «Սրբոց Թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ» գանձում տալիս է գրերի ստեղծման պատմության հանգամանակից նկարագրությունը: Նա մասնավորաբար հիշատակում է Մաշտոցի դժվարին աշխատանքը, Վառձապուհ թագավորի ցուցաբերած աջակցությունը, Վահրիճի և Դանիելի մասնակցությունը, Դանիելյան գրերի անօգտակարությունը, ապա Մաշտոցի կողմից հայկական, ինչպես նաև վրաց և աղվան գրերի ստեղծումը, նրա ուսուցչական գործունեության ծավալումը Գողթնում և այլուր: Հետագայում է, որ գրերի գյուտի մասին խոսելիս Մխիթար Այրիվանեցին, շեղվելով Կորյունից, Վարդան Արևելցու և Կարապետ Սասնեցու նմանութամբ գրերի գյուտի տեղը համարում է Բալու քաղաքը: Անդրադառնալով այբուբենի հնչյունական համակարգին՝ նա անում է ստույգ թվական նշումներ: «Թարգմանչաց» գանձը ամբողջությամբ, իր բովանդակած փաստացի տվյալներով, կարող է դասվել հայ գրերի գյուտի շուրջը եղած պատմական սկզբնաղբյուրների թվին:

Գորովանքի, անասելի սիրո խոր զգացումով է տոգորված հեղինակի յուրաքանչյուր տողը՝ նվիրված մեր գրչագրերին, ձեռագիր մատյաններին: Զեռագիրը, գրում է նա, իրենից ներկայացնում է երկնայինի և երկրայինի միաձուլյ մի ամբողջություն:

Որակով երկնային
Եւ ձևով երկրային,
Որպես հոգի և մարմին⁸¹:

Շատ լավ հասկանալով մշակույթի պահպանման գործում ձեռագրերի խաղացած դերը՝ նա խնդրում է Տիրոջը, ասելով. «Արձանացո՛յ զայս ի Սուրբ Եկեղեցւոյ Քոյ՝ իբրև զաշտանակն լուսոյ ի մէջ տաճարին: Մի մեկնեսցի ի սմանէ շնորհք և զօրութիւն Քո, որպես ի Քո ձեռամբ գրեալ և բե-

⁷⁸ Զեռ. Հմ. 3987, թերթ 229բ:

⁷⁹ Զեռ. Հմ. 3540, թերթ 85ա:

⁸⁰ Զեռ. Հմ. 4844, թերթ 138ա:

⁸¹ Զեռ. Հմ. 3987, թերթ 231ա:

րանով Քո խօսեցեալ պատգամացն: Այլ յարակայ յամենայն ժամանակի ազդուժն եղիցի ի սմանէ, նշանաց արուեստից աստուածականաց»⁸²: Այրիվանեցին աղոթում է ձեռագրերի գրչության, կաշվե կազմերի, արտաքին զարդերի համար (լինեն դրանք պղնձից, երկաթից թե մարգարտից): Նա չի մոռանում ստացողին, պատվիրատուին, գրողին, կազմողին, խնամողին, ինչպես նաև այն պահարանը, ուր պահվում է ձեռագիրը, այն տունը, որը նվիրաբերում է ձեռագիրը եկեղեցուն: Այս հանգամանքն ընդգծելի է հատկապես, որովհետև այն իր ժամանակին նպաստել է ձեռագրերը կենտրոնացնելու վանքերին կից ստեղծված մատենադարաններում:

Ինչպես նկատել է Գարեգին Հովսեփյանը, Մխիթար Այրիվանեցու՝ եկեղեցու պատկերներին և գրքերին նվիրված բանաստեղծութունների կապակցութեամբ, դրանք հետաքրքրութուն են ներկայացնում նաև ազգագրական և արվեստի առումով, որովհետև հեղինակը այնտեղ խոսում է եկեղեցու պատկերների նկարման, ներկերի ստացման, նորահարսի արդուզարդի և այլնի մասին: Այդպիսի նկարագիր ունի նաև «Որդոց և թոռանց Սրբոյն Գրիգորի» գանձը, որն աչքի է ընկնում իր պատմական բովանդակութեամբ և գեղարվեստական խոսքի դրսևորումներով: Ստորև բերում ենք գանձի ազգագրական առումով հետաքրքրութուն ներկայացնող հատվածը, որտեղ բանաստեղծը, Տիրամորը ներկայացնելով որպես նորահարսի, մանրամասն ներկայացնում է նրան նվիրաբերող արդուզարդը՝ նշելով նաև դրանց ստեղծման միջոցները.

Ի բերդկաց վիմոց,
Ակունքս ի շարոց՝
Կո՛յս, քեզ լանջանոց:
[Ոստրէոց] գեռնոց,
Հատ մարգարտանոց՝
Կո՛յս, քեզ բազկանոց:
[Ի] մըջնառիւծոց,
Միլ ոսկէ քաղոց՝
Կո՛յս, քեզ գընդանոց:

Յանծին կենդանոց
Ապրչում թելոց՝
Կո՛յս, քեզ քողանոց:
Սիգական որդնոց,
Շարժական տղոց՝
Կո՛յս, քեզ վառ ներկոց:
Խոտական դեռնոց,
Կաղմազործ ճիւճոց՝
Կո՛յս, քեզ գլխարկոց...⁸³:

Նորահարսի արդուզարդի այս ընդարձակ նկարագիրը հեղինակը վերցրել է իրական կյանքից: Ուշագրավ է, որ այդ զարդարանքները բոլորն էլ ունեն բնական ծագում և, սակայն, ներկայացված են գեղարվեստական այնքան նուրբ ճաշակով, որ իրենց գեղեցկութեան ու շքեղութեան մեջ թվում են լոկ բանաստեղծական ներկայութուն:

⁸² Նույն տեղում:

⁸³ Զեռ. հմ. 4068, թերթ 276բ-277ա:

Բանաստեղծական խորը ներշնչանքով է ներկայացված նորահարսի արդուզարդի նկարագիրը նաև «Նորակերտ գրոց աւրհնելոյ է» տաղում: Այստեղ արդեն, գրքերը՝ ձեռագրերն են նմանեցվել նորահարսի զարդարանքների, իսկ եկեղեցին՝ նորահարսի: Մխիթար Այրիվանեցին գրում է.

Խնդա՛ խորանդ լուսոյ,
Խորհրդարանդ Աստուծոյ,
Ընկա՛լ զընծայս խորհրդոյ՝
Զգիրս աւրինաց հաւատոյ:
Այս քեզ շարոց մարգարտոյ,
Եւ գումարտակ քում զըլխոյ,
Նոյն մեհեւանդ քում անթոյ.

Եւ բազկալար դաստակոյ:
Սա մատանի քում կընքոյ,
Եւ գինդ գեղոյ ականջոյ,
Սա տարի գաւտոյ քոյդ միջոյ,
Եւ շաղք հերաց քում հիւսոյ,
Ոսկի խնձոր խաղալոյ
Եւ վարդ ծոցոյդ յարակայ⁸⁴:

Մխիթար Այրիվանեցու գանձերում և տաղերում կան բնական պատկերների գեղեցիկ վերարտադրութուններ, որոնք վկայում են բանաստեղծի՝ բնությունը իր շարժման, կենդանութեան մեջ ընկալելու կարողութունը: Այսպես. Ծաղկազարդի տոնն է. արթնացած բնությունը ուրախութուն է ապրում, ծառերը ցնծում են, ծափ զարկում, ինչպես շնչավոր կենդանի էակներ: Ուրախութեան մեջ է նաև կենդանական աշխարհը.

Զի ծառք անտառի,
Տան ծափըս ծափի,
Յընծան բերկրալի:

Լերինք խայտալի,
Ըզխոյս առ մաքի,
Գառինք ի բըլրի⁸⁵:

Նրա ստեղծած երևակայական պատկերներն անգամ թվում են իրական, շոշափելի.

Սրովբէք սլանան,
Քրովբէք ցոլանան,
Դողան, հիանան,
Թռչին, վերանան,
Սարսեն և մնան:

Հրամանիդ անսան:
Փայլեն բոցանման,
Փայլակն աննման,
Փառաւք հաղթական⁸⁶:

Ծիշտ է, գանձերում նման կտորները շատ չեն, սակայն եղածներն էլ բավական են թարմացնելու, գեղարվեստական շունչ հաղորդելու այդ ստեղծագործութուններին:

⁸⁴ Զեռ. հմ. 6529, թերթ 3բ:

⁸⁵ Զեռ. հմ. 424, թերթ 102ա:

⁸⁶ Զեռ. հմ. 3540, թերթ 81ա:

Մխիթար Այրիվանեցու բանաստեղծական խոսքի դրսևորումն է և նրա չափածո Հիշատակարանը, որն առանձին տեղ է գրավում մեզ հասած չափածո Հիշատակարանների մեջ:

Իբրև բանաստեղծ՝ Մխիթար Այրիվանեցու կերպարն ավելի ամբողջական է դառնում, երբ խորանում ենք նրա չափածո ստեղծագործությունների տաղաչափական և հանգավորման արվեստի մեջ:

Օգտագործելով իր նախորդների կիրառած տաղաչափական ձևերը, կրելով այդ բնագավառում հատկապես Ներսես Շնորհալու ազդեցությունը՝ Մխիթար Այրիվանեցին գանձագրության մեջ ստեղծել է բանաստեղծական արվեստի նոր խոսք: Նրա մոտ է, որ առաջին անգամ հանդիպում ենք հանգավորված և կանոնավոր չափերով գրված գանձերի, որով և նա օրինակ է հանդիսացել Հետագայի գանձագիր Հեղինակների համար: Սակայն, նախքան այդ հարցերին անցնելը, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նրա օգտագործած ծայրակապային արվեստի նոր խոսքին: Ինչպես նկատեցինք վերը, Այրիվանեցին, օգտագործելով հանդերձ իր նախորդ և ժամանակակից Հեղինակների կիրառած ծայրակապային ձևերը (մեկ գանձի կամ տաղի սկզբնատուները հոդում են կամ տվյալ տոնի, կամ Հեղինակի անունները և կամ այբուբենի «Ա-Ք» տառերը), զարգացրել է այն և ծայրակապերով միմյանց հյուսել մեկ փունջ գանձեր: Դրանով նա ոչ միայն գանձերը ներկայացրել է որպես մեկ ամբողջական խումբ, այլև ծայրակապերի միջոցով հաղորդել բացառիկ նշանակություն ունեցող տեղեկություններ իր այդ կարգի աշխատանքների շուրջը: Խորանալով այս հարցում, տեսնում ենք նաև հետևյալը:

Նշված 14 գանձերի ծայրակապերից յուրաքանչյուրը կազմված է 10 Հնչյունների միացությունից, որոնք իրենց Հերթին հանդիսանում են գանձի տների սկզբնատուները իսկ դրանով պայմանավորված է և տների քանակ. յուրաքանչյուր գանձ կազմված է 10 տնից, 14 գանձերը միասին՝ 140 տնից: Դրանցից բացի, ծայրակապային 10 Հնչյուններից, իսկ դրա հետ պայմանավորված նաև 10 տներից են բաղկացած «Սարգիս գրիչ», «Վէշտասանք է», «Տէր Մխիթարա» ծայրակապերով գանձերը: «Երրորդ աւուրն գալստեան Հոգոյ» գանձի «Տէր Մխիթարա վ» ծայրակապը նույնպես ունի 10 Հնչյուն, սակայն ներկայացնում է 8 տուն, որովհետև «Տէր»-ը գանձի սկզբի բառն է՝ «Տէր գաւրութեանց սաբաւօթ բարձրեալ...»: Մնացած գանձերը կազմված են 6-8 տներից, որով Մխիթար Այրիվանեցու գանձերի տների ընդհանուր քանակը հավասարվում է մոտ 200-ի:

Մխիթար Այրիվանեցու գանձերի տները չունեն տողերի կայուն քանակ և տատանվում են 30-50-ի միջև: Միջին հաշվով նա գրել է մոտ 7000 տող

գանձ: Ինչպես երևում է տողերի քանակից, գանձի տները բավական ծավալուն են, հետևապես և անհարմար է առանց դադարի երգելու համար: Իսկ գանձերը, ինչպես հայտնի է, ստեղծվել էին այդ նպատակով: Այս հանգամանքն էլ նկատի առնելով, Մխիթար Այրիվանեցին յուրաքանչյուր երեք տողով ամփոփել է նախադասությունը՝ ստեղծելով ենթատուն տան մեջ: Դա հասկացվում է ոչ միայն նախադասության բովանդակությունից, որոնք գանձերում լինում են երբեմն շատ ճապարկված, այլև ձևից: Այրիվանեցին դա նկատել տալու համար գանձերի առաջին երեք տողերը սկսում է նույնահնչյուն տառերից (լինեն դրանք ձայնավոր թե բաղաձայն) կազմված բառերով: Այսպես, օրինակ.

Երգս յաւերժական,
Երգեմք բանական,
Երիցդ միական⁸⁷:

Խորհուրդ անքննին
Խորք որ չերևին,
Խանութք անզննին...⁸⁸:

Հետաքրքիր է նկատել, որ նման սկսվածքը ընդհանուր է համարյա բոլոր գանձերի համար: Մրանից տարբեր նպատակներով են օգտագործված համահնչյուն տառերն ու բառերը գանձերի և տաղերի միջին մասում, որոնց երբեմն զուգորդվում է և բառերի իմաստը: Զևի և բովանդակության ներդաշնակության միջոցով արդեն բանաստեղծը փորձում է ավելի Հնչեղ դարձնել իր խոսքը, ինչպես.

Մի՛րտ իմ սասանի,
Մարսափ զիս ունի,
Մակս պիղծ Յուզայի⁸⁹:

Մխիթար Այրիվանեցու գանձերի հիմնական խումբը գրված է միօրինակ տաղաչափության մեջ՝ պարզ յամբ-անապետոյան Հինգ վանկանի (2+3) ոտքերով: Իրենց տաղաչափական տարբեր ձևերով ուշադրության արժանի են

⁸⁷ Մատենադարան, ձեռ. հմ. 10050, թերթ 260ա:

⁸⁸ Ձեռ. հմ. 3540, թերթ 232բ:

⁸⁹ Նույն տեղում, թերթ 244ա:

Հատկապես նրա «Յարութեան», «Երրորդ աւուրն գալստեան Հոգոյ» գանձերը և օրհնութեան երկու երգերը:

Մխիթար Այրիվանեցին առաջին բանաստեղծն էր, որ գանձերում կիրառեց Հանգը, որով այդ ստեղծագործութիւնները դարձան Համեմատաբար ավելի ռիթմիկ և երաժշտական: Նրա գանձերը գրված են տարբեր Հանգերով (տները նույնահանգ են): Պատահում է, որ նույն գանձերում Հանգերը կրկնվում են, այդ դեպքում նույնահանգ տները իրար չեն Հաջորդում, այլ Հանդիպում են երկու-երեք տնից հետո: Օրինակ՝ «Ծննդան ճրագալուցին» գանձում օգտագործված Հանգերի Հաջորդականութիւնը. «ան, ին, եալ, ի, աց, եա, ի»: Բազմահանգ են գրված նաև նրա օրհնութեան երգերը, իսկ սրանց Հակառակ՝ նույնահանգ շարադրանք ունեն «Սուրբ Աստուածածին կուսին» և «Աստուած երկնից խոնարհեալ» տաղերը: Սա վկայում է, որ Մխիթար Այրիվանեցին Հանգերի կիրառման գործում առաջնորդվել է ստեղծագործութիւնների ծավալով:

Հետաքրքիր ձևով է օգտագործել Հանգը «Յարութեան» գանձում: Այստեղ գանձի առաջին մասերում յուրաքանչյուր չորս տողը կազմում է ենթատուն: Հանգը փոխվում է երկու տողը մեկ, որով մեկ ենթատունը ունենում է երկու տարբեր Հանգեր: Սակայն դա կայուն չէ ամբողջ գանձի Համար: Որոշ ենթատներ գրված են մեկ Հանգով, մինչդեռ պարտադիր, յուրաքանչյուր ենթատունը մեկ փոխվում է Հանգը: Այս գանձը ուշադրութեան արժանի է նաև բանաստեղծական խոսքի այլ դրսևորումներով, ինչպիսիք են «երեկ» և «այսօր» Հակադրութեան ստեղծումը, կրկնակների օգտագործումը, շեշտադրութիւնը և այլն:

Մխիթար Այրիվանեցու չափածո բոլոր ստեղծագործութիւնները երգվել են եկեղեցիներում, այդ են վկայում դրանց խաղաղգրված Հնագույն օրինակները ձեռագրերում: Հիշենք միայն ծայրակապերի միջոցով Հեղինակի Հայտնած այն կարևոր տեղեկութիւնը, որը վերաբերում էր գանձերի այդ խմբի իր իսկ կողմից ձայնագրված լինելուն. «Տէր Մխիթարա վարդայպետի բայիւ երգել Հինգոտասան բան քարոզից»:

Մխիթար Այրիվանեցու բանաստեղծական արվեստը իր ինքնատիպ ոճով ժամանակին մեծ դեր է խաղացել գանձագրութեան զարգացման գործում: Նրա գանձերի անմիջական ազդեցութեան տակ են գրվել Հովհաննես Գանձասացի, Գրիգոր Նյաթեցու, Մատթեոս Զուղայեցու, Առաքել Բաղիչեցու նմանատիպ ստեղծագործութիւնները, որոնցում առկա են ոչ միայն Մխիթար Այրիվանեցու կիրառած չափաբերական արվեստի ձևերը, այլև նրա գանձերից վերցված առանձին բառերի, նույնիսկ նախադասութիւնների բառացի կրկնութիւններ:

Այժմ, երբ ուրվագծվում է Մխիթար Այրիվանեցու ստեղծագործական կյանքի ընդհանուր պատկերը, որոշակի է դառնում այն մեծ դերը, որ կատարել է նա XIII դարի Հայ մշակույթի զարգացման գործում:

Իր Հարուստ, բազմաժանր գրական ժառանգութեամբ և գիտամանկավարժական գործունեութեամբ Մխիթար Այրիվանեցին Հաստատուն տեղ է գրավում միջնադարյան Հայ նշանավոր մատենագիրների, պատմիչների, գանձասաց բանաստեղծների, երգահանների, ինչպես նաև գրչութեան արվեստի քաջահմուտ երախտավորների շարքում: Ուշագրավ է, որ նշված բնագավառներից յուրաքանչյուրում, շարունակելով իր նախորդների գործը, նա ասել է նոր, յուրովի խոսք, որով և նպաստել է մշակույթի տվյալ ճյուղի առաջընթացին: Նրա պատմական երկասիրութիւնը՝ «Նոր պատմութիւնը», ունենալով ժամանակագրական բնույթ, իր նախորդ նման նորաբնույթ ստեղծագործութիւններից առանձնանում է կառուցվածքով, բովանդակութեամբ և օգտագործած սկզբնաղբյուրներով: Առաջին անգամ այստեղ ենք Հանդիպում պատմական տվյալ ժամանակաշրջանում գործող Հայ, վրացի, հույն, պարսիկ, արաբ, սելջուկ, մոնղոլ, հռոմեացի թագավորների, իշխանների, կուսակալների, կաթողիկոսների, եպիսկոպոսների ժամանակագրական անվանացանկերին: Դրանց Հետ տրված մատենագիտական ցանկերը մեծ նշանակութիւն են ստանում Հայ մատենագիտութեան պատմութեան և պատմական կարևորութիւն ներկայացնող խնդիրների լուծման Համար:

Ուստի պատահական չէ, որ այս երկը, իբրև պատմական սկզբնաղբյուր, այժմ էլ իր առանձին տեղն է գրավում մինչև XIII դ. ընդհանուր պատմութիւնն ուսումնասիրողների Համար:

Միջնադարյան Հայ մատենագրութեան բարձր զարգացման վկայանիչ է Մխիթար Այրիվանեցու կազմած բարձրագույն ուսումնական Հաստատութիւններում Հանձնարարելի գրականութեան ծրագրային ցուցակն ու Համապատասխան ժողովածուն՝ «Ճառընտիրը»: Այս Հատորը գործնականում նախատեսված է եղել իբրև ուսումնական ձեռնարկ բարձրագույն դպրոցներում սովորողների Համար: Իրականում Մխիթար Այրիվանեցու վիթխարի աշխատանքի շնորհիվ, ժողովածուի ստեղծմամբ, պահպանվել և Հաջորդ սերունդներին են փոխանցվել անցյալի գրական Հուշարձանների վերականգնված, ամբողջական, լավագույն բնագրերը: Դրանցից շատերը ցայժմ Հայտնի բնագրերից Հնագույններն են: «Ճառընտիրը» իր մեջ ամբարած բնագրերով խիստ կարևոր նշանակութիւն ունի և միջնադարյան Հայկական բարձրագույն ուսումնական Հաստատութիւնների ծրագրերը ուսումնասիրելու առումով:

Հանդես գալով գանձերի իր ժողովածուով՝ Մխիթար Այրիվանեցին նոր բովանդակութուն և բանաստեղծական շունչ է հաղորդել զբանս: Առաջինը կիրառելով հանգավորման և չափաբերական կանոնները գանձագրութ-
յան մեջ, ապա նորովի օգտագործելով ծայրակապային արվեստը՝ նա զար-
գացման նոր աստիճանի է հասցրել գանձագրութունը:

Գրին ու գրականությանը նվիրված նրա ստեղծագործութունների փունջը հեղինակի լուսավորչական հայացքների, այն ժողովրդին փոխան-
ցելու, և ազգային մշակույթի նկատմամբ սեր և գորովանք արթնացնելու
նրա փորձերի վառ վկայութունն է:

Իբրև ջերմ հայրենասեր, ժողովրդասեր, առաքելական եկեղեցու դավա-
նանքի պաշտպան՝ Մխիթար Այրիվանեցին իր ստեղծագործութուններով
նպաստել է նաև ժողովրդի գոյատևմանը, օժանդակել նրա մղած ազատա-
գրական պայքարին:

ԳԱՆՁԵՐ

1

ԳԱՆՁ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՑԻՆ

- Տարփումն ըղձական, տոչոր անձկական, տոհմից բանական:
Հայր անճառական, անըսկրզբնական, անպատճառական:
Աներբայական, անհաս և անսահման, Որդիդ միական:
Ծընունդ Հայրական, և լոյս տիրական, ճաճանչ անձկական:
5 Նըշոյլ ազդական, նըկարագրական, Հաւր Քում կերպարան:
Հաւասար և Բան, Համգոյական, Հոգիդ իսկական:
Բըղխումն յարական, յականէ Հայրական, յանձամբ յատկական:

Աղբյուրներ

- A-ձեռ. Հմ. 7785, 6ա-9բ, Թերի. սկսվում է՝ ճառագայթային ի մի գումարին տողով:
B-ձեռ. Հմ. 4068, 1ա-3ա:
C-ձեռ. Հմ. 423, 59ա-60բ, 61բ-63ա:
D-ձեռ. Հմ. 5785, 70բ-72ա, 73բ-75ա:
E-Վնտ., ձեռ. Հմ. 382, 9բ-12բ:
F-ձեռ. Հմ. 4011, 7ա-8բ, 10ա-12բ:

Խորագիր

A ի ստորին լուսանցս՝ ճրագալուցին է Աստուածայայտնութեանն: B չիք:
C Եռամեծի և բանիբուն վարդապետի Տէր Մխիթարայ Այրիվանեցոյ ասացեալ
Այստուածայայտնութեան ճառ: D Եռամեծի և բանիբուն վարդապետի, Տէր
Մխիթարայ Այրիվանեցոյ ասացեալ գանձ Աստուածայայտնութեան ճրագալուցին:
E Գանձ ճրագալուցի Մննդեան Տէր Մխիթարայ: F չիք:

Ծայրակապ Տէր Մխիթարայ:

Բնագիր

1 A չիք 1-16 (Տարփումն... չող):

B չիք 1-44 (Տարփումն... իմացեալ):

F չիք 1-18:

2 D չիք և:

3 C չիք և: DE Աներբական, անուր ինքնական փխ Աներբայական: CE Որդիտ:

4 D անսահման փխ Հայրական: DE անձնական: C անձրնական փխ անձկական:

5 E Նըշոյլ ազդական: C նըկարագրական: E նըկարագրական: C Հօր:

6 C Հոգիտ:

7 D Բըղխումն, յականէ: E Բըղխումն յարական, աղբեր Հայրական, անձամբ յատկա-
կան: D անձամբ յատկական:

Կատարելական, յանսահմանական, որ ես Հաւր սահման:
 Որդւոյ քրննական, առաւղ բաշխական, յանձն Երրորդական:
 10 Բնութիւն միական, անհատ յաւիտեան, բարեխօսութեամբ
 Կուսին ըղձական, արժանացոյ ըզմեզ քաւութեան,
 Աղաչեմք:

Էդ անեղ, անծին, Էդ Հաւր ծոցածին, Էդ լոյսդ անքրննին:
 Սկիզբն առաջին, ծննդեանն անբաժին, բրդիմանն անհասին:
 15 Ըստ լուսոյ արփին, արեգականային, շող ճառագայթին:
 Ի մի գումարին, ոչ գանազանին, աղբիւր լուսային:
 Գետք գնացիւք յայտնին, ծով ծաւալային, անձն Հաւր անծին:
 Բազուկ բարձր Որդին, մատն յայտնեալ Հոգին, Հայր արմատ ծառին:
 Որդիդ ոստ Նըմին, պտուղ Սուրբ Հոգին, մի ի յերեսին:
 20 Երիս ի միին, զի ես անբաժին, սկիզբն յաւիտեանին:
 Որ նախ առաջին, նոյն և դու վերջին, երկիր և երկին:
 Փառաւք Քո փայլին, զի Քեւ պարագրին:
 Ահա ընկալ՝ գերկըրպա:

- 8 DE անսահմանական: C որ եստ: D որ եսդ: E որպէս փի որ ես: CE Հօր:
 9 CDE Որդոյ: C քննական: CD առօղ: DE անձն:
 10 E 10-12 Բնութիւն միական, անհատ յաւիտեան
 Ընգալ գերզս բանական, միջնորդութեամբ կուսին ըղձական,
 Աղաչեմք:
 11 C Յղձական: C քաւութիւն:
 12 D չիք:
 13 D անեղածին: C Հօր: E լոյս: C անքննին:
 14 C Սկիզբն: DE Ըստիկզբն: CE ծրնընդեանն: D ծննդեանն: C բրդիմանն:
 DE բրդիմանն:
 D անհատին փի անհասին:
 16 CD սկիզբն ունեն յանձնք յատկային: CDE և փի ոչ: AE աղբիւր:
 E Արև լոյս արփին, արեգականին, անձնք յատկայինք փի ըստ... արեգակ-
 նային:
 17 CDE Գետքն փի գետ գնացիւք: AD անձն: A Հայր: C յանձն Հօր:
 E Հայրածին փի Հաւր անծին:
 18 C Հայրամատ փի Հայր արմատ:
 19 CD Ոստ նըմին որդին փի Որդիտ ոստ նըմին: E Որդիդ: ACD պըտուղ:
 CD միակ յերեսին, E Միակ երեսին, F միակ յերրակին և փի մի ի յերեսին:
 20 CDF և երրեակ միակին փի երիս ի միին: E միակին փի միին: CDF եսդ փի ես:
 21 C յերեսին փի երկիր և երկին: F երկիրս:
 22 CF փառք: CF Քոյ:
 23 CD Բարեխօսութեամբ: E գերզս բա.: F Ընկալ:

Րամից հրեղինաց, րամկական զաւրաց, րախճան բանակաց:
 25 Բանիւ Քո ստեղծած, Հոգւով Քո լըցած, Հայր բնաւից գըթած:
 Երիս երրեկաց, փառաբանողաց, երրակիր դիմաց:
 Որք երգ սըրբասաց, և գովեստ փառաց, տան Քեզ ի բարձանց^{1*}
 Ոչ քուն տան աչաց, նինջ արտեանաց, և հանգիստ անձանց:
 Այլ տարփումըն մտաց, զագդուժըն շնորհաց, ի Քէն յառաջած:
 30 Տան ստորականաց, Հոգւով զաւրացած, պատժէն ընդ մեղաց:
 Զդասս ամբարըշտաց, իբր յիւր ընկերաց, ամբարտաւանաց:
 Ընկէց ի փառաց, նոյն և յաշխարհաց, զատաւզսրն մեղաց:
 Հանեն կառնթաց, որով կաս բերկրած, յաթոռը փառաց:
 Քեզ փառք ի փառաց:
 35 Ահա ընկալ՝ գերկըրպա.:

Մըտաւք քո տեսեալ, մեծ գործ կատարեալ, միշտ յաւերժացեալ:
 Երկինք երկն առեալ, երկիր հաստատեալ, և լոյս տարածեալ:

- 24 F Բամեալ փի Բամից: C գորաց:
 25 A Բանիդ: EF Հոգով: C Բանիւ Քո ըստեղծած, կամօքդ արարած, Քոյ է
 օրինած, Հոգւով Քոյ լըցած, Հայրըդ բնաւից գըթած, Տէր ես ողորմած:
 D Բանիւ Քո ստեղծած, կամաւքդ արարած, Հոգով Քո լըցած:
 26 C Յերիս երակաց: DEF երրակաց: CEF միակիր փի երրակիր:
 27 C Եւ գովեստ փառաց, որք երգ սըրբասաց փի Որք... փառաց: E սըբասաց:
 28 CDF տալ քուն փի քուն տան: CDEF ոչ հանգիստ կամաց փի հանգիստ
 անձանց:
 A նինջ արտեանացը-ը ավելացված է այլ գրով:
 29 CDEF Այլ իղձս (C յըղձս) մտաց, փափաք տենչ (C ջ) անաց, և սիրով քո առած
 (CDF քո վառած):
 Զագդումըն շնորհաց, Քոյին պարգևաց:
 30 CD ըստորականաց: F ստորնականաց: F Հոգով: CDF զայրացած փի զաւր-
 ցած: E Հոգով գորացած: E պատժէն:
 31 C Զդասն: A ամպարըշտաց: C իւրեանց: D իւր: E իւր ընգերաց:
 32 CDF անկեալ փի ընկէց: E Անգեալ ի փառաց նաև փի Ընկէց... նոյն և:
 C նաև, F նայի փի նոյն և: C աշխարհաց, զատողսն: D զատեցողսն:
 EF զատեցողս:
 33 C յորովք զըւարճանաց, D որովք զուարճանաս փի որով... բերկրած:
 E զուարճանան, F զուարճանաս փի կաս բերկրած: F յաթոռը:
 34 CDEF Քեզ փառք ի բարձանց:
 35 CD Բարե.: E Ընգալ: F Ընկալ:
 36 C Մըտօք քոյ: CD մեծագործ, E գործ մեծ փի մեծ գործ: C աւէժացեալ:
 DEF յաւէժացեալ:
 37 CDEF Երկին (EF ք) բարձրացեալ փի երկինք... առեալ: C յերկիր: CD ծաւ-
 ւեալ փի տարածեալ:

^{1*} Հմտ Ղուկ. Բ 14, ԺԹ 38:

վեց գունդ բոլորեալ, գերկրաւ պարառեալ, և վերամբարձեալ:
Բոյսք պէսպէս բրդիսեալ, սերմանք կատարեալ, և զդրախտըն տընկեալ:

- 40 Արեգակն արկեալ, լուսին բոլորեալ, աստեղք տարածեալ:
Ծով կենդանածնեալ, աւղ թըռչնաւք լըցեալ, յաւրհնելդ Քո անեալ:
Գազանք ըստեղծեալ, անասունք յաւրեալ, սողունք պատշաճեալ:
Ի խորհուրդ մըտեալ, Քո զմարդն յաւրինեալ, Քեզ զաղափարեալ:
Ի դրախտին եղեալ, փառաւք զարդարեալ, գործել և պահեալ:
45 Զոր չարն իմացեալ, կողիւրն պատրեալ, էհան մերկացեալ^{1*}:
Ահա ընկա՛լ գերկրպաւ:

Խնամեալ Քո սիրով, խրատեալ մեծ գըթով, խորին խորհըրդով:

ԶԱզամ իւր ծնընդով, զարմ և զաւակով, յերկարեալ ամով:

Աւրինադրելով, մարգարէս տալով, և կազդուրելով:

- 50 Երկայնամտելով, հինգ հազար ամով, դարձի սպասելով:
Իսկ մեր գործելով, ըզչարիս յոլով, Քեզ կարաւտ գոլով:
Յաղթեալ Քո սիրով, հաճեցար Հոգով, Հաւր Քոյին կամով:
Պարագրի մարմնով, անշուշտ մընալով, ի ծոց Հաւր գոլով:

38 C գերհամբարձեալ, DE գերմբարձեալ փխ վերամբարձեալ:

39 D բըրեալ: AEF սերմամբք: C սերմամբ: A չիք և: C դըրախտն: D դըրախտ:

F դրախտըն: E տընգեալ:

40 C և աստեղծ փխ աստեղք: D և աստեղք:

41 C կենդանածնեալ: CEF կենդանածնեալից հետո ունեն. յողակըս (E դաւղակա)
հանեալ: D լաւդականս հանեալ: CDEF թըռչունս թըռուցեալ, աւրհնեալ
Քոյ և անեալ, մասամբք բազմացեալ, և առաւելեալ փխ աւղ... անեալ:

E աւրհնեալ:

42 CDF գազանքս: E գազանքս ստեղծեալ: C յանասունքս: DEF անասունք:

CE յօղեալ: CDEF սողունք:

43 C Քոյ, մարդն, օրինեալ:

44 C փառօք: CD գործովք պահպանեալ: F գործովք զայն փխ գործել և:

45 C եհան:

46 CD Բարե: E Ընգալ գե: F Ընկալ:

47 CE խընամեալ: E խըրատեալ: B խոր Քո փխ խորին:

48 C ծընընդով: B յերկարել: C չիք յերկարեալ ամով:

49 C օրինադրելով, կասդուրելով:

50 C երկայնամտով:

51 A Իսկ փխ գոր: C կարօտ: E կարաւտելով:

52 B յաղթել, Քոյն: CD Քով: A Հոգւով: CDF գըթով փխ Հոգով: CD Հօր:

53 CE Հօր:

^{1*} Տե՛ս Ծննդ. Բ:

Աստուած բոլորով, նոր մարդ լինելով, խառնուած առնելով:

55 Ոչ փոփոխելով, կամ խառնակելով, այլ ամբողջ մնալով:

Յերկինըս ելանելով, երկրի շըջելով, կառավարելով:

Ահա ընկա՛լ գերկրպաւ:

Ի ժամանակի, ի վերջին ամի, ի լրումն ամենի:

Հուր հեղեալ յերկնի, մարդ եղեալ յերկրի, անթարգմանելի:

60 Գալ Գաբրիէլի, ի նազարեթի, առ դուստրըն Դաւթի:

Ով երանելի, կոյս սուրբ տիրուհի, մայր Աստուած Բանի:

Ուրախ լե՛ր յոգի, բերկրեալ ի մարմնի, Տեսարդ ի քէն ծնանի^{1*}:

Անմայր ի յերկնի, անհայր ի յերկրի, Որդի քո լինի:

Միայնդ արժանի, ի ծնունդս Եւայի, ծընաւդ Յիսուսի:

65 Փրկիչն ամենի, ի քէն ծընանի, որդի քո լինի:

54 CDEF Աստուածդ սիրով փխ Աստուած բոլորով: C չիք խառնուած առնելով:
DEF միաւորելով փխ խառնուած առնելով:

55 B ոչ փխ կամ: C փոփոխելով: CDEF ոչ պակասելով փխ կամ խառնակելով:
CDEF չիք այլ:

56 A յերկինս: B ի յերկինս ելով փխ Յերկինս ելանելով: AB յերկրի:
AB շըջելով: CDEF Յերկինս գոլով յերկրի փխ Յերկինըս... երկրի: E յերկրի
փխ երկրի: CDEF նախախրնամտելով փխ կառավարելով:

57 A գերկըրպագեալ: B չիք ընկալ գերկրի: C Ահա կեցոյ և: DF Յիշ և ևս:
E Ընգալ գերգըս բանականս:

58 CD դարի փխ ամի: C չիք ի: C լըրումն յամենի:

59 CDF Էդ անճառելի (C անճառի), հուր արկեալ երկրի, անիմանալի:
Մարդ եղէր երկրի, անթարգմանելի, և անհասանելի: E Հուր... մարդի միջև
ունի. արկեալ յերկրի, Էդ անճառելի, անիմանալի: E անթարգմանելի,
անհասանելի:

60 BCDEF գոլ փխ գայ: A դուստրը: CDF ունի շարունակություն.

Բարբառ յսքանչելի, և զարմանալի, գոչէր սուրբ Կուսի:

Ողջոյն բերկրալի (C բերկրի), և ուրախալի, քեզ ով սրբուհի:

E ունի հետևեալ շարունակությունը.

Ողջոյն բերկրալի, յարբառ սքանչելի, և զարմանալի:

Գոչէր սըխրալի, և հիանալի, ողջոյն սրբուհի:

61 B մայրդ: CDEF Սուրբ կոյս տիրուհի, Տէր ընդ քեզ լիցի փխ կոյս... Բանի:

62 EF ոգի: CDE բերկրեալդ, Տեսուն:

63 AE անմայրն: CD և անհայր: E անհայրն: C Քոյ: B մեզ յայտնի, E Քեզ
յայտնի փխ քո լինի:

64 A միայն: C ծընունդս: E Եւայի: C ծնօդ: E ծընօդ:

65 A փրկիչն: A և Տէր մեզ յայտնի փխ որդի քո լինի:

CDF Հոգին հըզօրի, քեզ հովանացի, մայրը Աստուած Բանի:
Աստուածըն ամէնի, ի քէն ծնանի (C ծնալին), քեզ Որդի (F Որդի քեզ) կոչի:
E Հոգին հըզօրի, քեզ հովանացի, մայր Աստուած Բանի:
Աստուածն ամենի, մարդիկ ի յերկրի փխ Փրկիչն... յերկնի:

^{1*} Ղուկ. Ա 28:

Աստուած ի յերկրի, և մարդ ի յերկնի, ծնընդեամբ քո լինի:
Դրախտըն բանի, վառ վարդըն փըթթի, ծառն ի քէն ծաղկի:
Ահա ընկալ գերկըրպա.:

- Թ**ագըղ պարծանաց, թագաւոր զաւրաց, թափեալ ի փառաց:
70 Ի կուսէն մաքրած, ժառանգըղ կենաց, ծնար ի յոտաց:
Աստուած մարդացած, մարդ աստուածացած, անքակ միացած:
Ընտրեալը ի բիւրաց, աննըմանը յէաց, Բանը սերմանած:
Մարմին ըզգեցած, եղեր հասկ կենաց, հաց մեր փըրկանաց:
Փառք Քեզ ի բարձանց, երգով հրեշտակաց, ձայնակցեալ հովուաց:
75 Պատուեալը ի մոգաց, պատարագ գմըռած, զմահ Քո գուշակած¹:
Սրորէք սըրբասաց, շուրջ կան գփե պատած, Բանը ի մտուր եղած²:
Ի բարձսըն բազմած, սուրբ մաւրըղ գըզուած, շրթամբք համբուրած:

- 66 B չիք և: B մարդիկ փխ մարդ: C մարդք են անխորտիկ փխ և մարդ... լինի:
D մարդիք ի յերկնի, են անխորտիկ: DF չիք ծնընդեամբ քո լինի:
67 A Եւ դրախտըն: B վարդն: E ծառ: CDEF Դրախտին բանալի, վերջստին
չնորհի փխ Դրախտըն... փըթթի:
68 CDF Ողոր: E Ընգալ:
69 C զօրաց: A եկեալը ի բարձանց փխ թափեալ ի փառաց:
70 C ժառանգն: A մեր բարբերար փխ ծնար ի յոտաց: CDE միացած փխ ի յոտաց:
71 C չիք մարդ աստուածացած: D մարդտ: CD մնացած, F մարմնացած փխ
միացած:
72 E Յընտրեալն: A Բանը անսերմնացած: CD Անըմանըղ յէանց (D յէաց),
Բանըղ սերմանած, ընտրեալը (D յընտրեալն) ի բիւրաց:
73 A ըզգեցեալ: B ըսգեցած: B ելեր փխ եղեր:
CD Մարմին ըզգեցած, ի մաւրէ ծընած, և կոյս մընացած:
F Եղեր հասկ կենաց, մարմին զգեցած, հաց մեր փըրկանաց:
F Ելեր հասկ կենաց, հաց մեր փըրկանաց, և շուր ծարաւեաց:
74 F Քեզ փառս փխ Փառք Քեզ: B երգովք: EF երգաւք: CD Քեզ փառս ի
բարձանց, երգով հրեշտակաց, ձայնիւ սըրբասաց:
Ունի շարունակութիւն.
C Երգակցեալ Հուաց, երկնաւորաց և զօրաց, անմարմնականաց:
D Երգակցեալ Հովուաց, երկնաւոր զաւրաց, անմարմնականաց:
75 CE չիք պատարագ: B գմըռած: CDEF գմըռած և պատած փխ պատարագ
գմըռած: C ըզմահ: A գուշակաց:
76 C Սըրովբէք: CD չիք կան: C մըտուր:
77 B ի բարձր Ես, DEF ի բարձունս փխ ի բարձսըն: E չիք սուրբ: E մաւրըղ Քո:
F ի մաւրէղ:
B մաւրտ Քո գըզուած փխ սուրբ մաւրըղ գըզուած: A շըրթամբք:
CD ի բարձունս բազմած, յաթոռն փառաց, Քառաղէմ կառաց:
Ի մաւրէ (C մօրէ) գըզուած, շրթամբք համբուրած, և ստեամբք դիացած:

¹ Տե՛ս Մատթ. Ա 11:
² Ղուկ. Բ 7-16:

Աւրհնեալը ի բազմաց, հրեղէն հաւրանաց, յերկնային զաւրաց:
Ահա՛ յիշեա՛ զհոգի հանգուցելոցն:

- 80 Արփիդ փայլեցէր, արև ծագեցէր, անմահացուցէր:
Զգանձ Քո սփռեցէր, առատ բաշխեցէր, փարթամացուցէր:
Զաղքատս վերառէր, և յերկինս հանէր, ընդ Քեզ դասեցէր:
Ազգ, զոր ըստեղծէր, զնոյն և փըրկեցէր, արդարացուցէր:
Զբան Քո յանգ հանէր, զոր մեզ ազգեցէր, և գուշակեցէր:
85 Ծրագըղ վառեցէր, տանս աւել ածէր, զպատկեր Քո գըտէր¹:
Զբերան մեր բացէր, և խընդացուցէր, յորժամ դարձուցէր:
Մեզ կառք կազմեցէր, զմարմինը որ առէր, և առ Հայր հանէր:
Զխաւար հերքեցէր, լոյս մեծ ծագեցէր, և ցընծացուցէր:

- 78 C Օրհնեալը: D փառաց փխ հրեղէն: CDEF փառաց Հօր անանց (CDF
Հօրանաց) փխ հրեղէն հաւրանաց: C երկնային զօրաց:
79 B յիշեցես և ո.: CDF Ընկալ գերզըս բանական, բարեխաւսութեամբ կուսին
(F մաւր Քո) յըղձական, Աղաչե.:
80 B Արփիտ: C փայլեցար, ծագեցար:
81 CD Զգանձը Քո բացէր: CDEF և պարգևեցէր փխ փարթամացուցէր:
CDF ունի շարունակութիւն.
Որոց շնորհեցէր, փարթամացուցէր, և զօրացուցէր:
82 CDEF 82-83 Զմարդիկք վեր առեր, յերկինս հաներ, ընդ Քեզ դասեցեր (F և
անդ հանգուցեր փխ ընդ... դասեցեր):
Յաջմէ կացուցեր (F դասեցեր փխ կացուցեր), և մեծարեցեր, և ճոխացուցեր
(F փառաւք պատուեցեր փխ ճոխացուցեր):
Զազգ զոր ըստեղծեր, զնոյն և փըրկեցեր, և նորոգեցեր:
Արդարացուցեր, և պըսակեցուցեր (D պըսակեցեր, F չիք), փառօք պըճնեցեր
(F ունի շարունակութիւն. և ճոխացուցեր):
83 B Զազգ:
84 CDEF յանկ: D զոր և փխ զոր մեզ:
85 A Զճրագըղ: B ծրագըտ: CD ծըրագ:
86 EF գբերանս: B խնդացուցեր:
CD 86 Զբերանս մեր բացէր, Հոգով Քո լըցէր, և խնդացուցէր:
Զխաւար հերքեցէր, լոյս մեզ ծագեցէր, և խընդացուցէր (C ցընծացուցեր):
Յեղէմ դարձուցէր, ի գրախտըն մուծէր, և անդ հանգուցէր:
87 C կազմեցին: E գմարմինտ: CDEF զոր: CD յերկինս փխ առ Հայր: A յանէր:
88 F մեզ լոյս փխ լոյս մեծ: C Զծով մեղաց հերքեր, և զմեզ յանցուցեր, և այլ
առհաներ: D Զծով մեղաց հերքեր, և զմեզ անցուցեր, և առ Հայր հաներ:

¹ Տե՛ս Ղուկ. ԺԵ 8:

Ջծով մեղաց հերձէր, և զմեզ անցուցէր, փառաւք փրկեցեր¹ :
90 Եւ եւս առաւել գյոր:

Բարուն հաւաքեա՛, ըտտեալ բոյորեա՛, ըմ Բեզ ժողովեա՛:
Լոյս մեզ առաքեա՛, ի բարձանց ծագեա՛, և լուսաւորեա՛:
Ձէայրըդ Բո հաճեա՛, զՀոգիդ աղերսեա՛, և մեզ պարգևեա՛:
Ձմեղս ի մէնջ հերքեա՛, զցաւըս հալածեա՛, զախոս ապաքինեա՛:
95 Ձկենդանիքս խնամեա՛, զնրնջեցեալսըն յիշեա՛, Տէ՛ր, և ողորմեա՛:
Ձաւդըն քաղցր արա՛, ըստ պէտս անձրեեա՛, և պըտղաւետեա՛:
Ձաւծեալ Բո արքայ, կենաւք յերկարեա՛, և յաղթաւղ արա՛:
Ձարդ փառաց շնորհեա՛, Տեառըն լուսով զարդարեա՛:
Ձիշխանսըն պահեա՛, զքահանայս աւրհնեա՛, Տէ՛ր, և պարըսպեա՛:
100 Որ զտաւն Բո տաւնեա՛, և ուրախանայ, լի՛ր քաւիչ նրմա:
Ձանձինս մեր և զմի:

89 CD Փայտիւ փրկեցեր, և ազատեցեր, և անմահացուցեր: F վերածեր փխ փրկեցեր:
90 CDF Ընկալ:
91 E ըտտեա: F ըմեալ փխ ըտտեալ: CF ըմք:
92 B ծաւայեա՛ փխ ծագեա՛:
93 CDF Ձէայր: C զՀոգիա: F աղաչեա փխ հաճեա:
94 C ըզցաւս: CD փարատեա՛ փխ հալածեա՛: F մեր քաւեա, ցաւըս հալածեա, զախոս ապաքինեա՛ փխ ի մէնջ... ապաքինեա՛:
CD ունի շարունակութիւն.
Ձայլ ազգիս վանեա, զդւսըն հալածեա, զքրիստոնեաց (C զքրիստոնեայս) պահեա:
95 CDEF Ձկենդանիս: B զննջեցեայսն:
96 BCDF Ձաւդըս: E գյաւղըս: CF զպէտս փխ ըստ պէտս: C պտղաւետիա:
E պըտղարերեա:
97 C Ձծեալ: B չիք կենաւք: CDEF անվընաս պահեա՛ փխ կենաւք յերկարեա՛:
B Տէր յաղթաւղ փխ և յաղթաւղ:
98 E Ձարթ: A Տեառն ի լուսանցս, զկաթողիկոսն աստ յիշեա՛: B տեղը բաց է, թողնված: CDF Տեառն (CF Յակորայ) Գրիգորայ, Հոգւով կաղղուրեա (C կասողուրեա՛, F զարդարեա՛) փխ Տեառն լուսով զարդարեա՛: E Հոգով փխ լուսով: Տեառըն-Այրիվանեցու մոտ անուըն չիք: Բաղիշեցու ձեռագրում D Գրիգորա-ժամանակի կաթողիկոս: E Տն թորոս:
99 BCDEF Ձիշխանսըս: D Ձքահանայըս:
100 A տաւնէ: C գտոնս: CF տոնեայ: CDEF նորա:
101 CE Յիշեա՛: DF Յիշեա՛, և ևս, զանձինս:

¹ Հմմտ ելք ժե 4-22:

Անհարսն ի յերկրի, անբիծ աղաւնի, անարատ ծնաւդի:
Տէր Բեզ քաղցրասցի, բանքն աղերսալի, զըզւանքն ի գրկի:
Ինն ամսեայ կրողի, կո՛յս գԲեզ ծնողի, կաթամբ սնուցողի:
105 ԶԲեզ կերակրողի, և զգեցուցողի, և խնամ տանողի:
Աւրհնեալն ի յերկնի, գովեալն ի յերկրի, Սուրբ Եկեղեցի:
Որ միշտ պաղատի, և բարէխաւսի, վասն ամէնայնի:
Ընդ որս կըջորդի, Հոյլք Հոգեղինի, զաւրացն Անմահի:
Եւ որք յաշխարհի, Բեզ են հաճելի, յայսմ յաւիտենի:
110 Ձայնըն Բո Բանի, պսակըն նախնի, Հայրն Հայաստանի:
Առաքեալքն յերկրի, մարգարէք տոհմի, տանն Իսրայէլի:
Եւ այժմ ողորմեայ:

102 B ամբիծ: A ծնողի:
F Անհարսն ի յերկրի, Հարսնացեալ երկնի, անփորձ ի մարմնի:
Անբիծ աղաւնի, անարատ կուսի, մաքուր ծընաւդի:
CD 102-103 Անհարսն ի յերկրի, Հարսնացեալք երկնի, Աստուծոյն Բանի:
Անփորձ ի մարմնի, անբիծ աղաւնի, մաքուր տատրակի:
Մաւր Բո ըղձալի, անարատ կուսի, մաքուր ծընաւդի,
Քոյին սրնուցողի, Տէր քաղցր և բարի, (C ունի. զըրկով բարձողի փխ Տէր... բարի) Միածին Որդի:
Բեզ Հաճոյասցի, զըզւանքն ի գրկի:
E 102-103 Անհարսն ի յերկրի, Հարսնացեալ երկնի, անփորձ ի մարմնի, Ամբիծ աղաւնի, մաքուր տատրակի, մաւր քո ըղձալի, Անարատ կուսի, և մաքուր ծնողի, Քոյին սնուցողի:
Տէր քեզ քաղցրասցի, զըզւանքն ի գրկի:
103 A զըզւանքն ի գրկի: B զըզւանքն: F չիք բանքն աղերսալի:
104 BE ըզԲեզ: CD քում: C ծընողի: D ծընողի: F ունի շարունակութիւն. և կերակրողի:
105 E եւ փխ զքեզ: B Զքեզ ցուցողի: E Ըզքեզ զգեցողի փխ և զգեցուցողի:
D չիք Զքեզ... զգեցուցողի: F Զքեզ զգեցուցողի, և խնամ տանողի, բազկաւք բարձողի: CD ունի միայն. և խնամ տանողի: B խնամք: BCD ունի շարունակութիւն. Բազկաւք բարձողի, բանիւ զըզուողի, և Համբուողի:
E ունի շարունակութիւն. բազկաւ զըզուողի:
106 B Ձաւրհնեալն: E Օրհնելոյն երկնի: E գովելոյն փխ գովեալն ի: CDF Աւրհնելոյն յերկնի, գովելոյն յերկրի փխ Աւրհնեալն... յերկրի:
107 E բարեխոսի:
108 CD Որում փխ ընդ որս: E որ փխ որս: CE զաւրացն:
109 E աշխարհի: CDEF յայսմ յաւիտենի են քեզ հաճելի փխ Բեզ... յաւիտենի:
110 BC ձայնն: CD Քոյդ: B պըսակ: D նախնի փխ նախնի: CDE Հայր: F ընդ Սրբոյն Գրիգորի փխ Հայրն Հայաստանի:
111 E առաքեալք: CD ազգի փխ յերկրի: C տոհմին:
Ունի շարունակութիւն.
CD Բեզ աղերս լիցի, Արարիչ բընաւ, Տէրդ ամենայնի:
EF Բեզ աղերս լիցի, Տէր քաղցր և բարի, Միածին Որդի:
112 CF Ողորմեայ: DF Ողորմեաց մեզ:

ՔԱՐՈՁ ՊԵՏՐՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՒ ԱԲԻՍՈՂՈՄԱՅ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ

Վեր երգեմք Հնչմամբ, վերնական տարփմամբ, վառ և զիլ գոչմամբ: Հաւրդ անհաս սկզբմամբ, և Որդւոյդ ծագմամբ, Սուրբ Հոգւոյդ բխմամբ:

Անձանց բաժանմամբ, բնութեամբ միակամ, տեսակաւք գատմամբ: Անշփոթ խառնմամբ, անբաժին տրոհմամբ, անփոփոխ անձամբ:

5 Յայտնեալ մեզ անուամբ, և տեսեալ ազդմամբ, ըստ փայլական ծագմամբ:

Ոչ ամաց չափմամբ, ոչ վայրաց բերմամբ, ոչ էից բարձմամբ: Ջոր չտեսեալ աւկամբ, գայն լըւեալ ունկամբ, Հոգւով Հաւատամբ:

Եթէ իսկ իմացմամբ, սրտիւք իմանամք, բայց անգիտանամք: Էիդ փառս տամք, բանական պաշտմամբ, ոչ քննեմք լրմամբք:

10 Այլ սիրեմք տենչմամբ, աւրհնեմք փափագմամբ, գովեմք Հիացմամբ: Ահա ծագեա՛ զողորմութիւն Քո ի վերայ արարծոց Քոց Հայցմամբ սրբոյն Պետրոսի Հայրապետին Եւ ողորմեա՛ ժողովրդեանս, աղաչեմք:

Աղբյուրներ

- A-ձեռ. Հմ. 7785, 79բ-83բ:
- B-ձեռ. Հմ. 4068, 219բ-224ա:
- C-Վնտ., ձեռ. Հմ. 1672, 1ա-3ա (սկսվում է 51-րդ տողից):

Խորագիր

AB տե՛ս վերևում: C Պետրոսի Հայրապետին և յԱբիսողոմայ: C Պետրոսի Հոռոմայ Հայրապետին և Աբիսողոմայ սարկաւազին: Մայրակապ՝ Վարդայպետի:

Բնագիր

- 1 A Հրնչմամբ:
- 2 A սկզբմամբ: B Որդւոյդ, Հոգոյդ: AB բըղխմամբ:
- 4 A խառնմամբ:
- 5 AB անւամբ: A ստ փայլակրն փխ ըստ փայլական:
- 7 B Հոգով:
- 8 A Եթէ իսկամբ փխ Եթէ... իմացմամբ: B Եթէ իսկամբ՝ կարմիրով դարձված Եթէ իսկ իմացմամբ:
- 9 A փառս, քրննեմք: B լրմամք:
- 11 B քո:
- 12 A սրբոյն: B չիք Հայրապետին:

Անհաս ես մըտաց, անտես ես աչաց, անճառ ի լեզուաց:

15 Ի յերկնաւորաց, և յերկրաւորաց, սանդարամետաց: Չպարագրիլ յէաց, անտար ի տարրաց, անհիւթ ի նիւթաց: Հրոյ ես նմանած, յէսս անտես խառնած, բայց ամբողջ մնացած: Լոյս ի տես աչաց, ջուր քաղցր արբողաց, աւդ շնչաւորաց: Հողմ հթերընթաց, ամպ երկնազընաց, բոց երկնախաղաց: 20 Փայլումն փառաց, Հոսումն շնորհաց, յէսս բանականաց: Յաստուածաբանաց, այսչափ մեզ յայտնած, ծածուկքն լռած: Վէմ բազմապատկած, նետ արեամբ արբած, սուր փայլատակած: Գազան զայրացած, գառն անմեղ զենած, ընդ մեր յանցանաց: Ահա ծագեա՛:

25 Բամից վերնայից, ստեղծաւղդ բնաւից, և կարգաւորիչ: Կառաց Քոց կերտիչ, անուաց բոլորիչ, բոցից բորբոքիչ: Աղեղանդ ձգիչ, գոյնըզգոյն կերպից, Քոյդ նշան ուխտից: Ջայլինջ առպարից, ջընարար երգից, Քոց պաշտաւնէից: Ջորեք դիմենից, ահեղակերպից, արագընթացից: 30 Բազմաչեա զընդից, թևոց սաւառնից, և բարձր որոտից: Հազարաբերից, գետոց հրեղինից, անչէջ կայծակից: Իննեակի դասից, երկոտասանից, երկնաբանակից: Վեհ քահանայից, թիւ քսան և չորից, Քեզ մերձակայից: Ոսկի բուրվառից, սեղանք հրալից, խնկոցն աղաւթից: 35 Ահա ծա:

- 14 B ի յաչաց փխ ես աչաց:
- 16 B չպարագրեալ: B անտարր փխ տարերաց:
- 17 A նրմանած:
- 18 A շրնչաւորաց:
- 19 B ամբ բարձրագնաց: B բաց փխ բոց:
- 20 A փայլումըն, Հոսումըն: B Հասումն:
- 21 A լրռած:
- 25 A ստեղծաւղղդ:
- 26 B կետրիչ:
- 27 A ձրգիչ, նըշան:
- 30 A բազմաչեայ:
- 32 B իննեկի: B բազում բանակից փխ երկնաբանակից:
- 33 A քահանայից:
- 34 A բուռուառից: B սեղան Քո հըրից փխ սեղանք հրալից: A խընկոցն:

- Դո՛ւ փառաւորեալ, և մարդասիրեալ, Դո՛ւ սիրով արբեալ:
 Կամաւ խոնարհեալ, ի Կոյսն բնակեալ, Բանդ մարմնացեալ:
 Լոյսդ թանձրացեալ, հուրդ ի ջուր յեռեալ, հողմդ հող դարձեալ:
 Զանխառնդ խառնեալ, արևդ արիւն լեալ, ամբողջ ենթակեալ:
 40 Կոյսն կոյս մնացեալ, յորժամ գՔեզ ծընեալ, կաթամբ սընուցեալ:
 Ի տաճարն եկեալ, ի ծերոյն գգւեալ, և զնա արձակեալ:
 Յամպ թեթև նստեալ, յեգիպտոս հասեալ^{1*}, և զկուռսն ջարդեալ:
 Յորդանանն իջեալ, Որդիդ դաւանեալ, Հոգիդ վկայեալ^{2*}:
 Պահաւք Քո գինեալ, փորձողին յաղթեալ, և կոխան տըւեալ^{3*}:
 45 Հրեշտակաւք պաշտեալ, աւծեալդ անուանեալ, փեսայդ հարսն
 առեալ:

Ահա ծագեա՛ զո.:

Աստանաւր ցուցար, Աստուած բարեբար, և ամենակար:

Կուրաց լուսարար, կաղաց զնացարար^{4*}, ախտից սրբարար^{5*}:

Մեղաց քաւարար, մահու կենարար, մեզ ազատարար:

50 Ի խաչ բարձրացար, և բեկեցար, տիգաւ խոցեցար^{6*}:

Կտաւովք պատեցար^{7*}, ի շիրմի եզար^{8*}, զդժոխս առեր յաւար:

37 A կոյսըն, Բանդդ:

38 A լոյսըդ, հողմըդ:

39 A Զանխառնըդ:

40 A Կոյսըն:

41 B Դու յնծայ փխ ի տաճարն: A գըգուեալ: B չիք և զնա արձակեալ:

42 A նրստեալ: A զկուռսըն: B յեգիպտոս երթեալ, յամբ թեթև նստեալ, անդ
 անձրև անեալ և զկուռսն ջարդեալ:

43 A վրկայեալ:

46 B չիք ծագեա՛ զո.:

48 A սրբարար:

50 BC Որ ի խաչ բարձար:

51 AC կտաւաւք: BE աւար:

^{1*} Հմմտ Մատթ. Բ 13:

^{2*} Հմմտ Մատթ. Գ 17:

^{3*} Հմմտ Մատթ. Դ 1-11, Ղուկ. Դ 1-13:

^{4*} Հմմտ Մատթ. Ժ 31:

^{5*} Հմմտ Մատթ. Թ 22:

^{6*} Տե՛ս Հովհ. ԺԹ 34:

^{7*} Մատթ. Ի 59, Մարկ. Ժ 45, Ղուկ. ԻԳ 53, Հովհ. ԺԹ 40:

^{8*} Մատթ. Ի 60, Մարկ. Ժ 46, Ղուկ. ԻԳ 53, Հովհ. ԺԹ 42:

- Յարեար տիրաբար^{1*}, փառաւք համբարծար^{2*}, յաջմէ Հաւր նստար^{3*}:
 ԶՀոգիդ սրբարար, մեզ կենդանարար, Հայր Քեզ տուրս արար:
 Դո՛ւ պարգևարար, մեզ մատակարար, անճառ շնորհեցար:
 55 Քեզ փառք բարեբար, Աստուած կենարար, ընդ Քեզ միացոյ յար:
 Աւրհնեմք անդադար, զաւրհնեալդ իսկաբար, Աստուած փրկարար:
 Ահա ծագեա՛ զողորմութիւն:

Յայնժամ Պետրոսին, յոտնեալ յատենին, յայտնէր Սուրբ զՀոգին:

Ըստ մարգարէին, որ կանխաւ ճառին, ի յաւրէնս Հին:

60 Լուեալ դառնային, երեք հազարին, յըսկիզբն բանին^{4*}:

Եւ անդուստ հնչին, բարբառք գետային, Աւետարանին:

Առաքեալքն սփռին, յաշխարհ ծաւալին, ըստ Տեառն Բանին:

Հրեայք Մատթէին, Ֆռանկք Ղուկասին, յոյնք Յովհաննիսին:

Մարկոս Աղէքսանդրին, ի Թեբայիդին, կատարեալ ի նմին:

65 Կարգեալք յաթոռին, դասք պատրիարգին, թիւք վեշտասանին:

Ի գլուխ ամենին, տէր Պետրոս վերջին, Համանուն վիմին:

52 BC Հզաւր փխ փառաւք: A նրստար:

53 C ԶՀոգին: A սրբարար:

54 B պարգևարար: E չիք:

55 C չիք Աստուած... յար:

56 C Աստուած ինամարար, հոգւոց պահարար, մարմնոց փրկարար փխ
 Աստուած փրկարար:

57 B չիք ծագեալ զողորմութիւն:

58 A կանկեալ փխ յոտնեալ: C կացեալ ի յոտին փխ յոտնեալ յատենին:

C չիք Սուրբ:

59 BC յաւրէնսն:

60 A լըւեալ: A յըսկիզբն: C իսկիզբն:

61 B անտուստ: A յընչին, բարբառ:

62 A ըսփռին: C հրամանաւք Քոյին փխ ըստ Տեառն Բանին:

63 B Մատթէին: A փրոանկք, Յովհաննիսին, Յովհաննիսին:

C 63-64 Հրեայք Յակոբին, Ֆրոանկք, Պետրոսին, յոյնք, Յովհաննիսին:

Սպանիա՝ Յակոբին, լատինք Ղուկասին, Սինաւայն՝ Անդրիասին:

Ասորիք՝ Մատթէին, Հայք՝ Թադէոսին, մարք՝ Բարդուղիմէին:

Հրեայք՝ Թումային, հաբաշք՝ Փիլիպին, իսպոխո՝ Միմոնին:

Մարկոս՝ Իսքանդրին, ի Թեբայիդին կատարեալ նմին:

64 B Իսկանդրին փխ Աղէքսանդրին: B Թեբայիթին:

^{1*} Մատթ. ԻԸ 6, Մարկ. ԺԶ 6, Ղուկ. ԻԴ 6, Հովհ. Ի 15-16:

^{2*} Մարկ. ԺԶ 19, Ղուկ. ԻԴ 50, Գործք Ա 9-10:

^{3*} Ա Պետ. Գ 22, Հոռմ. Ը 34, Եփ. Ա 20, Կողոս. Գ 1:

^{4*} Հմմտ Գործք Բ 14-41:

Ինն ամ յաթոռին, ինն ակր ի բանտին, ըստ Տեառն ի կուսին:
Ահա ծագեա զո.:

Պետրոս պանծալին, Պետրոս բաղձալին, Պետրոս ցանկալին:

 60 B արմուկ բուսեալ փխ արմունկ ծաղկեալ: B կահեալ:
 66 B Աւրհնեալ և սրբեալ:

Թագափայլեցէր, թառ գարդարեցէր, թևաք գիրկս արկէր:
 Հարսինս, որ գնեցէր, սիրով սիրեցէր, արեամբ ներկեցէր:
 Զգանձըս Քո բացէր, զիմաստըս հեղէր, առատ բաշխեցէր:
 70 Զգիրըս զոր գրեցէր, Մովսէսիւ տըւեր, արեամբ կնքեցէր:
 Մարգարէս յըղեցէր, զձածուկս յայտնեցէր, զգալուստ Քոյ ցուցէր:
 Բնութեանս յայց ելէր, ի մեզ բնակեցէր, գհոգիտ բաշխեցէր:
 Լոյս տարածեցէր, զխաւար հերքեցէր, ջախաւորեցէր:
 Աղբեր բղխեցէր, զդաշտս առոգեցէր, զմեզ զովացուցէր:
 75 Թըրի աղ կազմեցէր, զմեզ կազդուրեցէր, և բժշկեցէր:
 Զգիր մատամբ գրեցէր, ի տախտակ հանէր, և մեզ ուսուցէր¹:

Այս կըտակ ուխտի, արեանդ Յիսուսի, արձան միջնորդի:
 Սա մեզ եղիցի, բարեաց բանալի, և հանութ գանձի:
 Սա սանդուղք էլի, կառք բերապատկի, Տէրդ ի սմա բնակի:
 80 Յայս գիրս աւրինի, արիւն քո ցաւղի, իւղովդ աւճանի:
 Խաչիւ Տեառնագրի, բանիւ Քո աւրհնի, հոգով Քո լըցցի:
 Սա բժիշկ ախտի, հալածիչ դիւի, մերժիչ հազ մահի:
 Սովաւ մեղք սըրբի, յանցանք մեր քաւի, գիր մեղաց ջընջի:
 Սա բան բերանի, բացող մեր լեզւի, տուռ տուող աղաւթի:
 85 Այս Քո բան բարի, բղխումն սրտի, գըրիդ տաճարի:

Րախճան ցանկութեան, ճայն ուրախութեան, հանուրց բերկրութեան:
 Թագ արքայութեան, թագաւորութեանն, խրատ զգուշութեան:

67 A թևք:
 73 B ջահաւորեցեր:
 74 B աղբիւր:
 76 B հան փխ հանէր:
 77 B միջնորմի:
 78 B խանութ փխ հանութ:
 79 B ելի փխ էլի: B բերապատկի:
 82 B խազ փխ հազ:
 85 B գըրիդ տաճարի:
 86 B ցնծութեան փխ ցանկութեան:
 87 A թաք:

¹ Հմտ ելք ԼԱ 18:

Հայրապետութեանն, անճառ սրբութեան, քանոն ուղղութեան:
Խրատ իշխանութեան, սանձք ստահակութեան, վարմ

վայրագնութեան:

- 90 Ցանց ձկնորսութեան, դամ եղնորսութեան, լար թըռչ[ն]որսութեանն:
Նիգ վէմ հանութեան, աջ ձեռնտութեան, մոյթ խախտելութեան:
Քոյր իմաստութեանն, սա ելք բարձրութեան, աստուածագիտութեան:
Երկուդածութեան, զէն անյաղթութեան, պարիսպ ամրութեան:
Փառք անփառութեան, ձայն խրախուսութեան, յոյս անյուսութեան,
գեղջ անզղջութեանն:

- 95 Յիշեա:
Եւ ևս միա, զանձինս:

Արփիդ վերնային, ակն անդնընդային, արև դաւթային:

Սուրբ Աստուածածին, բնակարան Բանին, Հաւր ծոցածընին:

Թուղթըղ լուսային, գըրոզ Սուրբ Հոգին, զԲանն ի սուրբ մարմնիդ:

- 100 Ըստ Քում խորհրդին, գիրքս աստուածային, աւծեալ սըրբեսցին:

Սըրբարար Հոգին, շնորհաւքն եւթնարփին, ի սա միասցին:

Այլև քաղցրութիւն, Հաւրն երկնաւորին, յերկիր ցաղեցցին:

Յագգս արամային, մեր դիտապետին, և վարդապէտին:

Խոր խաղաղութիւն, հոգոյ սըրբութիւն, մըտաց մաքրութիւն:

- 105 Այլև աւրհնութիւն, տառիս ստացողին, և սըրբագըրջին:

Մեզ ի միասին, մերոցն ամենին, մեղաց թողութիւն:

91 B ունի շարունակութիւն. Սա մայր զագաստութեան, հայր խրատողութեան:

94 B հրախուսութեան:

96 B ունի շարունակութիւն. Արփիդ փայլեցեր:

106 B ունի շարունակութիւն. ողորմեաց:

ԳԱՆՁ ԵՐՐՈՐԴ ԱՒՈՒՐՆ ԳԱԼԸՍՏԵԱՆ ՀՈԳԻՈՅ
ԵՒ ԱՒՐՀՆՈՒԹԻՒՆ ԶԻԹՈՅ

Տէր զաւրութեանց Սարաւօթ¹ բարձրեալ, յերկինս երկնից անհաս
վերացեալ:

Ի քառակերպեան աթոռս հանգուցեալ, ի սրովբէիցըն սըրբաբանեալ:

Հայր և Որդի Հոգով դաւանեալ, անձինք երեք բնութեամբ միացեալ:

- 5 Դո՛ւ զարարածս արարչաստեղծեալ, վերև ի վայր համայն զարդարեալ:

ԳԱՂԱՄ ի տիպ Քոյին յաւրինեալ, զոր բանսարկուն կողիւրն

պատրեալ:

Դո՛ւ կամեցար. Տէ՛ր, կըրկին կանգնել, մարգարէիւք պատգամս

առաքել:

Բայց ոչ զաւրեաց մարդ մարդոյ օգնել, և ոչ զօրէնքն յանիծից

թափել:

Այլ միայն Աջ Քո, Հա՛յր, պաշտպանեալ, բարձըր բազուկն ի յաւըրն

հասեալ:

Ի բով կուսին սրբոյ բորբոքեալ, խալաս մարմին ի մարմնոյ առեալ:

- 10 Աւրհնեմք զԱստուածդ մեր մարմնացեալ, ի ծոց Կուսին ծառ կենաց

տնկեալ:

Աւրհնեա՛ և սըրբեա՛ զեւղս աւծութեան Քո սուրբ նըշանաւս աղաչեմ:

Մինդ ի յերից անձանց անհիւթոյ, առեր մարմին ըստ բնութեանն
մերոյ:

Զաստուածութեամբդ օծեալ զմարմին Քոյ, կըրկէ օծ Հոգիդ համագոյ:

Աղբյուրներ
A-ձեռ. Հմ. 4844, 139բ-141բ:

Խորագիր՝ Տե՛ս վերևում:
Ծայրակապ՝ Տ. Մխիթար վ.:

¹ Եսայի Լէ 16, Խէ 4:

15 Ըստ Եսայեայ և Երեմիոյ, տասըն աղեանըն Դաւթեան տաւղոյ:
 Օծեալը օծեր զառաքեալսն Քո, եւղ շնորհեցէր նիւթ բժշկելոյ:
 Զոր մեզ առեալ զմեծ պարգևըս Քո, զՔէն դոհանամք, տըւողըդ
 բարոյ:
 Քեզ ընձայեմք զայս նիւթըս ձիթոյ, ընկա՛լ և աւրհնեա՛ւ, ծագաւղըդ
 լուսոյ:
 Մեզ պարգևէա՛ դեղ բժշկելոյ, և քաւութիւն յանցանաց մերոյ:
 Սա աւրինակ ցաւոյդ երկնայնոյ, ի մեզ ցաւեալ ազդումն Աստուծոյ:
 20 Լուծեալ մարմնոց ի մեղաց տղմոյ, սա դիմահար գիճային գործոյ:
 Երաշտացեալ մըտացս ի բարոյ, սագով արար աւծումըն ճարպոյ:
 ԱՀ.:
 Խաչակնքեա՛, Տէ՛ր, և պահպանեա՛յ, զՔո ժողովուրդըս Համայն
 աւրհնեա՛յ:
 Եւ զայս ճըւէր ձիթոյս, տեառնագրեա՛յ, սըրբեա՛յ ըզսա և
 լուսաւորեա՛յ:
 25 Եւ որ կամի աւծիլ, Դո՛ւ պահեայ, զցաւըս մերժեա՛ և ապաւինեա՛յ:
 Զախտս և ըզմեղս սորա փարատեա՛յ, զուարթարար սուրբ եղովս
 աւծեա՛յ:
 Մարմնոյ և արեան Քո սուրբ Հաղորդեա՛յ, յորդէգրութիւն Քո նոր
 նորոգեա՛յ:
 Զաւազանին շնորհ պարգևեա՛յ, անչէջ լուսով Քո լուսաւորեա՛յ:
 Զխաւար մեղաց սորայ Հալածեա՛յ, զյանցանս քաւեա՛յ և անմեղ
 արա՛յ:
 30 Զբոլոր ժողովս զայս խընամ արկեա՛յ, զամենայն արժանի արա՛յ:
 Յաւրհնութեանէս զմեզ մասնաւորեա՛յ, սուրբ օծութեամբս
 արդարայգործեա՛:
 Մարդ, որ մեղա ասէ և զղջայ, խոստովանի և արդարանայ,
 Զողորմութիւն Քո տո՛ւր Դու նմայ, քան զձիւն լուս և սպիտականայ:
 Ի Քէն Հայցեմք, ո՛վ Տէր մեր Յիսուս, մեզ ողորմեա՛ Քո ժողովըրդոյս:
 35 Երկնի և երկրի Տէր ես Դու և լոյս, մեզ այց արա՛յ մեղաւք մեռելոյս:
 Ծնորհեա՛ Հանգիստ այս աշխատելոյս, զԱւետարանս ի վերա զլիտոյս:
 Թագ ոսկեղեն դի՛ր ցաւագնելոյս, զէւթն բազուկ սուրբ երիցանոյս:
 Տո՛ւր զաւրաւիկ այս վտանգէլոյս, զՔո պարգևեալ պայծառ նիւթ
 ձիթոյս:

Տո՛ւր աւծութիւն այս մոխրագեղոյս, վառեա՛ զպատրոյգ շիջեալ
 լապտերոյս:
 40 Ծենճերեա՛ զճարպ առեալ սեղանոյս, քաւեա՛ զյանցանս յամայն
 ժողովոյս:
 Տէ՛ր, մի՛ լուր մեր արտասուելոյս, ո՛վ ծնաւղագութ Տէրըդ գերելոյս:
 Մի՛ մտանէր ի դատ ընդ Հողոյս, սըրբեա՛ զարտաւսըր յէրեսանոյս:
 Օծեա՛յ զմեր դէմս ի յաւրհնեալ ձիթոյս:
 Աւրհնեա՛յ:
 45 Թագաւոր Հզաւր յաւիտենական, կենաց մերոց Տէր, բարի իշխան:
 Տեարն այս անւան, լի՛ր սուրբ սըրբարան, պատրիարգին ազգիս
 Հայկազեան:
 ԶԱմբատ իշխանըն մեր Աւրպէլեան, յաղթող արա՛յ խաչիւ Քո անվան:
 Արեգական եւ լուսին նըման, Հաստեա՛ զնոսս ի մեծ բազմականն:
 Եւ որք ընդ նոքաւք են ի յաստիճան, յարքունական, եկեղեցական:
 50 Աւրհնեալ պահեա՛յ բանըդ Հայրական, սուրբ նըշանաւըդ Քո
 փըրկական:
 Զեկեղեցիս որ ի Հայաստան, Տէ՛ր, Հաստատեա՛յ միշտ անշարժական:
 Հովեա՛յ ըզհատըս քրիստոսական, երկըրպագուս խաչիտ
 փըրկչական:
 Յիշեա՛:
 Արդարացո՛յ և ի Քեզ միացո՛յ, մեղաց սըրբեա՛յ և կարողացո՛յ:
 55 Զայս տարագրեալս ի Քեզ միացո՛յ, նոր նորոգեա՛յ և արդարացո՛յ:
 Քահանայիւք սուրբ ուխտիս Քո, որք ժողովեալ կան առաջի Քոյ:
 Որք ցաւագնեալ են՝ առողջացո՛յ, որք մեղուցեալ են՝ անմեղացո՛յ:
 Տո՛ւր, Տէ՛ր, բղխումն երկնից անձրևոյ, մեզ արտասուս մեղաց
 մաքրելոյ:
 Բուսոյ զարդեանց բոյս երկրիս մերոյ, զգործըս բարեաց պըտղոյ մեր
 այգոյ:
 60 Զցաւս և զցասումն ի մէնջ, Տէ՛ր, անցո՛յ, զմահ տարածամն
 ապաքինացո՛յ:
 Փըրկեա՛յ ըզմեզ ի սրոյ թշնամոյ, եւ ի զըրկանաց, զըզւողաց մերոյ:
 Զազգս Հայոց Հերքեա՛յ ի ցաւոց, զաղքատացեալքըս փարթամացո՛յ:
 Զի երգեսցուք երգ Փըրկչին մերոյ, որ եսդ, աւրհնեա՛լ ընդ Հաւր և
 Հոգո:
 Եւ ևս առաւել:

65 **Րախճան կենաց մեզ լոյս փայլեցո՛յ, շընորհք Հոգոյն աստ**
ծաւալեցաւ:
Երկիրս երկինք այժմ անւանեցաւ, մարդսըն Հրեշտակս յիրար
խառնեցաւ:
Աստուածային փառքն ի վայր իջաւ, և ընդ ժողովըս մեր միացաւ:
Մեր խնդրըւածս կատարեցաւ, արքայութեան դուռըն մեզ բացաւ:
Քրիստոսատուր եղս այս աւրհնեցաւ, Հոգոյն շնորհաւք ի մեզ
կաթեցաւ:

70 **Մեղաց կրտակք մեր պատառեցաւ, որդէգրութեան կոնդակ գըրեցաւ:**
Հիւանդութիւնք և ցաւք վերացաւ, երկունք մահուն ի կեանք
փոխեցաւ:
Խը[ղ]ճմըտանաց կասկածըն բարձաւ, խաղաղութեան քարոզ
Հընչեցաւ:
Զի Սուրբ Հոգին ի թիկունս հասաւ, տըկարութիւնըս մեր զաւրացաւ:
Աստուած Որդոյն բարեխաւսեցաւ, Հայր ի մեր կոյս քաղցըր
Հայեցաւ:

75 **Զան.:**
Վարդապետ բարի, ի խաչ բարձրացար, զգերեալս ի մեղաց առեր
Քեզ աւար:
Երկըրպագեմք Քեզ, Տէ՛ր բարերար, յոյս յարութեանն և ազատարար:
Զխաղաղութիւն Քո տո՛ւր մեզ յերկար, հայցմամբ ծընաւղիդ, յորմէ
մարմնացար:
Ըզմեզ պահեա՛յ Դու, Տէ՛ր խնամակար, առաքելովք, որով[ք]
ծանուցար:

80 **Հաշտեա՛ գըթութեամբ Քո անխռովարար, մարգարէիւքդ, որ**
քարոզեցար:
Հան ի բանդէս, Տէ՛ր գըթածաբար, հայրապետօքդ, որով պատեցար:
Վանեա՛ գթշնամին մեր ըզխռովարար մարտիրոսաւք Քո արիաբար:
Բայց մեզ շաւիղ աւղագնացարար, ճըգնաւորաւք Քո աղօթարար:
Ող.:

ԳԱՆՁ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՀՈՑ

Մեղա՛յ, Տէ՛ր, մեղա՛յ, անաւրիներեաց, յանցաւոր գըտայ:
Զպատուիրանն անցայ, յաւրինաց շեղայ, Քեզ յաչաց ելայ:
Զլոյսըն մերկացայ, ի փառաց զըրկայ, ի դրախտէն ելայ:
Քոյդ գըրկաց անկայ, շնորհաց հեռացայ, չարեաւքս որ մեղա՛յ:
5 Մեղաւորիս վա՛յ, հոգւովըս մեռայ, և ի մեղըս թաղեցայ:
Անդարձ որոշայ, գլորեալ չկանգնեցայ, այլ յոյժ հեռացայ:
Իմ Տէ՛ր, Քեզ մեղայ, յաւգնել ինձ փութա՛յ, տո՛ւր ձեռն և
կանգնեա՛յ:
Քաղցըր բարբառեա՛յ, ձայնիւրդ կոչեա՛յ, և ի Քեզ ժողովեա՛յ:
Յանարժանս գըթա՛յ, Տէ՛ր և ողորմեա՛յ, մեղաց ազատեա՛յ:

Աղբյուրներ

- A-ձեռ. հմ. 5785, 185ա-7ա:
- B-ձեռ. հմ. 425, 127բ-9բ:
- C-ձեռ. հմ. 423, 256ա-7բ:
- D-Վնտ., ձեռ. հմ. 1210, 22բ-24ա:
- E-ձեռ. հմ. 4011, 121բ-123բ:

Խորագիր

A Գանձս ապաշխարութեան է, դու երեկոյին ասա: B Գանձ ապաշխարութեան ասայ: C Գանձ ապաշխարութեան: D Պահոց կիրակէին եւ ամենայն պահք աւուր: E Վեցերորդ կիրակէին քանձ:
Մայրակապ Երզան:

Բնագիր

- 1 C անորիներեաց: D ւ յանցաւոր:
- 2 C անցեայ: D յանցեայ: E յանցա: C աչաց: E շեղա փխ շեղա:
- 3 C Զլոյսըն: B ի փառաց զըրկայ, զլոյսըն մերկացայ և ի փխ Զլոյսըն... զըրկայ, ի:
- E ի դրախտէն ելայ, փառաց զըրկեցայ փխ ի փառաց... ելայ: D փառաց փխ ի փառաց:
- D գըրկեցա: D ւ ի դրախտէն:
- 4 D շնորհէդ փխ շնորհաց: D կործանեցա փխ հեռացայ: D մեղկայ փխ մեղայ:
- 6 B որոշեայ: C յորոշայ: A կանկնեցա: C գըլորեալ կանգնեցայ:
- B վատթարացայ փխ յոյժ հեռացայ:
- 7 A կանկնեայ:
- 9 C Անարժանս: B ի մեղաց:

10 ԱՀա կեցո՛յ զմեզ, Տէ՛ր, և արդարացո՛յ ողորմութեամբ Քո:
Աղաչ.:

Ես եմ խաւարեալ, ես մեղաւք մեռեալ, ես նեխեալ, փրտեալ:
Չեմ յուխտին կացեալ, չեմ գաւրէնս պահեալ, չեմ բարիս գործեալ:
Այլ յոյժ տարագրեալ, և տարակացեալ, գարտուղի սխալեալ:
15 Կենաւք տառապեալ, մեղաւք զառածեալ, յանցանս յերկարեալ:
Բարիս ո՛չ գործեալ, զբարէգործս ատեալ, զխրատիչս անարգեալ:
Ի մեղըս ջեռեալ, և ի բարիս պաղեալ, բոյս բարի չբուսեալ:
Մառքս անպըտղացեալ, տունկըս գաւսացեալ, և յարմատոց խըլեալ:
Ոչ պահաւք սրբեալ, և ոչ ջերմ արտասուեալ, այլ յոյժ աղտեղեալ:

20 Զեղբարս ատեցեալ, ըզսուրբս անարգեալ, չարեաց հաղորդեալ:
ԱՀա կեցո՛յ զմեզ, Տէ՛ր, և արդարացո՛յ ողորմութեամբ Քո
Աղաչ.:

Րաբուն փայլեցիր, աւրէնս ծանուցեր, պահաւք պընդեցեր:
Հրեշտակացն ի վեր, պահս քարոզեցեր, հեզ և խոնարհ լեր:
25 Զորս հնազանդեցեր, ի նոյն պահեցեր, գերապատեցեր:
Եւ զորս ատեցեր, սաստեալ ընկեցեր, դեւս անւանեցեր:
ԶԱդամ պատեցեր, լուսով ծածկեցեր, շքեղազարդեցեր:
Ի դրախտին եղեր, պատւիրան տըւեր, ի պըտղոյն չուտել^{1*}:

10 C չիք:
12 B չիք ես: E նեղեալ փխ նեխեալ: B և փրտեալ:
13 B կեցեալ: A բարի:
14 E եմ փխ և: C գաւրղի, սղալեալ:
15 C տարապեալ: B յերկալեալ: C երկարեալ:
16 C ոչ փխ որ: A զբարի գործս: C յատեալ:
17 D մեռըս փխ մեղըս: BDE չիք և: C և փխ և ի: BDE սառեալ փխ պաղեալ:
C չգործեալ փխ չբուսեալ:
18 E չիք և: C արմատոց:
19 BC ոչ փխ և ոչ: B չիք այլ: B աղտեղացեալ: DE ∞ ոչ ջերմ արտասուեալ, ոչ
պահաւք սրբեալ:
20 B ի մեղս յաճախեալ փխ չարեաց հաղորդեալ:
21-22 CE չիք:
23 B ուսուցեր փխ ծանուցեր:
24 AC Հրեշտակաց: D ընկեր փխ ի վեր: B քեզ փխ հեզ:
D Հրեշտակացն ընկեր, զմարդըն կարգեցեր, և աւրէնս տըւեր:
Պատուիրանս եղեր, հեզ և խոնարհ լեր, պահս քարոզեցեր:
28 B պատւիրանս:

^{1*} Հմտ Մննդ. Բ 16-17:

Ի նորայն չպահել, զպատւէրն որ տւէր, պատժաւք անիծեր^{1*}:
30 Ի դրախտէն հաներ, և երկիր արկեր, մահու մատնեցեր:
Բայց ոչ լըքեցեր, և անտես արարեր, այլ խնամարկեցեր:
ԶԵնովս ընտրեցեր, և յուսացուցեր, զՔոյդ անուն կոչել^{2*}:
ԶԵնովք սրբեցեր, պահս քարոզեցեր, յերկինս փոխեցեր^{3*}:
Զըրհեղեղ ածեր, զՆոյ ապրեցուցէր, պահաւք փրկեցեր^{4*}:
35 ԶԱբրահամ Հայր մեր, ուխտիւ սրբեցեր, հիւր նմա իջեր^{5*}:
ԶՍահակ խնամեցեր, գառըն Դու եղեր, և զնա փրկեցեր^{6*}:
ԶՅովսէփ վերածեր, ի բանտէն հանէր, և տէր կացուցեր^{7*}:
ԱՀա կեցո՛յ զմեզ, Տէ՛ր, և արդարացո՛յ ողորմութեամբ Քո,
Աղաչ.:

40 Զբրխումն արտասուաց, զբեկումըն սրտաց, զբարձումըն բազկաց:
Զբարբառ սաղմոսաց, Քեզ վեր ընծայած, տեսաւղըդ գաղտնեաց:

29 A Եւ նորայն: D Ի ի: BDE չիք զպատւէրն, որ տւեր: C պատժաւք:
30 B հանել: A յերկիր: BDE չիք և երկիր... մատնեցեր: C եղեր փխ արկեր:
31 BDE չիք տողը:
32 C չիք ԶԵնովս ընտրեցեր:
33 BCD անամհացուցեր փխ պահս քարոզեցեր:
34 C Զըհեղեղ:
35 DE հեւր նըմա:
36 D Գառըն դու եղեր, զՍահակ փրկեցեր, և զնա խնամեցեր: E փրկեցեր փխ
խնամեցեր: E խնամեցեր փխ փրկեցեր:
37 B վեր առեր փխ վերածեր: A բանդէ:
40 A Զ (ձախ լուս.) Բրխումն: C Զբրխումն: C ըզբաղձումըն փխ զբարձումըն:
D ∞ Զբեկումըն սրտաց, զբրխումն արտասուաց:
E 40-42 Զբրխումըն սրտաց, զբեկումըն սրտաց, զբրխումն արտասուաց,
Ըզլալումն աչաց, զքըքւանս հեծանաց, զբարձումըն բազկաց:
Զբարբառ մեղանաց, զմըրմունջ սաղմոսաց, և չարականաց:
Զբանս մաղթանաց, ձայնս հառաչանաց, զտարփումն ըղձանաց:
A ձեռագրի գրիչ Կարապետ Բաղիշեցիի գանձի «Մերգան» ծայրակապր
հասկանալի դարձնելու նպատակով «Զբրխումն» տնասկիզբ բառի Զ-ն
առանձնացրել է բառից և ընդգծված կարմիրով գրել ձախակողմյան լու-
սանցքում: Բառը սկսվելով Բ-ով գանձի ծայրակապին տալիս է նոր իմաստ՝
«Մեր բան»: Մենք, նկատի ունենալով, որ սկզբնաղբյուրները չունեն նման
տարբերակ, հարազատ ենք մնացել բնագրին:

^{1*} Հմտ Մննդ. Գ 14-21:
^{2*} Հմտ Մննդ. Դ 26:
^{3*} Հմտ Մննդ. Ե 25:
^{4*} Հմտ Մննդ. Է:
^{5*} Հմտ Մննդ. ԺԸ 1-15:
^{6*} Հմտ Մննդ. ԻԲ 1-19:
^{7*} Հմտ Մննդ. ԽԱ 40:

- Զտարփումն ըղձանաց, գձայնս հառաչանաց, ըզբանս մաղթանաց:
 Զփափագս մըտաց, զիղձըս տենչանաց, զբաղձանս ի սըրտաց:
 Զաղաւթս հանրաց, փոքունց և մեծաց, քեզ մատուցողաց:
 45 Թագաւոր փառաց, ընկալ ի բազմաց, ըզբանս սըրբասաց:
 Ըզքեզ սիրողաց, և սըբասիրաց, տո՛ւր մաքրիլ կամաց:
 Մեզ՝ մեղաւորաց, և ապաշխարողաց, շնորհեա՛ յոյս կենաց:
 Քաւութիւն մեղաց, տո՛ւր յանցաւորաց, Աստուած ողորմած:
 Ահա կեցո՛յ զմեզ, Տէ՛ր, և արդարացո՛յ ողորմութեամբ Քո,
 50 Աղաչ.:

- Աստուած անքըննին, Հայրըզ անեղ անծին, Որդիտ Միածին:
 Ճըշմարիտ Հոգին, շնորհազարդ բնաւին, խնամող Համայնին:
 Ստեղծաւղ բոլորին, գոյից անեղին, խնամատար նոցին:
 Անձն երեք կամքն մին, որ բնութիւնդ է մին, ի յաստուածութիւն:
 55 Հա՛յր մեղայ յերկինս, ընդ անառակին, գոչեմ լալագին՝:
 Ընդ քանանուհին, փըշըանաց հացին՝, արա՛յ արժանին:
 Ընդ ապահարին, քղանցիւ հանդերձին, լե՛ր բուժիչ ախտին՝:

- 41 B չիք Զբարբառ սաղմոսաց: A տեսողը: C տեսողըս:
 B ունի շարունակութիւն. քաւիչ յանցանաց:
 42 B գաղերս փխ ըզբան: C գբանս: D 42-44 Զձայնս հառաչանաց, զփափագըս
 մըտաց, զաղաւթս հանրաց:
 43 B գեղձս: C տենչանաց փխ մըտաց: C չիք զիղձըս տենչանաց: B զբանս փխ
 զբաղձանս:
 44 E ունի շարունակութիւն.
 Քեզ վերընծայած, տեսողըզ գաղտնեաց, Աստուածըզ բարձանց:
 Խընկաւք բուրւառաց, լուցմամբ կանթեղաց, և մոմեղինաց:
 45 C գբանս:
 46 B և կամ արարաց, քոյիս սուրբ կամաց փխ և սըբասիրաց... կամաց:
 47 C չիք և: B Ապաշխարողաց և մեղաւորաց փխ Մեզ... ապաշխարողաց:
 A 49-50 չիք:
 51 BCD անեղածին փխ անեղ, անծին: B և Որդիտ: CD Որդիդ:
 52 C ճշմարիդ: C խրնամող:
 53 C Լստեղծող: AC ամենին փխ անեղին: B խնամ տար: D չիք գոյից... նոցին:
 54 A կամք: D Անձն երեք Տէր փխ Անձն երեք կամքն: B կամքին, որ բնութիւնդ
 է մին, ի յաստուածութիւն: C աստուածութիւն:
 55 A գոչեմ: B գոչեմք: C գոլ իմ փխ գոչեմ:
 57 B յապարահարին: C ապարահարին: B հանդերձիւ: C հանդերձիւ: D չիք:

- Ընդ այրւոյ որդին, ի քաղաքնային, յարոյ ըզհոգին՝:
 Ընդ քէրց Ղազարին՝ Մարեմ, Մարթային, ձայնեա՛ մեռելին՝:
 60 Ընդ որդւոյ Տիմէին, կոյր Բարտիմոսին, լոյս ծագեա՛յ յանձին՝:
 Ընդ Զաքէոսին՝, և մաքսաւորին, հառաչման սըրտին՝:
 Պոռնիկ աւձողին՝, տասըն բորոտին՝, անդամալուծին՝:
 Ընդ պարտապանին, բիւրոց քանքարին՝, թող զպարտիս անձին՝:
 Ընդ աւազակին, այն Քո խաչակցին, յիշեա՛յ զմեզ յաղին՝:
 65 Յիչ և ևս:
 Զանձ.:

- Նոր երկինք բարձանց, նոր աթոռ փառաց, նոր արփիդ վառած:
 Նոր արև փայլեաց, նոր լուսին ջահեաց, նոր աստղ ծագեաց:
 Նոր եղէմ տընկած, նոր ծառըզ կենաց, նոր պըտուղ շընորհաց:
 70 Ով մայր սըրբութեանց, հասկ հացին կենաց, Սուրբ Պատարագաց:
 Մայր եկեղեցեաց, աւետարանաց, և սուրբ նըշանաց:

- 58 C այրոյ: C արոյ փխ յարոյ: C զհոգին:
 E ունի շարունակութիւն.
 Ընդ յայրոս իշխանին, տալ ի թայղումին, յարոյ զմեռեալ դին:
 59 C քըւեքոց:
 60 A որդոյ: E Տիմեայ բըրտին: C Տիմին: C Բարտիմոսին: C անձին:
 61 B Զալքէոսին:
 62 E բորոտաց տասին: BE և անդամալուծին:
 63 AB բիւրուց: E բիւրուք: B չիք:
 E ունի շարունակութիւն.
 Ընդ լալոյ Պետրոսին, շնորհեայ զթողութիւն, մեղուցեալ անձին:
 67 BD Նոր աթոռ փառաց, նոր երկինք բարձանց փխ Նոր... փառաց: C յաթոռ:
 D արփի:
 68 C յարև: B ջահ լուսնեաց փխ լուսին ջահեաց: B աստղ:
 69 D չիք:
 70 B Նոր փխ Ով: A ∞ հաց հասկին: BC հացիդ:
 71 BE Մայրը: D ∞ և սուրբ նշանաց և Աւետարանաց:

1^o Հմմտ Ղուկ. է 11-17:
 2^o Հովհ. ԺԱ 43
 3^o Մարկ. Ժ 46-52:
 4^o Հմմտ Ղուկ. ԺԹ 1-8:
 5^o Հմմտ Ղուկ. ԺԹ 9-14:
 6^o Հմմտ Ղուկ. է 38:
 7^o Հմմտ Ղուկ. Ժէ 11-19:
 8^o Մատթ. Թ 1-8, Մարկ. Բ 1-12, Ղուկ. Ե 17-26:
 9^o Մատթ. ԺԸ 24:
 10^o Մատթ. Զ 12:
 11^o Ղուկ. ԻԳ 40-43:

1^o Ղուկ. ԺԵ 21:
 2^o Հմմտ Մատթ. ԺԵ 21-28:
 3^o Հմմտ Ղուկ. Ը 44:

ՏԵԱՌՆ ՄԽԻԹԱՐԱՅ ՀՈԳԵԼԻ ԵՒ ԲԱՆԻԲՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ ՎԱՍՆ ԱԻՐՀՆՈՒԹԵԱՆ ՆՈՐԱԿԵՐՏ ԳՐՈՑ

- Սուրբ աւագանաց, և սուրբ սեղանաց, և այլ սրբութեանց:
- Փառք նահապետաց, և նախատեսաց, սուրբ մարգարէաց:
- Տեառն աշակերտաց, Սուրբ Հայրապետաց, և վարդապետաց:
- 75 Սուրբ մարտիրոսաց, և ճրգնաւորաց, խոստովանողաց:
- Կարապետ կենաց, Քեզ յառաջ խայտեաց, և երկրպագեաց¹:
- Վրկայն պարծանաց, պըսակըն փառաց, որ նախ վրկայեաց:
- Որ գերկինս եբաց, զոր Ադամ փակեաց, նախնին ընդ մեղաց:
- Հայր Հասաստանեաց, մեծն ի Պարթևաց, զքեզ կո՛յս դաւանած:
- 80 Աստուածածին բաց, զՄիածնիդ կամաց, զդուռն ողորմութեանց:
- Լո՛ւր ազաչանաց, զըղջացեալ անձանց, ապաշխարողաց:
- Ողորմեա՛:

- 72 C այլ և փխ և այլ:
- 73 C չիք Փառք նահապետաց: B և փխ սուրբ:
- 74 B և Հայրապետաց փխ Սուրբ Հայրապետաց:
- 75 D չիք: E ∞ Սուրբ ճրգնաւորաց, և մարտիրոսաց փխ Սուրբ... ճրգնաւորաց:
- 76 AC խայտաց: A երկրպագեաց:
- 78 D չիք:
- 79 E Հայաստանեայց: D ∞ Մեծն ի պարթևաց, Հայր Հայաստանեաց: ABE դաւանեաց:
- 80 BC Միածնիդ: BE դուռն:
- 81 B ապաշխարողաց, զըղջացեալ անձանց, D մեզ մեղաւորաց և սիրով Հաշտեաց փխ զըղջացեալ... ապաշխարողաց: E ապաշխարողաց, զըղջացեալ կամաց փխ զըղջացեալ... ապաշխարողաց: C յանձանց:
- 82 A չիք: C Ողորմեաց:

¹ Ղուկ. Ա 40-42:

- Մեծապայծառ ցընծութեամբ, ուրախացիր խընդութեամբ,
- Հարսըն մաքուր սրբութեամբ, մայր բազմորդի կուսութեամբ:
- Կաթողիկէ զըւարճութեամբ, ընդ Փեսային միութեամբ:
- 2 Հարդարելով ճոխութեամբ, զքոյդ առագաստ մաքրութեամբ:
- 5 Պարեա՛ որդւովք բազմութեամբ, տաւնեա՛ զտաւն քո շքեղութեամբ:
- Գա Սուրբ Փեսայն Հեզութեամբ, զքեզ պսակէ զըթութեամբ,
- Ե՛լ ընդ առաջ ճոխութեամբ, ուրախացի՛ր ընդ պարգևսն:
- Խընդա՛, խորանըդ լուսոյ, խորհըրդարանդ Աստուծոյ:
- Ընկա՛լ զընծայս խորհըրդոյ, զգիրս աւրինաց Հաւատոյ:
- 10 Այս քեզ շարոց մարգարտոյ, և գումարտակ քում լանջոյ:
- Նոյն մէհեւանդ քում անթոյ, և բազկալար դաստակոյ:
- Սա՛ մատանի քում կընքոյ, և գինդ գեղոյ ականջոյ:

Աղբյուրներ
 A-ձեռ. Հմ. 3540, 295բ, 297աբ:
 B-ձեռ. Հմ. 6529, 3բ-4բ:
 C-ձեռ. Հմ. 4011, 2բ-4ա:

Խորագիր
 A Տե՛ս խորագիրը. չիք հոգելի: BC Նորին Տեառն Մխիթարայ Հոգելի և բանի-բուն վարդապետի ասացեալ վասն աւրհնութեան նոր գրոց:
 Մայրակապ՝ Մխիթար:

Բնագիր
 1 BC ուրախալից:
 4 C չիք:
 5 B որդովք: BC մաքրութեամբ փխ բազմութեամբ:
 9 C խորհըրոց:
 10 BC գըլխո փխ լանջոյ:
 11 C նոյն և:

Սա՛ տարի գաւտոյ քում միջոյ, և շաղք հէրաց քում հիւսոյ,
Ոսկի խնընձոր խաղալոյ, և վարդ ծոցոյդ յարակայ:

- 15 **Իսկ** այս կընդակ Նոր Ուխտի, ներկեալ արեամբն Յիսուսի:
Սա՛ դամ ունկի քում գըլխի, և սարասի ի ճակատի:
Չառքաշ խիլայ վերն յարկի, բէհեզ հաջաղ պարփակի:
Հանդերձ նասիճ հալուղի, եւ պարէգաւտ շուշթարի:
Սա՛ գարդ անձինդ գովելի, բիւրապատիկ խիլայի:
20 Որ աւր[ը]ստաւուր փոփոխի, ըստ խորհրդեան քում տաւնի:
Երկըրպագեա՛ խիլատըւին, որ գայ առ քեզ հեզաբար:

Թազ թագուհւոյ քեզ եղեալ, զգիրս որ հոգուով իւր խաւսեալ:
Պար հարանեաց յաւրինեալ, օրիորդովք ըախացեալ:
Մաքուր կուսաւք միացեալ, նահատակաւք պըսակեալ:
25 Ճըգնաւորաւք դու հրճեալ, հայրապետաւք ճեմս առեալ:
Մարգարէիւք հընչեցեալ, և առաքելովք քարոզեալ:
Հաց ըզմարմինն իւր բաշխեալ, գինի զարիւնն իւր հեղեալ:
Աւրհնեալ Փըրկիչն, որ խաչեալ, որում երգեմք միշտ զայս երգս:

- Արեամբն** իւրով գճեզ դրոշմէ, և մեռոնաւն աւծանէ:
30 Խոցեալ բազկաւն ընդգըրկէ, և ի կողէն զքեզ շինէ:
Որպէս Եվա յԱդամէ, նոյնպէս և դու Յիսուսէ:
Խորհուրդս այս մեծ և խոր է, զոր և Պաւղոս մեզ յայտնէ^{1*}:
Հարսն ի փեսային մարմնէ, ոսկը յոսկրեաց նորայ է:
Չարչարանաց կըցորդ է, փառաց նըմին հաղորդէ:
35 Զսէր փեսային միշտ յիշէ, կանխէ առ նա գիշէրի:

Րախճան լուսոյ վերնային, հարսնարանի Սիոնին:
Արժանաւորք եղիցին, որք զայս կըտակ քեզ բերին:

13 BC քոյդ, հեւսոյ:
15 BC կըտակ փիւ կընդակ:
17 C վերն արկի, հաճաղ:
22 BC հոգովն:

Որք զմեծ ընծայս մատուցին, յարքայութեանդ մեծարին,
Որք այժմ առ քեզ դեզերին, ի հարսանիս քո հըրճւին:
40 Եւս որք ի բանս աշխատին, նոյնք ի մեղաց ազատին:
Տո՛ւր քաւութիւն հայցողին, և անմեղութիւն շարագրին,
Եւ փըրկութիւն փոխագրին, փառաւորեալդ յաւիտեանն:

40 B Եւ փիւ Եւս:
42 BC յաւիտեանս:

* Հմմտ Ա Տիմ. Բ 13:

ՆՈՐԻՆ ՏԷՐ ՄԽԻԹԱՐԱՅ ՎԱՍՆ ՊԱՏԿԵՐԱՅ ՍՐՔՈՑ

Մին Միածին Հաւր Որդի, տիպ տիրական Քուժ ծնողի:
Ճոխ ճառագայթ ճըշմարտի, փառք և փայլումըն շնորհի:
Որ միացար ի մարմնի, ի կուսական յարգանդի:

- 5 Աւձէր զմարմին Քոյ երկրի, աստուածութեամբ անթերի:
Նոյն աւրհնութեամբ աւրհնեսցի, պատկերս այս Քո պանծալի:
Եւ շնորհք Հոգւոյդ իսկակցի, սովաւ ի մեզ միասցի:
Մեղք և յանցանք մեր ջընջի, ցաւք և ցընորք ցըրուեսցի:

Խորհուրդ խորին խոնարհեալ, մարդ մերձաւոր մեզ յայտնեալ:
Ձտիպ տեսակիդ տրամագրեալ, և Աբգարու պարգեւեալ:
10 Նոյն և պատկերս այս պատուեալ, լիցի շնորհիւ Քո լըցեալ:
Աստուածաբար զաւրացեալ, մեզ փրկութիւն փութացեալ:
Որք Հաւատով մերձեցեալ, խընդիրքն ամէն կատարեալ:
Եւ որք յուսով յուսացեալ, յամէն Հարեաց ազատեալ:
Նաև որ զնիւթս ընծայեալ, սովաւ լիցի նա սըրբեալ:

- 15 Իսկ տիրուհի իսկածին, դուստըր Դաւթի արքային,
Որ զսուրբ պատկերըդ Քոյին, աւձէր տիպ տախտակին,

Աղբյուրներ

A-ձեռ. Հմ. 3540, 296աբ, 297բ:
B-ձեռ. Հմ. 6529, 2բ-3բ:
C-ձեռ. Հմ. 4011, 1բ-2ա:

Խորագիր

A տե՛ս խորագիրը: B Պատկերաց: C Տէր Մխիթարայ ասացեալ պատկերաց:
Շայրակապ Մխիթար:

Բնագիր

1 B ծնաւդի:
4 BC աստուածութեամբը:
6 B Հոգոյդ: BC Հակցի: BC Հասցի փխ միասցի:
7 BC քաւի փխ ջընջի: BC փարատի փխ ցրուեսցի:
13 BC դիմեցեալ փխ յուսացեալ:
15 BC յուսածին փխ իսկածին:
16 BC Որ ըզպատկերդ փխ Որ... պատկերըդ: C ի տիպ:

- Շնորհեա՛ և զնոյն աւրհնութիւն, այս պատկերիս սըրբային:
Տո՛ւր զաւրութիւն ծառային, զնշանն յերես դրոշմողին:
Կեցո՛յ զորդիս աղախնին՝, որք ի պատկեր Քո պարծին:
20 Լե՛ր զաւրաւիզն ի մարտին, որք յանու՛ն Քո զինւորին:
Բա՛րձ և զցաւս բորոտին, լոյս տո՛ւր աչաց աչացաւին:

- Թա՛գ թագաւորաց Հայկական, պըսակ պետաց Հոգեկան,
Քահանայից սըրբարան, եւ իշխանաց լէ՛ր վահան:
Ո՛վ Տիրամայր սըրբազան, սրբեա՛ զժողովս Հանրական.
25 Դո՛ւ բարէխաւս բաւական, բա՛ց ըզգըթոյդ գանձարան:
Լի՛ց զմեր կարիս մարմնական, շնորհեա՛ զպարգև Հոգեկան,
Զցաւդ Քո կաթին կուսութեան, մեզ անձրեւեա՛ մայրական,
Զբազուկ Քո սուրբ խաչանման, տո՛ւր զաւրաւիզն աւգնական:

- ԱՀայ ահեղ Միքայէլ, տեսուչ ազգին Իսրայէլ,
30 Գեղարդագէն Գաբրիէլ, մեզ բարեբեր զՄանուէլ:
Աւետաւոր բերկրանաց սըրբոյ Կուսին ի բարձանց:
Նըկարագրեալք յաւրինաց, եւ ի նորոյս պարգեւաց:
Պատկերս այս տիպ ձեր փառաց, դողացուցիչըս դիւաց:
Սա մեզ պարիսպ ի Հարեաց, եւ ազատիչ ի նեղչաց:
35 Անբուն գուշակ գիշերաց, պատգամասաց մաղթանաց:

- Բամեալ ժողովըդ սըրբոց, եւ Համաւրէն ընտրելոց:
Որք այն Աստուծոց, էք մերձաւոր անխըտրոց:
Նըկարագրեալք ի դեղոց, յեկեղեցիս արդարոց:
Այլեւ ի տիպ տախտակոց, կենդանագրեալ նաղաչոց,
40 Դուք սիրելիք էք սըրբոց, քաւիչ մեղաւք մեռելոց:
Լերո՛ւք ցըրւիչ մեր ցաւոց, առողջարարք անդէոց:
Պարարտութիւն մեր պըտղոց, խաղաղարարք խոովելոց:
Արդ, փա՛նք քեզ, Տէ՛րըդ սըրբոց, ի Քո ձեռաց ստեղծաւծոց:

18 BC գիսանն ի փխ զնշանն:
23 BC վիգ փխ լեր:
26 B զպարգևս:
31 BC Աւետաւորք:
36 BC արդարոց փխ ընտրելոց:
39 C տախտակաց:
41 C ցըրւիչք: BC անդամոց փխ անդէոց:
43 B Քոց:

՝ Սաղմ. 26 16:

ՏԱՂ Ի ՏԷՐ ՄԽԻԹԱՐԱՅ

Սուրբ Աստուածածնի Կուսին,
Անարատ Հարսին,
Ցանկալի զըւարթնոց զընդին,
Հրեղինաց դասին:

5 Արեգակնափայլ դիմին,
Պայծառ պատկերին,
Լի և բոլորեալ լուսնին,
Վառվառ աստեղին:

10 Աւղագնաց թըռչուն զարմին,
Սուրբ սիրամարգին,
Աղաւնի ոսկի փետրին,
Մաքուր տատրակին,
Քաջ և վայելուչ արծւին,
Եւ բուն բազային:

15 Ծիծըռնայհընչող լեզւին,
Կարմրոտ կաքաւին:

Աղբյուրներ

A-ձեռ. հմ. 5785, 354ա-5ա:
B- ձեռ. հմ. 425, 304ա-5բ:
C-Վնտ., ձեռ. հմ. 382, 153բ-154ա:

Խորագիր

A Ի Տէր Մխիթարայ: B Տաղ ի Տէր Մխիթարայ: C Տէր Մխիթարայ Արիվանեցոյ
ասացեալ Սուրբ Աստուածածնի:

Բնագիր

I BC Աստուածածին:
11 B փետուրին:
13 A վայելուչ:
15 B Ծիծըռնահընչող:

Փոխ է ջանում՝

Անմեղ, անարատ գառինն,
Անփորձ էրընջին,
Նաշիհ և կընդրուկ ստաշխին,
20 Կինամոն խընկին:

Հաշտութեան պատարագին^{1*},
Փըրկութեան զոհին,
Ճըշմարիտ դաբիրային,
Սուրբ տապանակին:

25 Երկնային մանանային,
Ոսկի սափորին,
Մատամբ ձեւագրեալ բանին,
Քարեայ տախտակին^{2*}:

30 Տեարնակոխ աղիւսակին,
Գոյն շափիւղակին,
Սինեայ անմատոյց լերինն,
Անկէզ մորէնին^{3*}:

Ծաղկեալ նոր գաւազանին,
Որ ի խորանին^{4*},

18 C երընջին:

19 A Նաշի: B Նաշխի, տաշխին:

23 B Ճըշմարիտ:

27 B ձեւագրեալ:

29-32 B 29-32-ը 24 տողից հետո: C 36-ից հետո:

30 A շափիւղային:

31 B Սինայ:

33 BC չոր փխ նոր:

* B Յորդորակ ի Գրիգոր վարդապետէ (կարմիրով):

^{1*} Հմտ. Մննդ. թ 20-22:

^{2*} Հմտ. Ելք ԼԱ 18:

^{3*} Հմտ. Ելք Գ 2-4:

^{4*} Հմտ. Թիվք Ժէ 8:

35 Տուփ քառից անոյշ խընկին,
Ոսկի բուրլառին:

Գեղմանըն ցաւոյով լըցեալ,
Առ Գեղէնին¹,

40 Առիթ յաղթութեան եղեալ,
Ջահն ի սափորին:

Ջըրհոր կընքեալ աղբիւրին,
Փակեալ պարտիզին,
Բըլուր մաքուր կընդըրկին,
Հովիտ շուշանին:

45 Անարատ մաքուր հարսին,
Անմահ փեսային,
Կարմիր և սպիտակ այտին,
Որ յերգսըն պատմին²:

50 Ջայն, որ ոչ բառնայր երկին,
Բարձաւղ ի գըրկին,
Եւ աւրհնէր ըզՀայրն անծին,
զՈրդին Միածին:

զՀոգին ճըշմարիտ,
Յաւէտ փառակից նոցին,
55 Բարեբանեցուք և մեք,
Ընդ Աստուածածնին:

35 B անոյշ քառից փխ քառից անոյշ: C խնկոց:
38 A Գեղէնին:
45 B Ջայն փխ Ջայն:
50 B Բարձեալ:
51 B աւրհնեալ էր: AB ըզՀայր:

¹ Հմմտ Դատ. 2 38:
² Երգ 6 10:

Ի ՏԷՐ ՄԽԻԹԱՐԱՅ ԱՅՐԻՎԱՆԵՑԻՈՑ

Աստուած յերկնից խոնարհեալ,
Բանդ ի յերկիր վայր իջեալ:
Պառն ի գրրկի մատ գըզեալ,
Պասք հրեշտակաց հիացեալ:

5 Երկիր արքայի փրկեալ,
ՉԱդամ գարմաւք ազատեալ:
Էդ եղական մարդ եղեալ,
Ընդ մեզ Աստուած բնակեալ:

Թող մեզ ըզմեղս բազմացեալ,
10 Ժողովրդեանս Քոյ փըրկեալ:
Ի յանցանաց զմեզ սրբեալ,
Լուսով զխաւար մեր մերժեալ:

Աղբյուրներ
B-Վնտ., ձեռ. Հմ. 275:

Խորագիր
B Տաղ ի վերայ Այբուբենին ի Մխիթար վարդապետէ:
Մայրակապ Ա.-Բ.:

Բնագիր
2 B բարձանց փխ յերկիր:
B ունի շարունակութիւն.
Փիար ի փսար ջանիփաք
Յիսէ ի փսար ի խուղայ:

3 B մօր:
4 B հրեղինաց:
B ունի շարունակութիւն.
Աթայ օղուլ ջան առի, յիսէ աւղլան ի թանդրի:

6 B ազատել:
B ունի շարունակութիւն. Փի.:

8 B ունի շարունակութիւն. Աթ.:
10 B ունի շարունակութիւն. Փի.:
12 B մերժեա, ունի շարունակութիւն. Աթ.:

15 **Խնայեա՛ ի մեզ, Տէ՛ր խաչեալ,
Ծածկեա՛ զյանցանս մեր գործեալ,
Կեցո՛՛ զճառայս Քո գերեալ,
Հան՛ ի բանտէս խաւարեալ:**

20 **Զայնեա՛ առ քեզ քաղցրացեալ,
Ղեկաւք հոգւոյդ թևարկեալ,
Ճար[տ]ար բըծիշկ ի բուժեալ,
Մատիտ առ մեզ ի մաքրեալ:**

**Յարո՛՛ զրկեալս և զմեղկեալս,
Նոր նորոգեա՛ զընացեալս:
Շինեա՛ ձեռաւք զայս քակեալս,
Ուղղեա՛ շնորհաւք զմոլորեալս:**

25 **Զարչարանաւք Քոյ խաչեալ,
Պահեա՛ ըզմեզ ամբացեալ:
Զանա՛ առ Քեզ զմեզ ձգեալ,
Ռահիւ յերկինքս հանեալ:**

30 **Սըրբեա՛ զժողովս Քև փրկեալ,
Վահեղ արեամբդ կերակրեալ,
Տո՛ւր զաւրութիւնք և յաղթեալ,
Րամից դիւաց դառնացեալ:**

14 B շար. փի:
15 B փրկեալ փխ գերեալ:
16 B Աթ.:
18 B հոգոյնդ, ունի շարունակութիւն. Փի.:
19 B բուժել:
20 B Մատիր, մաքրել, ունի շարունակութիւն. Աթ.:
21 B զանկեալս և զմեղեալս:
22 B զհընացեալ փխ զընացեալս, ունի շարունակութիւն. Փի.:
24 B ունի շարունակութիւն. Աթ.:
26 B ունի շարունակութիւն. Փի.:
28 B ունի շարունակութիւն. Աթ.:
29 B զմեզ փխ զժողովս:
30 B գընեալ փխ կերակրեալ, ունի շարունակութիւն. Փի.:
32 B չարացեալ, ունի շարունակութիւն. Աթ.:

35 **Յաւդեա՛ ըզցաւղըս Քո բարձեալ,
Իսեա՛ ըզմեզ Քև յաւդեալ,
Փառք Քեզ, Բրիստո՛ս խոնարհեալ,
Քեզ աւրհնութիւն, Տէ՛ր բարձեալ:**

33 B ըզցող, բարձրեալ:
34 B ունի շարունակութիւն. Փի.:
36 B ունի շարունակութիւն. Աթ.:

ՏԱՂ ԳԵՂԵՑԻԿ ԵՒ ԱՆՈՅՇ

Աստուածածին մայր լուսոյ,
Տաճար Բանին Աստուծոյ,
զԱստուած ընդ մեզ հաշտեցո՛յ,
Աստուածածին՝, մայր լուսոյ:

- 5 Բարձաւոյ եղեր անեղին
Եւ բնակարան անմահին,
Ծընար զՈրդին Միածին,
Աստուածածին՝, մայր Բանին:

- 10 Գովեմք ըզքեզ, Մարիամ,
Պաղատանաւք առ քեզ գամ,
Առ ոտս անկեալ Քո և լամ,
Աստուածածին՝ Մարիամ:

Աղբյուրներ

A-ձեռ. Հմ. 5785, 356բ-7ա:

B-ձեռ. Հմ. 425, 301աբ:

C-Վնտ., ձեռ. Հմ. 382, 2բ-3ա:

Խորագիր

A Տե՛ս վերևում:

B Յորդորակ, տաղ ազնիւ: C Տաղ գեղեցիկ Սուրբ Աստուածածնի:

Ծայրակապ՝ Ա-Ի:

Բնագիր

4 C յԱստուածածին:

5 BC անմահին փխ անեղին:

6 BC Հաւր բանին փխ անմահին:

9 B Գովեմ:

10 A Պաղատանօք:

11 AC անգեալ:

Դո՛ւ քերովբէ հողեղէն

Եւ սերովբէ մարմնեղէն,

- 15 Սուրբ և անբիծ, քան զհրեղէն,
Ծընաւոյ Բանին լուսեղէն:

Երկին յերկրի յայտնեցար,

Տաճար լուսոյ կազմեցար,

Յաթոռ փառաց բազմեցար,

- 20 ԶԱստուած ծընար մեզ համար:

Զըլարթնոց երկնից խընդութիւն,

Հոգեղինաց ցընծութիւն,

Հողեղինաց փըրկութիւն,

Մեզ փութացիր յաւզնութիւն:

- 25 Է՛ն Աստուած ի Քէն ծընաւ,
Միջնորդ կենաց մեզ տըլաւ,
Աստուած և մարդ յայտնեցաւ,
Մեզ փըրկութիւն շնորհեցաւ:

Ընդ մեզ հաշտեա՛յ, սըրբուհի՛,

- 30 Գըթա՛յ ի մեզ, տիրուհի՛,
Փըրկեա՛յ ըզմեզ, թագուհի՛,
Աստուածածին՝ փըրկուհի:

13 A քերոբէ:

14 A սերոբէ:

16 C Աստուածածին:

17 B Երկինք երկնից:

20 B Աստուածածին մայր լուսոյ:

21 C ցնծութիւն փխ խընդութիւն:

22 C խընդութիւն փխ ցընծութիւն:

24 BC Աստուածածին մայր լուսոյ:

28 C Աստուածածին: B Աստուածածին մայր լուսոյ:

32 B չիք:

Թագաւորին դո՛ւ վըրան,
Երկնաւորին դո՛ւ խորան,
35 Հոգոյն Արրբոյ աւթեան,
Անճառ Բանին բնակարան:

Ժողովեալքս ի Քէն Հայցեմք,
Արտասելով աղաչեմք,
Մայր Աստուծոյ դաւանէմք,
40 Աստուածածին քարոզեմք:

Ի Քէն Հայցեմք, մա՛յր կենաց,
Սըրբել ըզմեզ ի մեղաց,
Փըրկել ի չար փորձանաց,
Պահել անփորձ ի դիւաց:

33 C խորան փխ վըրան:

34 B ես փխ դու: C բնակարան փխ խորան:

35 B աւթարան: C օթեման: 36 B չիք:

38 C Արտասուելով:

39 C Մայրդ:

40 B չիք:

41-44 C այլ ձեռքով հետազայի:

44 B Յուրաքանչյուր տան 4-րդ տողը կա՛մ կրկնվում է՝ «Աստուածածին մորդ լուսոյ», կա՛մ չիք:

ԱՅՐԻՎԱՆԵՑՈՒ ՏԱՂԱՐԱՆԻ ՉԱՓԱԾՈ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

ՉԼԵ (1286). Ի յախտածէտ ըստեանց ճընչեալ,

Սպիտակ գինիս այս նոր յայտնեալ,

Տէր Մխիթար ի հոգս անկեալ,

Պըտուղ պտուղ զայս հաւաքեալ:

Յաստուածաշունչ գըրոց առեալ

Եւ ի բանից սըրբոց քաղեալ,

Քան զգումարտակ ի մին շարեալ

Եւ եկեղեցւոյ կուլըն կախեալ:

Արդ, դուք որդիք մաւրս այս ընտրեալ,

Որք յետ մեր գայք յարկս յայս սըրբեալ,

Զմեզ յիշեցէք ի յաղաւթել,

Գրելով զայս բանքս ի սըրբագրել:

Ձեռ. Հմ. 6529, 4բ:

Խորագիր

ԻԱ գանձ կա Տէր Մխիթարայ Այրիվանեցոյն ի գիրքս և այս Բ երգս նորկերտ գրոց և պատկերաց սրբոց:

ՄԻՆԻՍՏՐ ԱՅԻՆՎԱԼՆԵՅՈՒ ԳԱՆՁԵՐԻ ԾԱՅՐԱԿԱՊԱՅԻՆ ՇՂԹԱՆ

Ծայրակապեր	Ծայրակապեր	Սկզբնատողեր	Չնուդրվիր
Լուս Մխիթար Այրիվանեցու Գանձարանի՝ Այրիվանեցու Գանձարանի՝	Լուս արուհիված գանձերի՝	ա. Լուս Մխիթար Այրիվանեցու Գանձարանի Բ. Լուս Գրիգոր Սյաթեցու և մյուսների՝	Համարները և էջերը
1	2	3	4
1. Տէր Մխիթարա	ա) (Տէր՝ Մխիթար) թարա	ա) (Տարվումն ըրձական...) բ) թարա պարճանաց...	N 4011, 7ա-8ա N 4011, 10ա-11բ N 424, 223բ-224ա N 424, 30ա-31ա N 4844, 28բ-29ա N 4844, 29բ-31ա N 5328, 229բ-230բ N 5328, 90բ-91բ N 4844, 56բ-58ա N 4844, 58ա-59բ N 5328, 64ա-65ա N 5328, 242բ-243բ N 4844, 67ա-68բ N 4844, 68բ-69բ N 4011, 131ա-131բ N 4011, 131բ-133բ
2. Վարդայայետի	ա) Վարդայ	ա) Վեր երգեմք Հնչմամբ...	
3. Բայիւ երգել	բ) Պետի	ա) Պետրոս պանծալի...	
4. Հիւզոտասան	ա) Բայիւ	ա) Բարձնալ աշափր...	
5. Բան քարոզից	բ) Երգել	բ) Երջանիկ գնդին...	
6. Այրիվանեցի	ա) Հգա	ա) Համագոյական...	
7. Երևանեցին	բ) Տասն ⁴	բ) Տէր տնտեսական...	
8. Հայցէ սիրով	ա) Բան քա	ա) Բարձրեալ անքնին...	
	բ) Բողից	բ) Բարունիք բարիք...	
	ա) Այրիվա	ա) Աստուած կենդանի...	
	բ) Նեցի	բ) Նեստոր Նարանի...	
	ա) Երև	ա) Երգս յաւերջական...	
	բ) Անեցին	բ) Աստուածն ամենի...	
	ա) [Հայ]ցէտ ⁶	ա) (Համագոյական...) բ) Ի տաւնքս տուներց...	

¹ Տն և է, Հարությունյան, Մխիթար Այրիվանեցու «Պատմա-բանասիրական Հանգես», 1975, հ. 3, էջ 108-109):

² Գանձը թղթ է, բերթ ընկած լինելու պատճառով:

³ «Ա» ծայրակապային տառը վերջավոր արդյունք է: Գրիքը «Տէրն երանելիք» փոխարեն ընդօրինակել է «Սուրբն երանելի»:

⁴ Ծայրակապի երկու մասերն աղավաղված են սխալ տեսանկյունից: Ձև. հ.ճ. 4844-ում ունի «Հիւզէ» (թ. 31բ-32բ) և «տասան»

(թ. 32բ-33ա) ծայրակապային լատեր:

⁵ Ձև գանձը հ.ճ. 4844 ձևագրում որսված է «Այրիվ» (թ. 64ա-65ա), «Անեցի» (սկզբ. «Արտա անիծեալ», բերթ 65ա-66բ) մասեր:

⁶ Ձևագրից բերթ ընկած լինելու պատճառով պահպանված են «Հայ» ծայրակապը առաջացող տեղը: «Տ» ծայրակապային տառը փրկավոր Հեռանք է, «սերց» բառի փոխարեն ընդօրինակված է «սերց»: Հ.ճ. 4844 ձևագրում գանձի երկու մասերն ունեն «Հայցէ»

փրկավոր Հեռանք է, «սերց» բառի փոխարեն ընդօրինակված է «սերց»: Հ.ճ. 4844 ձևագրում գանձի երկու մասերն ունեն «Հայցէ» (90ա-91ա), «իրով» (91բ-92բ) ծայրակապերը:

1	2	3	4
9. Զպակատրոք	ա) Զպակատ	ա) Զաւեղ գանձնին...	N 4011, 146ա-148բ N 4011, 149բ-151բ N 4011, 170բ-173բ N 4011, 174բ-176բ N 424, 170ա-171բ N 424, 171բ-172բ N 4011, 233բ-234բ
10. Տերունական	բ) Որդք	բ) Որք որ փափաղին...	
11. Վկայականաց	ա) Տերուն	ա) Տէր տեղունական...	
12. Տանից ասի	բ) Ական	բ) Արդ լուսաւորեա...	
13. Խորհրդոցն	ա) Վկայ ⁸	ա) Վայելչականաց...	
14. Ի փառ Տեան	բ) Կանաց	բ) Կայ խորհուրդ խորին...	
15. Վէչտասանք է	Տ[ոն]ց ⁹	Տաճարդ երկնային...	
16. ձգնաւորք	ա) Ի փայլս ¹⁰	ա) Ի սկզբան էիդ...	
17. Մերգան	բ) Տեաջն	բ) Տինա առանկ...	
18. Սարդիս գրիչ	ա) Վէչտա	ա) Վայել է քոյին...	
19. Կիրակէ	բ) Սանք է	բ) Սոքայ են ընտրեալ...	
20. Տէր Մխիթար Վ	ա) Սարդ	ա) Սուրբ Երրորդութիւն...	N 4011, 287ա-290ա N 4011, 290բ-292բ N 4844, 35ա-36ա N 4844, 36ա-37բ
21. Տէր Մխիթարա	բ) Իպ գրիչ	բ) Ի սպարապետին...	N 4844, 222ա-223ա N 4844, 316ա-317ա

⁷ Հ.ճ. 424 ձևագրում գանձի առաջին մասը հղյուս է «Զպակատք» բառը (114ա-115բ): Վերջին «ք» ծայրակապային տառը սխալ տեսանկյունի արդյունք է:

⁸ «Ո» ծայրակապային տառը «Արև» բառի փոխարեն սխալմամբ «Որևն» ընդօրինակելու Հեռանք է:

⁹ Ձևագրից պահպանված են գանձի առաջին մասի «սերց» տեղերը և երկրորդ մասը: Հ.ճ. 4844 ձևագրում այն ունի «Տասայք» (149ա-150ա) և «Նկարանել» (160ա-161բ) ծայրակապերը, առաջացած սխալ տեսանկյունից:

¹⁰ «Տեաջն» բառի փոխարեն ընդօրինակված է «Պետի», որտեղից էլ առաջացել է «Պ» ծայրակապային տառը:

¹¹ «Ջ» ծայրակապային տառը առաջացել է «Ռաչք» բառի փոխարեն «Ջաչք» ընդօրինակելու Հեռանքով:

¹² «Պ» ծայրակապային տառը առաջ է եկել «Սուրբ» բառի փոխարեն «Պաւրոս» ընդօրինակելու Հեռանքով:

ՅԱՆԿ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ
Ա. Մաշտոցի անվան Մատենադարան

NN	Բովանդակություն	Ժամանակ	Վայր	Գրիչ
1	2	3	4	5
423	Գանձարան	1742	Կեսարիա	Աստուածատուր Երէջ
425	-----	1466	Արծկէ	Ատոմ քաշանա
3540	-----	1286, 1408	Յիպնայ (Բ)	Յովհաննէս (Բ)
4011	-----	ԺԵ դար	անհայտ	Գրիգոր (Խլաթեցի ²)
4068	-----	ԺԴ դար	-----	-----
4844	-----	ԺԵ դար	-----	-----
5785	-----	1483	Գոմաց վանք, Բաղէշ	Կարապետ Բաղիշեցի
6529	մասն Գանձարանի	ԺԵ դար	-----	-----
7785	Գանձարան	ԺԴ դար	Ղրիմ (Սուրխա ² թ)	Յովհաննէս

Բ. Արտասահմանյան Հավաքածուներ

1	2	3	4	5
79 (Փարիզ)	Գանձարան, Տաղարան	ԺԴ (Ա) 1241 (Բ)	Դրազարկ (Բ)	Յովհաննէս (Բ)
80 (Փարիզ)	Գանձարան	1380	Կաֆա	Մարկոս
231 (Երուսաղեմ)	Գանձարան, Տաղարան	1404-1411	Երուսաղէմ	Յակոբ, Լևոն
275 (Վենետիկ)	-----	ԺԵ-ԺԶ դդ.	ի Յովս, ի դրանն Սուրբ Երրորդութեանն և նորակեռնք Սուրբ Աստուածածնին	-----
382 (Վենետիկ)	Գանձարան	1394	Լիմ, Ս. Գևորգ	Մանուէլ
607 (Վենետիկ)	-----	1425	Քաջբերունք, Ս. Գևորգ	Գորգի
1210 (Վենետիկ)	-----	1485	Արճէշ, Ս. Գևորգ	Յովանէս Երէջ Մանգասարենց
1335 (Վենետիկ)	-----	1371	-----	-----
1672 (Վենետիկ)	-----	1396	-----	Յակոբ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

ԳԱՆՁ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՑԻՆ (էջ 67)

Հրատարակվում է առաջին անգամ:
Հայտնի է նաև այլ ձեռագրերից (Բրիտ. թանգ., ձեռ. հմ. 2608(54), 1411թ., գանձ հմ. 12¹ և հմ. 13):

Ինչպես այս, այնպես էլ մի շարք այլ ձեռագրերում հիշյալ գանձը ըստ ծայրահասակի կիսված է երկու՝ «Տէր Մխի» և «Թարա» մասերի:

Երկրորդ մասը սովորաբար հաջորդում է նախորդին և գտնվում է «Առաջին առուրն ծնընդեան Տեառն» կանոնի սկզբում:

2

ՔԱՐՈՉ ՊԵՏՐՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՒ ԱԲԻՍՈՂՈՄԱՅ ՍԱՐԿԱԿԱԳԻՆ (էջ 76)

Հրատարակվում է առաջին անգամ:

3

ՔԱՐՈՉ ԱՆՏՈՆԻ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԻ ԵՒ ԱՅԼ ՃԳՆԱԻՈՐԱՅ (էջ 83)

Հրատարակվում է առաջին անգամ:

Հայտնի է նաև այլ ձեռագրերից (Բրիտ. թանգ., գանձ հմ. 22 և Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի Մատենադարանի հմ. 231 ձեռագիր՝ 1404-1411թթ., 303բ²):

4

ՔԱՐՈՉ ԹԱԳԱԻՈՐԱՅ ՍՐԲՈՅ (էջ 91)

Հրատարակվում է առաջին անգամ:

Հայտնի է նաև այլ ձեռագրերից (Բրիտ. թանգ., գանձ հմ. 23):

¹ Տե՛ս F. Conybere, A catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, London, 1931 (Այսուհետև՝ Բրիտ. թանգ. և վկայակոչվող գանձերի ու տաղերի համարները՝ ըստ այս ձեռագրի գանձերի նկարագրության թվահամարների):

² Տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբյանց, Հտ. Ա, կազմեց Նորայր արքեպս. Պողարյան, Երուսաղեմ, 1966 (այսուհետև՝ Երուս., ձեռ. հմ. 231):

ՔԱՐՈՉ ՀԱՄԱՒԻՔԷՆ ՀԱՅՐԱՊԵՏԱՑ ՍՐԲՈՑ (էջ 100)

Հրատարակվում է առաջին անգամ:

Հայտնի է նաև այլ ձեռագրերից (Բրիտ. թանգ., գանձ հմ. 24, Երուս., ձեռ. հմ. 231, 294բ):

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑՆ ՍԱՀԱԿԱՑ ԵՒ ՄԵՍՐՈՊԱՅ (էջ 110)

Մի հատված հրատարակված է.

«Գանձարան հայ հին բանաստեղծության», աշխատասիրությամբ Պ. Խաչատրյանի, Երևան, 2000, էջ 400-401:

Հանդիպում է և այլ ձեռագրերում (Բրիտ. թանգ., գանձ հմ. 32):

ՔԱՐՈՉ Գ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎՈՅՆ (էջ 119)

Հրատարակվում է առաջին անգամ:

Հայտնի է նաև այլ ձեռագրերից (Բրիտ. թանգ., գանձ հմ. 34, Երուս., ձեռ. հմ. 231, 287ա):

Գանձը նոր շրջանի Գանձարաններում կիսված է երկու մասի: Երկրորդ մասը խորագրված է «Եփեսոսի Սուրբ Ժողովին»:

ՔԱՐՈՉ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆ ԴԱՆԻՆ ԵՒ ԱՂՈՒՀԱՑԻՑ ԿԻՐԱԿԷԻՑՆ (էջ 127)

Հրատարակվում է առաջին անգամ:

Հանդիպում է և այլ ձեռագրերում (Բրիտ. թանգ., գանձ հմ. 35, Երուս., ձեռ. հմ. 231, 33բ):

ՔԱՐՈՉ ՄԵԾԻ ԱՒՈՒՐ ԳԱԼՍՏԵԱՆ ՏԵԱՐՆ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ (էջ 135)

Հրատարակվում է առաջին անգամ:

Հանդիպում է և այլ ձեռագրերում (Բրիտ. թանգ., հմ. 43 և հմ. 44, Երուս., ձեռ. հմ. 231, 68բ):

Թե՛ Բրիտանական թանգարանի և թե՛ մի շարք այլ ձեռագրերում այս գանձը կիսված է, և երկրորդ մասը առաջինին հաջորդում է նրանից անմիջապես հետո եկող «Ծառագարդարի կիրակըմտին» կանոնի ներքո:

ՔԱՐՈՉ ՄԵԾԻ ՀԻՆԳՇԱԲԱԹՈՉ ԱՒՈՒՐՆ (էջ 144)

Հրատարակվում է առաջին անգամ:

Հանդիպում է նաև այլ ձեռագրերում (Բրիտ. թանգ., գանձ հմ. 48 և հմ. 49):

«Որք փափազին ուտել» սկսվածքով երկրորդ մասը թե՛ այս և թե՛ մի շարք այլ Գանձարաններում կիսված է և զետեղված դարձյալ Ավագ Հինգշաբթիի կանոնին նվիրված գանձի սկզբում:

ՔԱՐՈՉ ՄԵԾԻ ԱՒՈՒՐ ՇԱԲԱԹՈՒՆ, ԹԱՂՄԱՆ ԵՒ ՏԵԱՌՆ ՃՐԱԳԱԼՈՒՑԻ ԶԱՏԿԻՆ (էջ 152)

Հրատարակվում է առաջին անգամ:

Հայտնի է նաև այլ ձեռագրերից (Բրիտ. թանգ., գանձ հմ. 54 և հմ. 55):

Թե՛ այս և թե՛ մի շարք այլ ձեռագրերում այս գանձի «Արդ լուսաւորեա, արդ փառաւորեա» սկսվածքով երկրորդ մասը գտնվում է առաջին մասին հաջորդող Հարության երրորդ օրվա խորհրդին նվիրված կանոնի սկզբում:

ՔԱՐՈՉ ՍՐԲՈՑ ՀՈՒՓՍԻՄԵԱՆՑ (էջ 162)

Հրատարակվում է առաջին անգամ:

Հայտնի է նաև այլ ձեռագրերից (Բրիտ. թանգ., գանձ հմ. 71):

ՈՐԴՈՑ ԵՒ ԹՈՌԱՆՑ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ (էջ 170)

Հրատարակվում է առաջին անգամ:

Հայտնի է նաև այլ ձեռագրերից (Բրիտ. թանգ., գանձ հմ. 73 և հմ. 74):

Թե՛ Բրիտանական թանգարանի և թե՛ մի շարք այլ ձեռագրերում այս գանձի առաջին մասը վերնագրված է «Շողակաթի» և երկրորդ՝ «Նոր թագ պետական» սկսվածքով մասը արդեն բերվում է առաջինին հաջորդող «Որդոց և թոռանց Լուսաւորչի» կանոնի ներքո:

Բնագրում բերվող B ձեռագրում «Ե» և նրա շարունակութունը կազմող նորաստեղծ այս ակրոստիքոսային տառերով սկսվող տները ընդօրինակված են «Կաթողիկէ եկեղեցւոյ» խորագրով գանձում (թ. 311բ-12ա): Վերջին երկու տներն առաջացել են «Թարգմանչաց» գանձի «Ց» ակրոստիքոսի մաս կազմող տնից՝ նոր հավելումներով:

B ձեռագրի «Լ» ակրոստիքոսային տառով սկսվող տունը ընդօրինակված է «Որդոց և թոռանց Լուսաւորչի» խորագրով գանձում (թ. 325բ-6ա):

ՔԱՐՈՉ ՀԱՄԱԻՐԷՆ ՄԱՐԳԱՐԷԻՑԸ (էջ 178)

Հրատարակվում է առաջին անգամ:
Հայտնի է նաև այլ ձեռագրերից (Բրիտ. թանգ., գանձ հմ. 75, Երուս., ձեռ. հմ. 231, 272բ):

ՔԱՐՈՉ ՀԱՄԱԻՐԷՆ ՄԱՐՏԻՐՈՍԱՅ ԵՒ ԿՈՒՍԱՆԱՅ (էջ 185)

Հրատարակվում է առաջին անգամ:
Հայտնի է նաև այլ ձեռագրերից (Բրիտ. թանգ., գանձ հմ. 86 և հմ. 87, Երուս., ձեռ. հմ. 231, 186բ):

Բրիտանական թանգարանի և մի շարք այլ ձեռագրերում գանձը կիսված է երկու մասի, և «Տինա առաւել» սկզբնատողով սկսվող երկրորդ մասը գտնվում է առաջինին հաջորդող «Նորին վասն մարտիրոսաց» կանոնի սկզբում:

ՔԱՐՈՉ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ՊԱՒՂՈՍԻ, ԱՌԱՔԵԼՈՑՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՐՈՅ (էջ 195)

Հրատարակվում է առաջին անգամ:
Հայտնի է նաև այլ ձեռագրերից (Բրիտ. թանգ., գանձ հմ. 8):

ՔԱՐՈՉ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ (էջ 203)

Հրատարակվում է առաջին անգամ:

ԿԱՆՈՆ ԺԳՆԱԻՈՐԱՑՆ (էջ 210)

Հրատարակվում է առաջին անգամ:
Հանդիպում է նաև այլ ձեռագրերում (Երուս., ձեռ. հմ. 231, 308ա):

ԳԱՆՁ ՆՈՐԱԿԵՐՏ ԳՐՈՑ ԱԻՐՂԵԼՈՑ Է (էջ 216)

Հրատարակվում է առաջին անգամ:

ԳԱՆՁ ԵՐՐՈՐԴ ԱՒՈՒՐՆ ԳԱԼՍՏԵԱՆ ՀՈԳԻՈՅ ԵՒ ԱԻՐՂԵՆՈՒԹԻՒՆ ԶԻԹՈՅ (էջ 221)

Հրատարակվում է առաջին անգամ:

ԳԱՆՁ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՀՈՑ (էջ 225)

Հրատարակվում է առաջին անգամ:

Ա ձեռագրի գրիչ Կարապետ Բաղիչեցին գանձի «Մերգան» ծայրակայը հասկանալի դարձնելու նպատակով «Զբրխումն» տնասկիզբ բառի Զ-ն առանձնացրել է բառից և ընդգծված կարմիրով գրել ձախակողմյան լուսանցքում: Բառը սկսվելով Բ-ով՝ գանձի ծայրակային տալիս է նոր իմաստ՝ «Մեր բան»: Մենք, նկատի ունենալով, որ սկզբնաղբյուրները չունեն նման տարբերակ, հարազատ ենք մնացել բնագրին, մանավանդ որ հաջորդող մի քանի տողերը ևս սկսվում են Զ-ով: Քանի որ Այրիվանեցու գանձերը սովորաբար ունեն 10-12 տող, իսկ հիշյալ «Զբրխումն» սկսվածքով տանը նախորդող և «Բաբուն փայլեցեր» բառերով սկսվող տունը ունի 17 տող, կարելի է ենթադրել, որ այս ծավալուն տունը կազմվել է երկու կամ երեք տների կրճատումից և իրար միաձուլումից:

Այս գանձը հանդիպում է միայն Խլաթեցու խմբագրության Գանձարաններում:

ՏԵԱՌԵ ՄԽԻԹԱՐԱՑ ՀՈԳԵԼԻ ԵՒ ԲԱՆԻԲՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ

ՎԱՍՆ ԱԻՐՂԵՆՈՒԹԵԱՆ ՆՈՐԱԿԵՐՏ ԳՐՈՑ (էջ 231)

Հրատարակված է.

Գարեգին Հովսեփյան, Մխիթար Այրիվանեցի, Նորագիւտ արձանագրութիւն և երկեր, Երուսաղէմ, 1931, էջ 8:

Գանձարան հայ հին բանաստեղծության, հատվածաբար՝ էջ 399-400:

Հայտնի է նաև այլ ձեռագրերից (Բրիտ. թանգ., 265աբ):

ՆՈՐԻՆ ՏԷՐ ՄԽԻԹԱՐԱՑ ՎԱՍՆ ՊԱՏԿԵՐԱՑ ՄՐԲՈՑ (էջ 234)

Հրատարակված է.

Գարեգին արքեպս. Հովսեփյան, Մխիթար Այրիվանեցի, էջ 7:

Հայտնի է նաև այլ ձեռագրերից (Բրիտ. թանգ., գանձ հմ. 119):

ՏԱՂ Ի ՏԷՐ ՄԽԻԹԱՐԱՑ (էջ 236)

Հրատարակված է.

«Սիրոն», 1932, Ե, էջ 141-142:

Ի ՏԷՐ ՄԽԻԹԱՐԱՅ ԱՅՐԻՎԱՆԵՑԻՈՅ (էջ 239)

Հրատարակվում է առաջին անգամ:

Հայտնի է նաև այլ ձեռագրերից (Երուս., ձեռ. հմ. 231, 99բ):

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՄԱՅՐ ԼՈՒՍՈՅ (էջ 242)

Հրատարակվում է առաջին անգամ:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության խոսքը	5
ԵՐԿՈՒ ԽՈՍՔ (Ս. Արևշատյան).....	7
ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ (Լ. և Վ. Մկրտչյաններ)	8
ՆԱԽԱԲԱՆ (Վ. Դևրիկյան).....	9
ՄԽԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑՈՒ ԲԱՆՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ (Է. Հարությունյան).....	16
 Բ Ն Ա Գ Ր Ե Ր	
ԳԱՆՁԵՐ.....	67
ՏԱՂԵՐ.....	231
ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ	246
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	249

ՄԽԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑԻ

ԳԱՆՁԵՐ ԵՎ ՏԱՂԵՐ

Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճանճապանյան
Սրբագրիչ՝ Վ. Վ. Եղիշյան
Համակարգչային էջադրումը՝ Օ. Ղ. Թերզյանի

Պատվեր՝ 54: Տպաքանակ՝ 1000:

Գինը՝ պայմանագրային:

«Նաիրի» Հրատարակչություն» ՓԲԸ
Երևան-9, Տերյան 91